ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

(Հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆ - 2010

9Հ9:52(479.25) Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 55503

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ
(Հոդվածների ժողովածու)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
55

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
55

ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Մ

Հրատարակության է հանձնարարվել Արամ Մանուկյանի
ծննդյան 130-ամյակի նշումը նախապատրաստող
հոբելյանական հանձնաժողովի կողմից

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա. Ա. Մելքոնյան, պ. գ. դ. Է. Գ. Մինասյան, պ. գ. դ. Ա. Ս. Վիրաբյան, պ. գ. թ. Կ. Հ. Խաչատրյան, պ. գ. թ. Ա. Վ. Մաղալյան, Հ. Կ. Սուքիասյան:

Խմբագրությամբ՝ Կ. Հ. Խաչատրյանի
Ա. Վ. Մաղալյանի
Հ. Կ. Սուքիասյանի

Մ Արամ Մանուկյան. ազգային և պետական գործիչը (հոդվածների ժողովածու), – Եր.: Պատմ. ինստ., 2010.– 120 էջ:

Ժողովածուում ընդգրկված են անվանի ազգային և պետական գործիչ Արամ Մանուկյանի ծննդյան 130-ամյակին նվիրված 2009թ. սեպտեմբերի 22-ի գիտաժողովում ներկայացված զեկուցումները:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և Հայաստանի ազգային արխիվը:

ISBN 978-99941-73-33-6

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010



ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

(1879 – 1919)

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ
ԵՊՀ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարը տվել է հայոց ազատամարտի այնպիսի նվիրյալներ, որոնք հայ ժողովրդի գոյամարտի օրհասական պահերին ցուցաբերել են ազգային-քաղաքական ու պետական գործիչներին բնորոշ աներևակայելի կազմակերպչական տաղանդ, նախաձեռնողականություն, երկաթյա կամք ու վճռականություն, բացառիկ հետևողականություն և շրջահայացություն: Նման ազգային ու պետական մտածողության տեր գործիչներից էր Արամ Մանուկյանը: Նրա պետական գործունեության ուսումնասիրությունը արդիական է նաև մեր օրերի համար, երբ կայանում է Հայաստանի երրորդ Հանրապետությունը: Արամ Մանուկյանի գործունեության փորձի ուսումնասիրությունը պետք է ոչ միայն հայոց անկախ պետականության ամրապնդման համար ձեռնարկվող միջոցառումները ճիշտ պատկերացնելու համար, այլև այսօր հայ-թուրքական բանակցությունների, քննարկումների ընթացքն ու հեռանկարները հասկանալու առումով:

Արամ Մանուկյանի պետական գործունեությունը կարելի է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլն ընդգրկում է 1915-1916 թվականները, երկրորդը՝ 1917-1918 թվականներ, իսկ երրորդը՝ 1918-1919 թվականները:

Երբ սկսվեց Առաջին աշխարհամարտը, Արամը ջանք ու եռանդ չխնայեց թուրքերի վայրենի կրքերի բորբոքմանը նոր առիթ չտալու և Վասպուրականի հայությանը կոտորածներից հեռու պահելու համար: Սկզբում փորձելով խաղաղ ձևով խուսափել կոտո-

ռածներից խելամտությամբ գոհացում տալով թուրքական իշխանությունների պահանջներին, նա նպաստեց նորակոչիկների որոշ մասին թուրքական բանակում ծառայելուն, սակայն հիմնական մասին թույլ չտվեց մեկնել ծառայության, այլ օսմանյան խորհրդարանի անդամ Ա. Վռամյանի հետ գաղտնի նրանց, ժողովրդական և կուսակցական բոլոր ուժերին հրահանգեց պատրաստ լինել դիմագրավելու թուրքերի բոլոր որոգայթներին[1]: Իսկ երբ արդեն պարզ դարձավ, որ հայության մեծ չափերի հասնող ջարդերն այլևս խաղաղ միջոցներով անհնար է հետաձգել, Արամը, որպես նահանգի հայության ամենաազդեցիկ քաղաքական կուսակցության Հ. Յ. Դաշնակցության ներկայացուցիչ, այլ քաղաքական ուժերի հետ միասին ձեռնարկեց 1915 թ. ապրիլյան ինքնապաշտպանության կազմակերպումը և նախաձեռնեց Հայ Ինքնապաշտպանության Զինվորական Մարմնի ստեղծումը՝ առաջարկելով առանց կուսակցական խտրականության նրանում, ընդգրկել զինվորական փորձառություն ունեցող գործիչների: Որոշ ժամանակ անց ինքն էլ մտավ այդ մարմնի մեջ և ղեկավարեց Վանի հայության ինքնապաշտպանությունը՝ հանդիսանալով նրա ոգին:

Դրսևորելով ռազմաքաղաքական ու պետական գործչի բացառիկ ընդունակություններ, տաղանդավոր կազմակերպչի ու ղեկավարի, ժողովրդի միասնականության ապահովման ու պաշտպանողական գործողություններին նրանց արդյունավետ մասնակցության ապահովման գծեր՝ Արամը Վանի հաղթական ինքնապաշտպանությամբ ոչ միայն ապացուցեց որ հայությանը անհնարին է հաղթել, այլև վասպուրականահայությանը փրկեց թուրք ցեղասպանների ճիրաններից: Երբ Վանում թուրքական

[1] Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Երևան, 2009, էջ 248:

հարձակումը 1915 թ. ապրիլի 21-ին իր գագաթնակետին հասավ (մի քանի ժամում Այգեստանի վրա արձակվեց 500 ռումբ: Արամն այդ օրը շարունակ դիրքից դիրք էր անցնում և հայ զինվորներին ոգևորում[2]: Ապրիլի 30-ին Արամի անմիջական հսկողությամբ ու ղեկավարությամբ կատարվեց վիճակագրություն: Գործադրվեցին ջանքեր սովը կանխելու ուղղությամբ: Նա անձամբ ճշտեց զինվորների ու բանվորների թիվը, նշանակեց նրանց տրվող ուտեստի նոր, կրճատված չափաբաժին, համայնացվեց բնակչության մոտ մնացած մթերքի մի մասը, արգելվեց առանց համապատասխան մարմինների գիտության մսացու կենդանիների մորթը[3]: Այն բանից հետո, երբ 1915 թ. մայիսի 5-ին Արարատյան կամավորական գնդի հեծելազորը դաշնակցական Խեչոյի հրամանատարությամբ մտավ Վան, արժանացավ ցնծագին ընդունելության: Զորավար Թ. Նազարբեկյանի վկայության համաձայն՝ նրանց դիմավորեց Արամն իր օգնականների և քաղաքի բնակչության հետ[4]: Ի պատասխան հերոսամարտի հաղթանակի առթիվ իր և ՀՅԴ հասցեին կատարած Խեչոյի գովասանքին՝ Արամն ազնվորեն նշեց, որ Վանում «կուսակցությունը չէ, որ գործ տեսավ, այլ ամբողջ ժողովուրդը»[5]: Վանի հերոսամարտը, որի շնորհիվ Վան-Վասպուրականի ավելի քան 150.000 հայեր փրկվեցին անխուսափելի կոտորածից, փաստեց այն իրողությունը, որ ճիշտ ղեկավարվելու և միասնաբար գործելու, պայքարելու դեպքում հայությանն անկարելի է հաղթել:

Ապրիլյան ինքնապաշտպանության հաղթանակից հետո ռուսական բանակի հրամանատարության կողմից Արամ Մանուկ-

---

[2] «Հերոսապատում Մեծ Եղեռնի», Պէյրութ, 1978, էջ 78:
[3] Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 160-161:
[4] ՀԱԱ, ֆ. 45, ց.1, գ. 2, թ. 45:
[5] «Յուշեր Արմենակ Եկարեանի», Գահիրէ, 1947, էջ 233:

յանը նշանակվեց Վան-Վասպուրականի «ժամանավոր նահանգապետը՝ բացառապես հայերից բաղկացած կառավարություն կազմելու, ինչպես նաև իր գործունեության ընթացքում հայկական կամավորական գնդերի վրա հենվելու լիազորությամբ»[6]: Դրանով պետականության կորստից հարյուր ամյակներ անց, թեկուզ ռուսական զինվորական իշխանության վերին ենթակայության ներքո փոքրիկ տարածքում հայ ժողովուրդը ստանում էր որոշակի ինքնուրույնություն: Այս նշանակումով ռուսական հրամանատարության գլխավոր մտահոգությունը իր սեփական շահերի պաշտպանությունն էր, ուստի Արամը պետք էր ենթարկվել Վանի կայազորի պետին, որի միջոցով պետք է փոխանցվեին զինվորական իշխանության բոլոր կարգադրությունները: Արամից մեծ ջանքեր էր պահանջվում հայկական շահերից բխող քաղաքականություն վարելու համար, քանի որ կողմերի դիրքորոշումը մի շարք հարցերում (հատկապես քրդերի նկատմամբ վերաբերմունքի, հայերի զենքի բռնագրավման և այլն) տարբեր էին: Պետք է հատուկ ընդգծել, որ նահանգապետի պաշտոնում լավագույնս դրսևորվեցին Արամի ազգային-քաղաքական ու կուսակցական գործչի պետական գործունեության բնորոշ վարվելակերպն ու մտածողությունը: Նահանգապետի պաշտոնում նա լիովին դրսևորեց իր կազմակերպչական տաղանդը, ազգային-պետական մտածելակերպն ու անկոտրում ոգին: Առաջնորդվելով հայ ժողովրդի շահերով՝ նա գործի դրեց բոլոր կարող ուժերին՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից 1915 թ. մայիսի 8-ին ստանձնելով նահանգապետի պաշտոնը, նույն օրը ժողովրդին ուղղված իր առաջին ուղերձում Արամ Մանուկյանը կոչ արեց համախմբվել ձևավորվելիք «կառա-

[6] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 4, գ. 19, թ. 44:

վարության շուրջը, վերակազմակերպելու համար կյանքը քաղաքի և ամբողջ շրջանի մեջ»[7]:

Դրսևորելով պետական գործչի ընդունակություններ՝ Արամը առաջին հերթին ձեռնամուխ եղավ նահանգի վարչական կառուցվածքի ու կառավարման համակարգի ձևավորմանը, առանց որի անհնար կլիներ հաջող ընթացք տալ ցեղասպանությունից մազապուրծ եղած հայության առջև ծառացած անհետաձգելի բազմաբնույթ խնդիրներին՝ ինքնապաշտպանության և օրինականության ապահովմանը, ավերված տնտեսության վերականգնմանը, փախստականների խնամքին և այլն: Կարճ ժամանակում՝ մայիսի 7-ից 22-ը, նա ձևավորեց հայ նվիրյալ գործիչներով համալրված պետական ապարատ իր օրենսդիր և գործադիր ճյուղերով: Նրա ստեղծած կենտրոնական մարմիններն էին՝ ոստիկանական տեսչությունը, կալվածական-գաղթականական, տնտեսական առևտրական և առողջապահական մարմինները, քաղաքապետարանը, դատարանը, գավառային վարչությունը և այլն[8]: Նահանգի օրենսդիր մարմինը վարչական խորհուրդն էր, որը բաղկացած էր գործադիր մարմինների ղեկավարներից: Այն մշակելու էր օրինագծեր ենթարկելով նահանգապետի վավերացմանը, որն ուներ վետոյի իրավունք[9]: Ինչպես վարչական խորհրդի, այնպես էլ նահանգային վարչության նախագահը նահանգապետն էր, որի կողմից ընտրվում էին այլ մարմինների և՛ անդամները և նախագահները: Ընդհանուր և մասնագետ քննիչների միջոցով նահանգապետը հսկելու էր հիշյալ մարմինների աշխատանքը: Կառավարություն ձևավորելիս Արամը դրսևորեց ապակուսակցական մոտեցում՝ նախա-

---

[7] Ավետիսյան Մ., Փաստաթղթեր Արամ Մանուկյանի պետական գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների» 1990, N 2, էջ 135:
[8] «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, N 1, էջ 212:
[9] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 48, թ. 2:

պես կազմելով նահանգի կառուցվածքային սխեման: Այսպես, մի շարք մարմինների ղեկավարներ՝ նպաստից հանձնաժողովի նախագահ Հ. Կուլօղլյանը, բյուջեի հանձնաժողովի նախագահ Ա. Թերզիբաշյանը, կրթական տեսչության նախագահ պրոֆ. Ա. Մինասյանը, քաղաքի ոստիկանապետի օգնական, ապա ոստիկանապետ Ղևոնդ Խանջյանը (հետագայում ՀԿԿ կենտրոնի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հայրը), նահանգային վարչության դիվանապետ Ա. Դարբինյանը, Շահբազ, Բերկրի, Թիմար, Արճակ, Հայոց-Ձոր, Արտամեդ, Չիբուխլի շրջանների ոստիկանության ընդհանուր ղեկավար Ա. Եկարյանը ռամկավարներ էին, շրջանային դատարանի նախագահ Աղաբեկ Համբալյանը անկուսակցական էր, ընդհանուր դատախազ Հ. Գալիկյանը հնչակյան էր: «Վան Տոսպի» նախկին տնօրենը նշանակվել էր Խոշաբի գավառապետ[10]: Բազում առիթներով Արամի հասցեին քննադատական խոսքեր ուղած ռամկավար ազդեցիկ գործիչ Ա. Թերզիբաշյանը ընդգծել է, որ Արամը պաշտոնյաներ նշանակելիս դրսևորել է անաչառ մոտեցում[11]:

Վասպուրականի տարածքը բաժանվեց 14 գավառ-գավառակների, որոնք ղեկավարում էին Արամի նշանակած գավառապետերը՝ իրենց հետ ունենալով մեկական օգնական, թարգմանիչ, ոստիկանապետ անհրաժեշտ թվով ոստիկաններով: Գավառապետերը գործադրում էին բոլոր միջոցները՝ տեղերում իրագործելու նահանգապետի կողմից առաջարկվող ծրագրերը: Գավառային վարչությունն իրականացնում էր հարաբերությունները կենտրոնի և գավառների միջև՝ ուղղորդելով վերջինիս աշխա-

---

[10] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Փարիզ, 1947, էջ 228:
[11] Թերզիպաշեան Ա., Անդրանիկ, Փարիզ, 1942, էջ 331:

տանքները: Վան քաղաքը կառավարում էր նահանգապետի կողմից նշանակված քաղաքապետը:

Ցուցաբերելով պետական գործչին յուրահատուկ վճռականություն՝ Արամը իր կառավարության հետ միասին ձեռնամուխ եղավ բազմաթիվ դժվարին ու հրատապ լուծում պահանջող խնդիրների լուծմանը, ինչպիսիք էին ինքնապաշտպանության ապահովումը և դրա հետ ուղղակիորեն կապված քրդական հարցի կարգավորումը, ավելի ճիշտ՝ քրդերի վերադարձի կանխումը: Մի շարք վայրերում հայկական ուժերի հաղթանակի, ինչպես նաև ռուսական բանակի առաջխաղացման հետևանքով սահմանամերձ գոտի էին հեռացել բազմահազար քրդեր, որոնք սպառնում էին ներխուժել նահանգի տարածք և հայկական նոր ջարդեր կազմակերպել, կամ էլ, հպատակություն հայտնելով ռուսներին հաստատվել իրենց նախկին բնակավայրերում: Արամը, վճռական կամք ցուցաբերելով, Վան քաղաք և գավառներ քրդական ներխուժումը կանխելու համար ստեղծել էր տեղական ինքնապաշտպանական ուժեր, որոնցում հավաքագրել էր շուրջ հազար մարդու[12]: Այսպիսով, այն դեպքում, երբ Արամը ձգտում էր խափանել քրդերի վերադարձը, այդ առնչությամբ առկա էին լուրջ տարաձայնություններ Արամի և ռուսական զինվորական հրամանատարության միջև: Երբ Արամը ձգտում էր ամեն կերպ խափանել քրդերի վերադարձը՝ ոչնչացնելով կամ շահագործելով նրանց կալվածքները, ռուսական կողմը նրանց հանդեպ ցուցաբերում էր կարեկցական մոտեցում, սիրաշահելու քաղաքականություն: Արամը գտնում էր, որ քրդերին հարկ է դիտել որպես ռազմագերիների՝ դրանից բխող հետևանքներով, կամ էլ նրանց մեջ տեսնել սով-

[12] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 125:

ական հանցագործների և պատժել նրանց[13]: Նա իրավացիորեն նշում էր, որքրդերի վերադարձը թույլատրելը կնշանակեր, թե կարելի էր անպատիժ կերպով կողոպտել ու սպանել հայերին, որը վերջիններիս Թուրքիայում ռուսական զենքի հաջողության միակ անկեղծ կողմնակիցների մոտ կառաջացնի ծանր հիասթափություն Ռուսաստանի հանդեպ[14]: Ուստի Արամը պետական գործչին հատուկ համարձակությամբ նշում էր, որ հունիսի 22-ի հրամանի գործադրման դեպքում ինքը չի կարող իր վրա պատասխանատվություն վերցնել Վանի շրջանում կարգ ու կանոնի պահպանման համար:

Նրա անմիջական ջանքերով նահանգում վերսկսվեցին երկրագործական աշխատանքները և ժողովրդին ու բանակին պարենով ապահովելու գործը: Մեծ ջանքերի շնորհիվ նրան հաջողվեց հասնել այն բանին, որ զինվորական իշխանությունը, որը լքված հողերը համարում էր ռուսական բանակի սեփականությունը, դրանք հանձնի հայերի օգտագործմանը: Արդեն մայիսի 8-ին Արամի կողմից հրապարակված հրահանգի համաձայն՝ արգելվում էր հրազենի գործադրումը, ոգելից խմիչքների վաճառքը զորքին, լքված տների ինքնագլուխ զբաղեցումը, թալանը, ապօրինի ծառահատումները և այլն[15]: Պետական ավանդույթների բացակայության և պետական մեխանիզմների նոր ձևավորման պայմաններում Արամը հարկադրված էր մեծ ժամանակ հատկացնել բնակչության շահերի պաշտպանությանը:

Հանուն հայ բնակչության շահերի նա քանիցս ընդհմացավ ռուսական զորահրամանատարության քաղաքականությանը՝ հա-

---

[13] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 39, թ. 42-44:
[14] Նույն տեղում, թ. 45-46:
[15] Նույն տեղում, թ. 12:

ճախ փորձելով ազդել նրա վրա: Արամի պետական արդյունավետ գործունեության հետևանքով հայությունը բացահայտեց իր ստեղծարար կարողությունները: Նրա հմուտ պետական գործունեության, կառավարման շնորհիվ Վան-Վասպուրականի նահանգապետությունն ապրեց այնպիսի զարգացում, որը մեզ թույլ է տալիս այն անվանել Հայոց նորագույն անկախ պետականության նախատիպը:

1915 թ. հուլիսին, երբ ռուսական բանակը Վանից բռնեց նահանջի ուղին, Արամը, հանդես բերելով ազգային-պետական մտածողություն, հայրենասիրություն, պատասխանատվության և պարտքի բարձր զգացում իր ժողովրդի հանդեպ, վճռականապես դեմ արտահայտվեց գաղթին՝ այն համարելով կործանարար հայության համար և ընտրեց դիմադրության կազմակերպման դժվարին ուղին: Սակայն գաղթի կասեցումը նրա և հայրենանվեր մյուս ուժերի կամքից վեր գործ էր: Հարկադրաբար հեռանալով Վանից՝ Արամը մինչև 1917 թ. դեկտեմբերը հաստատվեց Թիֆլիսում և ակտիվորեն մասնակցեց Կովկասում ընթացող ազգային-քաղաքական կյանքին: Նրա գործունեության աշխարհագրական սահմանները լայն էին: Նրան տեսնում ենք ոչ միայն Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, այլև Պետրոգրադում: 1915 թ. ազգային աղետից հետո հայկական լայն շրջանակների, բնականաբար նաև Արամի գործունեությունը հիմնականում առնչվում էր արևմտահայության ճակատագրին: Արևելյան Հայաստանում և Ռուսաստանի այլ շրջաններում ապաստանած 250 հազարից ավելի արևմտահայ գաղթականների գոյության ապահովումն անհետաձգելի խնդիր էր բովանդակ հայության համար: Հարկավոր էր շուտափույտ կերպով հոգ տանել նրանց կացարանի, սննդի, հագուստեղենի, բժշկական

օգնության ապահովման և կենսական այլ խնդիրների լուծման մասին:

Փաստորեն, Արամը 1915-1917 թթ. ակտիվ մասնակցություն ունեցավ Կովկասում քաղաքական զարգացումներին՝ արժանանալով արևելահայ ղեկավար մարմինների վստահությանը:

1917 թ. ռուսական փետրվարյան հեղափոխության, առավելապես հոկտեմբերյան հեղաշրջան հետևանքով ռուսական կովկասյան ռազմաճակատի քայքայումը, թուրքական ներխուժման սպառնալիքի տակ դրեց Արևելյան Հայաստանը, ուր ապաստան էր գտել ցեղասպանությունից փրկված արևմտահայության նշանակալի մասը: Հայության առջև հրամայաբար ծառացել էին հայոց արևելյան հատվածի զգալի մասը զբաղեցնող Երևանի նահանգում ուժեղ իշխանություն ստեղծելու, Հայկական կորպուսը ձևավորելու նպատակով նահանգում կազմակերպված զորահավաք իրականացնելու և այլ հրատապ խնդիրներ: Հայ ժողովրդի համար ճակատագրական այդ պահին Թիֆլիսի Հայոց կենտրոնական ազգային խորհրդի լիազոր ներկայացուցչի կարգավիճակով Երևան ժամանեց Արամը: Այդ ժամանակվանից սկսվեց նրա պետական գործունեության երկրորդ շրջանը, որն ընդգրկում է 1917 թ. դեկտեմբերից մինչև 1918 թ. հուլիս ժամանակահատվածը: 1917 թ. վերջերից հայ իրականության մեկ այլ ազդեցիկ կառույց հանդիսացող հայ զինվորական խորհուրդը Արամին էր վստահել դասալքության դեմ պայքարի ղեկավարությունը:

Հենց Երևանում էլ ստանձնելով դիկտատորի, Վարիչների մարմնի ղեկավարի պաշտոնները՝ Արամը ցուցաբերեց կազմակերպչական բացառիկ տաղանդ և ազգային-պետական մտածողություն: Գիտակցելով հայ ժողովրդի համար տարածաշրջանում զարգացող ռազմա-քաղաքական իրադարձությունների վտանգա-

վոր հետևանքները՝ Երևան հասնելուն պես Արամը նախատեսեց հայ ժողովրդի պաշտպանության իրատեսական ուղենիշ, ըստ որի հայ ժողովուրդը սեփական ուժերով պետք է լուծեր իր առջև ծառացած խնդիրները: Ցուցաբերելով կազմակերպչի մեծ ընդունակություններ, վճռականություն, հետևողականություն և շրջահայացություն՝ նա կարողացավ ժողովրդի մեջ արթնացնել հավատը սեփական ուժերի նկատմամբ, որի արդյունքում կազմակերպվեց Սարդարապատի հաղթանակը: Արամը ոչ միայն ոգևորեց և համարձակ ելույթներով ներշնչեց օրհասական պահին սեփական հողը պաշտպանելու ժողովրդի պատրաստակամությունը, այլև ապահովեց այն մեծ հաղթանակը, որն արևելահայությանը փրկեց նոր ցեղասպանությունից: Հենց այդ տարիներին Արամի վճռականության շնորհիվ հնարավոր եղավ թուրք-քրդական ավազակախմբերի դեմ պայքարի ընթացքում 1918 թ. առաջին եռամսյակում հնազանդեցնել 50-ից ավելի թաթարաբնակ գյուղեր, որոնք թուրքական հարձակման պայմաններում թիկունքից հարձակվող ուժեր էին, որ օգնում էին թուրքերին: Արամի գործունեությունը չէր սահմանափակվում միայն թուրքական գյուղերի հնազանդեցմամբ, այլ նա վարում էր երկիրն այդ թշնամական տարրերից մաքրագործելու քաղաքականությունը: Միաժամանակ սանձահարում էր հայ անիշխանական տարերին, որոնք հայտնի էին մաուզերիստներ անունով: Այսպես, օրինակ, ՀՅԴ հայտնի խմբապետ Դալի Ղազարի խմբի տղաների մի մասը (մաուզերիստներ էին և վնասական գործունեություն էին ծավալել երկրում): Իր մոտ կանչելով Դալի Ղազարին Արամը կարգադրեց հավաքել խումբը և մեկնել ճակատ[16]: Այն բանից հետո, երբ իր չարագործություններով բնակ-

[16] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 173:

չության մեջ հայտնի մաուզերիստների պարագլուխ Չոլախ Գևորգը՝ Դալի Ղազարի նախկին մարտիկներից մեկը, բազմաթիվ նախազգուշացումներից հետո ոչ միայն չուղղվեց, այլ, ընդհակառակը, ըմբոստացավ իշխանությունների դեմ, Արամը կարգադրեց գնդակահարել նրան՝ անհանդուրժելի համարելով նրա գործունեությունը: Դա վճռական նշանակություն ունեցավ նահանգում կարգ ու կանոնի ապահովման համար:

Ինչպես Վան-Վասպուրականում, այնպես էլ Երևանում գործելով բացառիկ պայմաններում, Արամը շատ արագ դարձավ կենտրոնական դեմք: Իր ուժեղ ու նախաձեռնող բնավորության, նրբամիտ կեցվածքի, գործող անձանց ու կազմակերպությունների նկատմամբ իր հավասարակշիռ մոտեցումների և ապակուսակցական ոգու շնորհիվ նա հասավ հասարակության հետ միասնության ապահովմանը: Այդ է պատճառը, որ հռչակվեց Երևանի դիկտատոր՝ օժտվելով միանձնյա իշխանությամբ, այլև դարձավ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներից մեկը: Մշտապես հասկանալով իրականացվող քայլերի հրատապությունը, շեշտելով ժողովրդի ու ռազմաքաղաքական ուժերի նկատմամբ իր մոտեցումները, առանձնահատուկ հարգանքը՝ նա կարողացավ ներգործել ժողովրդի վրա՝ տանելով նրան հաղթանակների, ապահովելով հայ ժողովրդի գոյությունը և անկախ պետականության վերականգնումը:

1918 թ. մայիսին Հայաստանի Հանրապետության ստեղծմանը մեծապես պարտական ենք Արամին և ամենևին պատահական չէ, որ միայն նա է արժանացել Հայաստանի Հանրապետության հիմնադրի կոչմանը: Նա դրան հասավ ողջ ժողովրդի և բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի շնորհիվ, որոնց կա-

րողացավ միավորել և նրանց գործունեությունը ծառայեցնել մեկ նվիրական նպատակի:

Նորանկախ հանրապետության իշխանության մարմինների ստեղծումով սկսվեց Արամի պետական գործունեության երրորդ փուլը, (1918 թ. հուլիսից 1919 թ. հունվար): Չնայած Արամը չզբաղեցրեց վարչապետի պաշտոնը, բայց իրականում ՀՀ անդրանիկ կառավարության մեջ նա ուներ բացառիկ դիրք՝ նրան էր վստահված միաժամանակ ներքին գործերի, լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության նախարարի պաշտոնը (նաև տարածքային կառավարման նախարարի լիազորությունները): Առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, բանիմացությամբ, անձնական անշահախնդրությամբ, ցուցաբերելով բացառիկ կազմակերպչական տաղանդ, նախաձեռնողականություն ու հետևողականություն՝ իր արդյունավետ գործունեությամբ նա կարողացավ ապահովել երկրի հայացման, նրանում իրավակարգի հաստատման, վարչական մարմինների, հատկապես՝ ՆԳ նախարարության ամրապնդմանը և այդ կերպ մեծապես նպաստեց նորաստեղծ պետականության ամրապնդման գործին:

Տարբեր գործիչներին աշխատանքի մեջ ներգրավելու գործում Արամի մոտեցումների յուրահատուկ ձևը, անկախ նրանց կուսակցական պատկանելությունից, պետական ու սոցիալական դիրքից, ինչպես նաև իր համեստ կենցաղը, անշահախնդրությունը, արդարամտությունը, անկաշառությունը, հայրենասիրությունը որպես պետական գործիչ նրան բնութագրող հատկանիշներն են: Արամ Մանուկյանի պետական գործունեության այդ գծերը մեծապես օգնեցին իշխանությունների հանդեպ ժողովրդական վստահության ամրապնդմանը:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՎԱՆԻ 1915 Թ. ՀԵՐՈՍԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ

Թուրքական իշխանությունները, օգտվելով սկսված համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհ հնարավորությունից, որոշեցին իրականացնել իրենց հրեշավոր ծրագիրը՝ բնաջնջելու միջոցով լուծել Հայկական հարցը: Այնպես որ, Հայոց ցեղասպանությունը նախորոք մտածված, մանրամասն ծրագրված ու հատուկ այդ նպատակով ստեղծված պետական կառույցների կողմից իրականացվող քաղաքականություն էր, որին զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայեր:

Ստեղծված իրավիճակում այլ ելք չունենալով՝ հայությունը ոտքի ելավ ինքնապաշտպանվելու, թուրքական արնախում ռիմակին դիմագրավելու, սեփական պատիվն ու կյանքը փրկելու համար: Ցավոք, շփոթված, հանկարծակիի եկած, հիմնականում անզեն ու գլխատված ժողովուրդը չկարողացավ կազմակերպել համընդհանուր, կազմակերպված, միասնական ինքնապաշտպանություն, ինչի հետևանքով Արևմտյան Հայաստանի մեծ մասում տեղահանվեց ու անխնա կոտորվեց: Սակայն մի շարք գավառներում, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը կարողացավ կազմակերպված ինքնապաշտպանվել և փրկվել թուրքական յաթաղանի ամենակուլ երախից:

Արևմտահայության ինքնապաշտպանական կռիվների զարդապսակը (հատակապես՝ արդյունավետության տեսակետից) Վան-Վասպուրականի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանու-

թյունն էր, որի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր հայ ժողովրդի նշանավոր զավակ Արամ Մանուկյանը:

Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան) ծնվել է Կապանի Զեյվա գյուղում՝ աղքատ գինագործի ընտանիքում[1]: Ունեցել է դառը մանկություն: Սովորել է Շուշիի, ապա Երևանի թեմական դպրոցներում: 14 տարեկանում ընդունվել է ՀՅԴ շարքերը և մինչև կյանքի վերջը ծառայել հարազատ կուսակցությանն ու ժողովրդին:

Բաքվում, Գանձակում, Կարսում , Խոյում և մի շարք այլ վայրերում գործունեություն ծավալելուց հետո 1905 թ. Արամը մտնում է Վան: Շնորհիվ իր խոհեմ և զուսպ վարվելաձևի՝ նա այստեղ կարողանում է շահել տեղացիների սերն ու համակրանքը և քայլ առ քայլ իրականացնել իր առջև դրված խնդիրները: Հարազատ ժողովրդի կողմից փաշա տիտղոսին արժանացած Արամը ստեղծում է մարտական խմբեր, երկիր ներկրում զգալի քանակությամբ զենք կազմակերպում կրթօջախներ և իրավական օգնություն կազմակերպում ժողովրդին: Զգալիորեն բարելավում է հայ-քրդական հարաբերությունները՝ ձգտելով հասնել քրդերի չեզոքությանը, համերաշխություն ստեղծում Վանում գործող Արմենական-Ռամկավար և Հնչակյան կուսակցությունների հետ և այլն:

Դավոյի հայտնի դավաճանության հետևանքով ձերբակալված և 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման արդյունքում ազատված Արամը միայն կարճ ժամանակ ոգևորվեց երիտթուր-

---

[1] Պատմագիտական գրականության մեջ և հուշագրություններում այս հարցի վերաբերյալ կան տարակարծություններ: Առաջնության դափնին միմյանցից խլելով՝ կենսագիրները մի դեպքում Արամ Մանուկյանի ծննդավայր են հայտարարում Շուշին, իսկ մյուս դեպքում՝ Զեյվան: Մանրամասների պարզաբանումը մեր խնդիրը չենք համարում. այդ հարցին կանդրադառնանք մեկ այլ առիթով:

քական սահմանադրության հռչակմամբ, սակայն շատ արագ հասկացավ և ճիշտ ըմբռնեց նրա էությունը: Նա հրաժարվեց խորհրդարանի պատգամավոր դառնալուց և գերադասեց մնալ ժողովրդի մեջ՝ այն համոզումով, որ «այդպէս աւելի օգտակար կը լինէր ժողովուրդին, քան խորհրդարանում նստած և բոցաշունչ ճառեր ասելով»[2] և ընկերակցելով նույն խորհրդարանում բազմած թուրք երևելիներին, «որոնցմէ շատերու ձեռքերը հաւանաբար մաքուր չէին հայերու արիւնէն ու արցունքէն»[3]:

Վստահորեն կարելի է պնդել, որ եթե հայ ազգային-ազատագրական պայքարի բոլոր գործիչները 1908 թվականից հետո Արամի նման մտածեին և, խորհրդարանական գործունեությամբ չոգևորվելով, ձեռնամուխ լինեին արևմտահայությանն արագորեն զինելու աշխատանքին, հայությունն այդքան դաժանորեն չէր ճաշակի ցեղասպանության սարսափները: Շնորհիվ մի շարք գործոնների և հենց այդ խոհեմ գործելակերպի՝ Վանի բնակչությունը փրկվեց 1915 թ. Եղեռնից:

Առաջին աշխարհամարտի Կովկասյան ճակատում ռուսական ուժերի անբավարարության բացը լրացնելու նպատակով (և ոչ արևմտահայության փրկության, ինչպես մատուցում էին ռուսական քարոզիչները)՝ ռուսական իշխանությունների թույլատվությամբ ու հովանավորությամբ սկսվեց կամավորական շարժումը, ինչն Արամը «թրքահայ ժողովրդի համար կորստաբեր կը համարէր ... և մանավանդ գործոն մասնակցութիւնը»[4]: Արամի մտավա-

---

[2] «Յուշեր Արմենակ Եկարեանի», խմբագրեց՝ Լ. Աճեմեան, Պէյրութ, 1985, էջ 161:

[3] Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Աղեքսանդրիա, 1922, էջ 147:

[4] Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Երևան, 2003, էջ 159:

խությունն անհիմն չէր: Հատկապես ռուսական բանակի շարքերում հայերի կռվելու հանգամանքը հարմար առիթ էր թուրքական կառավարության համար՝ իրականացնելու իր հրեշավոր ծրագիրը:

Դեպքերը Վանում կտրուկ կերպով սկսում են զարգանալ 1915 թ. ապրիլի սկզբներից: Վանի նորանշանակ կուսակալ Ջևդեթ բեյը հրամայում է քաղաքի հայկական թաղամասերը՝ Այգեստանն ու Քաղաքամեջը զորքերով շրջապատել և սպառնում հաշվեհարդար տեսնել Վանի հայության հետ, եթե նրանք շարունակեն չենթարկվել ու չկատարեն իր բոլոր հրամանները: Հայերը հույսեր էին փայփայում, որ կհաջողվի խուսափել բախումից: Նրանք փորձեցին ամերիկյան միսիոներների միջնորդությամբ բանակցելով լուծել հակասությունները, սակայն հաջողություն չունեցան: Սպառելով բոլոր միջոցները և մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները՝ վանեցիները որոշում են համախմբվել և դիմել ինքնապաշտպանության:

Ապրիլի 5-ին ստեղծվում է Վանի հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որի մեջ մտնում են ռամկավար Ա. Եկարյանը (ռազմական ղեկավար), Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան), Բուլղարացի Գրիգորը (երկուսն էլ դաշնակցական), որոնց մի փոքր ուշ միացան Փանոս Թերլեմեզյանը և Արամ Մանուկյանը: Զինվորական մարմնին կից ստեղծվում են նաև այլ ստորաբաժանումներ, որոնք կոչված էին ապահովելու հայության ինքնապաշտպանությունը:

Այգեստանը բաժանվում է յոթ ինքնապաշտպանական շրջանների՝ 79 դիրքով: Հայ մարտիկների թիվը 1053 էր, իսկ զենքի քանակը՝ 505 հրացան և 549 ատրճանակ: Հակառակորդի

ուժերը մոտ 12000 զինվոր էր, գումարած թուրք խուժանն ու քուրդ հրոսակները[5]:

Ապրիլի 5-ին Զինվորական մարմինը հատուկ շրջաբերականով հայտնում է, որ իրենց կռիվը *պաշտպանողական է* և բոլորը պարտավոր են ենթարկվել կառույցի հրահանգներին: Պաշտպանության ամբողջ ընթացքում ընդունվեցին մի շարք այլ շրջաբերականներ ևս, որոնցով, փաստորեն, Զինվորական մարմինն իրականացնում էր օրենսդիր ու գործադիր իշխանության գործառույթներ:

1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության մասին առկա են տարաբնույթ և իրարամերժ գնահատականներ, որոնցով լի են հատկապես կուսակցական հուշագիրների ու պատմագիրների երկերը: Սակայն հստակ է մի բան, որն ընդունում են բոլորը. ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացրել է Արամ Մանուկյանը, նրան օժանդակել են բոլորը՝ կուսակցական հավակնությունը տեղի է տվել համերաշխության: Պաշտպանությունն իրականացվել է գրեթե անթերի, որի արդյունքում իրական ոչնչացումից փրկվել է Վան-Վասպուրականի հայության ճնշող մեծամասնությունը: Արամն ու իր զինակիցները եղան ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչներն ու ոգեշնչողները, ինչի մասին կան բազմաթիվ վկայություններ: Վանի հերոսամարտը տևել է 1915 թ. ապրիլի 6-ից մինչև մայիսի 3-ը, երբ Զեյթեթը դիմեց փախուստի և Վան մտան հայ կամավորները:

Արձանագրենք.

• 1915 թ. Վանի ապրիլյան հերոսամարտը, ինչպես նաև Մուսա լեռան հերոսական ինքնապաշտպանությունը, եզակի

---

[5] Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, էջ 193:

կռիվներից էին, որոնք տվեցին ցանկալի արդյունք՝ ոչնչացման իրական վտանգից փրկվեց հայության մի հատվածը:

• 1915 թ. Վանի ինքնապաշտպանությունն ուներ 1896 թ. հերոսամարտի ուսանելի և խիստ հուսադրող ու ոգևորող փորձը: 1896 թ. շատ մասնակիցներ կռվում ու քաջալերում էին նաև 1915 թ. պաշտպանության ժամանակ:

• Վանի պաշտպաններն ապավինեցին սեփական ուժին, թեև ակնկալվում էր նաև ռուսական բանակի օգնությունը: Ինքնապաշտպանության ընթացքում Վանում առկա էր կուսակցական իրատեսական համերաշխություն, բացակայում էր կուսակցամոլությունն ու դրա անցանկալի ազդեցությունը:

• Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր Արամ Մանուկյանը, որի նկարագիրը մեծ դերակատարություն ունեցավ հաղթանակը կռելու գործում:

Լինելով արևելահայ Արամ Մանուկյանը շատ շուտ ըմբռնեց արևմտահայության ցավը և ամենագլխավոր խնդիրը՝ ինքնապաշտպանության դինել ֆիզիկական գոյությունը պահպանելու և ազատություն նվաճելու համար: Նա հասկացավ, որ պետք չէ վստահել մեծ տերությունների տված խոստումներին, այլ անհրաժեշտ է ապավինել սեփական բազկին, կրթել, զինավարժել ժողովրդին: Կողմնակից լինելով խաղաղ պայմաններում թուրքերի հետ խաղաղ գոյակցությանը՝ նա միաժամանակ պահանջում էր աչալուրջ լինել: Արամը դեմ էր կամավորական շարժմանը: Նրա կարծիքով՝ դա գազազեցնում էր թուրքերին, որոնք, նախապես մշակված ծրագիր ունենալով, առիթ էին փնտրում ջարդերի միջոցով մեկընդմիշտ փակելու Հայկական հարցը: Վճռական պահերին Արամը հեռու մնաց կուսակցամոլությունից: Զինվորական մարմինը ղեկավարում էր փառապանծ ու վեհանձն Արմենակ

Եկարյանը, ով ռամկավար էր: Ինքնապաշտպանության ղեկավար մարմնում ևս մեծ թիվ էին կազմում ոչ դաշնակցականները, որոնք կարևոր ֆունկցիաներ էին կատարում: Սակայն դա ամենևին չէր խանգարում, որ նրանք համատեղ ու միակամ պայքարեն անարգ թշնամու դեմ: Այս ամենի արդյունքում՝ ժողովուրդն ու շարքերը ներդաշնակ համերաշխությամբ և իրենց հերոսական քաջագործություններով միահամուռ կռեցին բաղձալի հաղթանակը:

Այստեղ ցանկանում ենք մի կարևոր հանգամանք ընդգծել: Մեր օրերի ազատությունը հնարավորություն է ընձեռում գրել ամեն ինչի ու բոլորի մասին: Չկան արգելված թեմաներ: Սակայն երբեմն գրվում են նախադասություններ, օգտագործվում են մակդիրներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Կամ՝ մեծարվում, փառաբանվում են որոշ գործիչներ, իսկ նրանց կողքին ոչ պակաս հերոսացած նվիրյալներ մոռացության են մատնվում: Կարծում ենք՝ ժամանակն է բոլորի նկատմամբ ուշադիր լինել և տուրք չտալ կուսակցականությանը: Համոզված ենք նաև, որ սա այն դեպքն է, երբ ով էլ գրիչ վերցնի Արամի մասին գրելու, մեծարանքի, գնահատանքի ու փառաբանման խոսքերից բացի ոչինչ չի գրի: Իսկապես, լավ է ասված. «Արամը, օժտված ի վերուստ, ամբողջ ժողովրդի մը համար ստեղծեց նոր պատմութիւն եւ կեանքի կոչեց ու իրականացուց մեր հայրենիքի աւերակներուն վրայ 500 տարիներէ ի վեր թափառական ու անհանգիստ երազը: Արամը կրցավ առարկայացնել ահա այդ Մեծ Երազը եւ այդ մեծ առարկայացումին մէջ է, որ կը մեծնայ Արամը եւ կը գերազանցէ իր եւ իրմէ ետք եկող ժամանակներու բոլոր մեծութիւնները, քանի որ, ամէն բանէ առաջ, Արամը կերտեց Ազատ եւ Անկախ Հայաստանը»[6]:

---

[6] Մխիթարեան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1930, էջ 129:

ՈՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

1915 թ. մայիսի 7-ին Վանում հայկական նահանգապետության հիմնումը պատահական չէր: Դեռևս 11-րդ դարում հայոց պետականության կորստից հետո Վասպուրական նահանգի տարբեր մասերում՝ (Աղթամար, Շատախ) պահպանվել էին կիսանկախ իշխանություններ: Ճիշտ է, ժամանակի ընթացքում նշված կազմավորումները վերացան, սակայն Վասպուրականցիները՝ սերնդից սերունդ փոխանցում էին նրանց վերաբերյալ զանազան պատմություններ: Բացի այդ, նահանգում առկա էին բազմաթիվ պատմական հուշարձաններ, որոնք վերահաստատում և լրացնում էին վերը նշվածը: Այդ ամենը, ինչպես նաև վանեցիների կրթական բարձր մակարդակը, հնարավորություն էին տալիս ժողովրդի հիշողության մեջ պահպանել պետականության գաղափարը: Ուստի պատահական չէ, որ 19-րդ դարի 60-70-ական թվականներին ծավալված հայ ազգային-ազատագրական շարժումները զարթոնքի շրջան էին վասպուրականցիների համար: Այդ զարթոնքին նպաստում են ազգային և հոգևոր մի շարք գործիչներ՝ Մկրտիչ Խրիմյանի (Խրիմյան Հայրիկ), Գարեգին Սրվանձտյանի, Մկրտիչ Թերլեմեզյանի (Ավետիսյան), Մկրտիչ Փորթուգալյանի և այլոց ծավալած եռանդուն կրթական-քարոզչական եռանդուն գործունեությունը:

Հայրենասիրական գաղափարների քարոզչությանը նպաստում են Վասպուրականի նշանավոր կրթական հաստատությունները՝ Հայկազյան դպրոցը և Սանդխտյան իգական վարժարանը (հիմնվել է 1870 թ.), Կեդրոնական վարժարանը (հիմնվել է 1881 թ.) և հռչակավոր Վարագա վանքը: Նշված ուսումնական

հաստատություններում կրթվել է վասպուրականցիների մի ողջ սերունդ, որը և դիմեց գործնական քայլերի Արևմտյան Հայաստանը թուրքական բռնապետությունից ազատագրելու համար: Ուստի պատահական չէ, որ Վանում են հիմնվում «Միություն ի փրկություն», «Ձինակիր», «Սև խաչ» հայրենասիրական-ազատագրական գաղտնի կազմակերպությունները, իսկ 1885 թ.՝ հայ իրականության մեջ առաջին ազգային կուսակցությունը՝ Արմենական կուսակցությունը:

Ազգային-ազատագրական գաղափարների տարածմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ զգալի թվով վանեցիներ ուսում էին ստանում Ռուսաստանում՝ գլխավորապես Գևորգյան ճեմարանում: Մի մասն էլ մեկնում էր Եվրոպա՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի և այլ երկրների համալսարանները: Նրանց թվում էին՝ Համազասպ Բաղեշցյանը, Արտակ Դարբինյանը, Վարազդատ Տերոյանը, Արմենակ Մաքսապետոյանը և ուրիշներ:

Վանեցիների համախմբվածությունը ցայտուն դրսևորվում է 1896 թ. ինքնապաշտպանական մարտերի ժամանակ, երբ ազգային երեք կուսակցությունները՝ «Արմենական», «Հնչակյան» և «Դաշնակցություն», մի կողմ դնելով ունեցած գաղափարական տարաձայնությունները, գլխավորում են Վանի հայության դիմադրությունը: Նույնը կրկնվեց 1915 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 4-ը տեղի ունեցած Վանի Այգեստան և Քաղաքամեջ թաղամասերի ինքնապաշտպանության ժամանակ: Եվ ինչպես նշում է Ա-Դոն. «Ռուս բանակի հրամանատարը գնահատեց հայ ժողովրդի մղած պայքարը ու տարած հաղթանակը և հրավիրեց Վասպուրականը կառավարելու համար Վանի կռիվները ղեկավարող Արամին, լիա-

զորելով նրան կազմել հայկական ժամանակավոր կառավարություն»[1]:

Ուստի չպետք է պատահական համարել 1915 թ. մայիսի 7-ին Վան-Վասպուրականում հայկական իշխանության հիմնումը: Դա արդյունք էր նախորդ սերունդների հետևողական գործունեության: Նրանք կաթիլ-կաթիլ հայ բնակչության մեջ սերմանել էին անկախ պետականության վերականգնման գաղափարը, որն ի վերջո հասավ իր նպատակին: Արամի՝ նահանգապետի կամ ժամանակավոր կառավարչի պաշտոնում հաջող գործունեության հիմնական գրավականներից մեկը կրթված ներուժի առկայությունն էր, որի վրա հիմնվելով Արամը հաջողությամբ կարողացավ կառավարել Վան քաղաքը և ազատագրված գավառներն ու գավառակները:

Վանի նահանգապետության համակարգում պակասում էին վարչական աշխատանքի փորձ և հմտություն ունեցող պաշտոնյաներ: Այս հարցում աջակցելու նպատակով, արևմտահայ եղբայրներին օգնության են հասնում արևելահայերը, որոնցից շատերը ոչ միայն վարչական, այլև քաղաքական ու պետական աշխատանքի զգալի փորձ ունեին: Նրանցից Սիրական Տիգրանյանը (ՀՅԴ անդամ) և Պարույր Լևոնյանը (ՀՅԴ անդամ) ընդգրկվում են նահանգապետության ղեկավար մարմնում՝ առաջինը՝ փոխնահանգապետ, իսկ երկրորդը՝ նահանգապետի օգնական: Ս. Տիգրանյանը Պետական դումայի նախկին պատգամավոր էր և 1915 թ. Կովկասյան 4-րդ բանակային կորպուսում եղել էր ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում քաղաքացիական մասի լիազոր[2]:

---

[1] Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն բաժնի պատմության ֆոնդ, Ա-Դոյի ֆոնդ, գ. 839/195 (դ), թ. 30:
[2] Арутюнян А. О., Кавказский фронт 1914-1917 гг., Ереван, 1971, с. 354.

Պ. Լևոնյանը, որը իրավաբան էր, մինչև Հայկական II կամավորական խմբի համհարզ նշանակվելը, իր մասնագիտությամբ պաշտոնավարել է Պետրոգրադի քաղաքապետարանում: Պ. Լևոնյանը 1915 թ. մայիսի 1-ին ազատվում է համհարզի պարտականությունները կատարելուց՝ Վանի ժամանակավոր վարչությունում պաշտոնավարելու համար:

Արարատյան գնդի կամավորներից ոմանք նշանակվում են գավառների և գավառակների պետերի օգնականներ (տեղակալներ) և թարգմանիչներ: Նշենք, որ նահանգապետարանի աշխատակիցների համար կազմակերպվում են ռուսերեն լեզվի դասընթացներ:

Վան քաղաքում և նահանգում բնակչության բուժօգնությունը կազմակերպելու համար ժամանում են բժիշկներ Արտաշես Բաբալյանը և Համազասպ Օհանջանյանը: Վերջինս Արամի խնդրանքով, միաժամանակ անվճար, հանդիսանում էր դատական բժիշկ:

Նահանգապետարանն ուներ բազմաթիվ առաջնահերթ խնդիրներ.

1. Ազատագրված գավառներում և գավառակներում իշխանական մարմինների հիմնումը:

2. Գաղթականների տեղաբաշխումն իրենց բնակավայրերում:

3. Բնակչության բուժսպասարկման ապահովումը:

4. Գյուղատնտեսական աշխատանքների վերսկսումը: Գյուղացիներին անհրաժեշտ երկրագործական գործիքներով, սերմացուով և լծկաններով ապահովելը:

5. Իրենց հայրենի օջախները վերադարձած բնակչության կյանքի և գույքի ապահովումը:

6. Հողային և գույքային այլ սեփականության հետ կապված խնդիրների լուծումը:

7. Քրդերի և թուրքերի կողմից լքված բնակավայրերի, գույքի, անասունների և ցանքսերի տնօրինման հետ կապված խնդիրների արագ լուծումը:

8. Ռուսական հրամանատարության հետ արագ կապի հաստատումը:

9. Զենքի օրինականցման հետ կապված խնդիրների լուծումը:

10. Գրագետ գործավարության կազմակերպումը:

11. Թուրք-քրդական հարձակումներից պաշտպանվելու, ներքին կարգուկանոն ապահովելու նպատակով ոստիկանության կազմակերպումը և ապահովումը անհրաժեշտ քանակությամբ զենքով և զինամթերքով:

12. Ռուսական զորամասերի և հայ կամավորների պարենային ապահովումը և այլն:

Վանի նահանգապետության մարմիններում ընդգրկվում են հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները՝ անկախ սոցիալական ծագումից և կուսակցական պատկանելիությունից: Փաստորեն, XVIII դարում Սյունիքի և Արցախի հայկական իշխանությունների կորստից հետո հայ ժողովուրդը բացառիկ հնարավորություն է ստանում դնել իր անկախ պետականության վերականգնման հիմքը: Եվ այդ պետականության սաղմը ստեղծելու պատիվը պատկանում է հայ մտավորականությանը՝ Արամ Մանուկյանի գլխավորությամբ:

Ա. Մանուկյանի ապակուսակցական կադրային քաղաքականության մասին վկայում են հետևյալ փաստերը: Այսպես, նահանգապետի դիվանապետը Արտակ Դարբինյանն էր (նախկին

արմենական)՝ սահմանադիր-ռամկավար կուսակցության անդամ: ՍԴՀԿ անդամ Հրանտ Գալիկյանին վստահվեց դատախազի պաշտոնը: Վանի ոստիկանապետ է նշանակվում ՀՅԴ անդամ Վահան Փափազյանը, իսկ նրա օգնականն էր (տեղակալը) սահմանադիր-ռամկավար Ղևոնդ Խանջյանը: Այգեստանի Զինվորական մարմնի ղեկավար, իր քաջությամբ հայտնի սահմանադիր-ռամկավար Արմենակ Եկարյանին վստահվում է գավառային ոստիկանության «ղեկավար կազմակերպիչ-քննիչի» պաշտոնը[3]: Այնուամենայնիվ, կադրային նշանակումներում գերակշռում էին ՀՅԴ անդամները, ինչը բացատրվում է ոչ թե նրանց կուսակցական պատկանելիությամբ, այլ քաղաքում և նահանգում ՀՅԴ կուսակցության գերակշռությամբ: Նույնիսկ նման պայմաններում Ա. Մանուկյանն աշխատում էր, որպեսզի կառավարման մարիններում ընդգրկվեն բոլոր գիտակ մարդիկ, այդ թվում՝ այլ կուսակցությունների անդամները: Նրանց նշանակում էին ոչ թե երկրորդական, այլ կարևոր պաշտոններում, որը հստակ երևում է վերը նշվածներից: Եվ պատահական չէ, որ Ա. Մանուկյանի ժամանակակիցը՝ Վարազդատ Տերոյանը Արամին բնորոշել է որպես «Վանի հասարակական հսկա»[4]:

Հարկ ենք համարում նշել, որ նահանգապետությունը ստեղծվում է բացառիկ ծանր պայմաններում: 1914 թ. սեպտեմբերից սկսած և հատկապես 1915 թ. սկզբներին օրհասական դրություն էր ստեղծվել Վանի նահանգում: Պատերազմական զանազան

---

[3] «Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թվականի մայիսի 8 – հուլիսի 17): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ. Օ. Սահակյանի, Երևան, 2008, էջ 44:

[4] Տերոյան Վ., Գիտական և հասարակական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյանի, հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյանը, Երևան, 2006, էջ 93:

պարհակներն ու հարկերը, տղամարդկանց մի մասի բանակ զորակոչվելը, թուրք-քրդական հարձակումները խախտել էին հայ բնակչության բնականոն կյանքը: Հայ գյուղացին չէր հասցրել ավարտել գյուղատնտեսական աշխատանքները, երբ ենթարկվեց երիտթուրք ջարդարարների կողմից կազմակերպված ցեղասպանությանը: Այդ հարձակումների, թալանի և սպանությունների հետևանքով մեծապես տուժել էր ոչ միայն հայ, այլև ասորի բնակչությունը:

Վան քաղաքը և նահանգի զգալի մասը գրավելուց հետո ռուսական Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկին դիմում է Թավրիզում ռուսական գլխավոր հյուպատոս Բելյաևին՝ խնդրելով Վանում հյուպատոս նշանակել, որպեսզի վերջինս տեղում ներկայացնի ռուսական շահերը: 1915 թ. մայիսի 27-ի N 735 հեռագրում Բելյաևը հայտնում է, որ նրա խնդրանքը մերժվել է Գլխավոր հրամանատար Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի կողմից, քանի որ այդ տարածքները գրավված են ռուսական զորքերի կողմից[5]: Սա նշանակում է, որ պատերազմի ավարտից հետո ռուսական կառավարությունը մտադիր չէր Վանը և համանուն նահանգը վերադարձնել Թուրքիային:

Ռուսական կառավարության վերաբերմունքը հայկական նահանգապետության նկատմամբ երկակի էր: Այս խնդրում կար երկու մոտեցում: Առաջինը ներկայացնում էր կենտրոնական իշխանությունը՝ կայսր Նիկոլայ II-ը, նրա անմիջական շրջապատը, ծայրահեղ միապետական հայացքներ ունեցող կառավարության, Պետական դումայի անդամների և բարձրագույն հրամանատարության մի մասը: Նրանք կտրականապես դեմ էին որևէ ազգային

---

[5] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1168, ց. 1, գ. 216, թ. 51:

փոքրամասնությանը, այդ թվում՝ հայերին, ինքնավարություն տալուն: Ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից ծրագրեր էին մշակվում Թուրքիայից գրավված տարածքները գաղութացնելու համար: Այս ուղղության ներկայացուցիչներն իրենց ծրագրերն իրականացնելու համար զանազան արհեստական պատնեշներ էին հարուցում արևմտահայ գաղթականներին հայրենի բնակավայրերը վերադառնալու և բնականոն աշխատանքներ սկսելու համար: Քայլեր էին կատարվում Արևմտյան Հայաստանը ռուս բնակչությամբ վերաբնակեցնելու համար:

Երկրորդ՝ չափավոր ուղղությունը ներկայացնում էր Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը: Հարկավ, նա միապետական կարգի ջերմ կողմնակիցը և պաշտպանն էր: Փոխարքան, համաձայն լինելով Արևմտյան Հայաստանի գաղութացմանը և ռուսների կողմից վերաբնակեցմանը, միաժամանակ գիտակցում էր, որ առանց տեղական՝ հայ բնակչության, հնարավոր չէ իրականացնել նշված ծրագիրը: Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը մասնակցել էր 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին և կովկասյան լեռնականների դեմ մղված պատերազմին ու պատժիչ գործողություններին և գիտակցել էր, որ լեռնականների դեմ մղված երկարատև և արյունալի պատերազմի պատճառներից մեկն էլ այն էր, որ ռուսները չունեին տեղի բնակչության աջակցությունը: Կարելի է ենթադրել, որ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը ցանկանում էր գաղութացումն իրականացնել տեղում ունենալով հայ և մասամբ ասորի բնակչություն, որոնք, ենթարկվելով թուրք-քրդական հարձակումներին, կամա թե ակամա հարկադրված են լինելու աջակցել ռուս վերաբնակիչներին: Փոխարքան այն սակավաթիվ ռուս պետական գործիչներից էր, որը ցանկանում էր կառավարման ստորին աստիճաններում ընդգրկել նաև տեղաբնիկներին՝ գիտակցելով, որ տեղական ժողովուրդների բարքերին ու սովորույթներին ան-

ծանոթ ռուս պաշտոնյաներն ի զորու չեն լինի արդյունավետ ղեկավարել:

Վանում կազմակերպելով բացառապես հայերից կազմված տեղական իշխանություն՝ փոխարքան միանգամից մի քանի նպատակ էր հետապնդում.

1. Կառավարման մարմինների հաջող գործունեության դեպքում Կովկասյան բանակի զորամասերը կապավովվեն անհրաժեշտ պարենով, ուստի կարիք չէր լինի խորը թիկունքից տեղափոխել անհրաժեշտ սննդամթերքը:

2. Բանակի կարիքները կապահովվեր տեղական ռեսուրսներով:

3. Կովկասյան բանակն իր թիկունքում ունենում էր մատակարարման համեմատաբար զարգացած և ապահով հաղորդակցության ուղիներ, ուստի անհրաժեշտ չէր լինի թիկունքի ապահովման համար առանձնացնել զգալի թվով մարտական ուժեր:

4. Հայ բնակչությունն իր ունեցած նյութական միջոցներն ու հնարավորությունները կուղղեր Վանի հայկական իշխանության կենսագործունեությունն ապահովելու համար:

5. Դաշնակից տերություններին (հատկապես Մեծ Բրիտանիային) ցույց կտար, որ Ռուսաստանը հոգ է տանում իր կողմից նվաճված տարածքների բնակչության մասին՝ նրանց հնարավորություն տալով կառավարել (իհարկե ռուսական հսկողության ներքո) իրենց ազատագրված տարածքները:

Նորաստեղծ ժամանակավոր վարչության առջև ծառացել էին բազմաբնույթ և հրատապ խնդիրներ, որոնք անհրաժեշտ էր լուծել խիստ կարճ ժամանակում: Ինքնին հասկանալի է, որ նահանգապետարանի գործունեության ընթացքում առաջանում էին նորանոր խնդիրներ, սակայն սկզբնական փուլի հիմնախնդիրների լուծումը հնարավորություն էր ընձեռում ամուր հիմքերի վրա դնել հայկական իշխանությունը:

Նահանգապետության (թեկուզ և այն կոչվում էր ժամանակավոր վարչություն) ստեղծման լուրը ոգևորում է ողջ հայությանը: Հայ Առաքելական եկեղեցին, Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոն, հասարակական-քաղաքական այլ կազմակերպություններն իրենց ողջ ուժն ու եռանդը ներդնում են Վանի հայկական իշխանությանն օգնելու համար: 1915 թ. հունիսի 23-ին Արամ Մանուկյանը հատուկ կոչով դիմում է հայրենակիցներին օգնության խնդրանքով: Նա հայտնում է, որ էջմիածնից, Բաքվից և Թիֆլիսից շարունակում է ժամանել զանազան բնույթի և նշանակության օգնություն: Հավաքվել է 10 հազար փութ ցորեն, որի կեսը բաժանվել է բնակչությանը: Նմանապես կայրքավորներին տրվել է մոտ 10 հազար ոչխար և 3 հազարից ավելի խոշոր եղջերավոր անասուններ[6]: Արամի գտնում է, որ առավել անհրաժեշտ է բժշկասանիտարական խմբեր հավաքագրել և ուղարկել գավառները: «Աւելի սոսկալի է սուրի քաշուած Արճէշի վիճակը. հոն մօտ 5000 ժողովուրդ կայ անտէր, անիրավական և հիւանդ, և իբր աւելի հեռուն ինկած գաւառ՝ աւելի քիչ է խնամքի արժանացած»[7],- նշում էր Արամը:

Ինչպես նշում է Վ. Տերոյանը. «Կազմակերպչական տաղանդի բացակայությունը նա (Ա. Մանուկյանը – Ռ. Ս.) լրացնում էր քաշելու և կապելու մի զորավոր մագնիսականությամբ, որը նրա մեջ կուտակվում էր, և մշտապես գործում էր գործունեության այն օրերում մանավանդ, երբ նա իրավամբ հարձակվում էր մեծությունների և կուռքերի վրա, ու «պատմության շարժիչ դերը անանուն և անհիշատակ հերոսներին» տալիս»[8]:

---

[6] «Մշակ», 9 յուլիսի 1915 թ., N 147:
[7] Նույն տեղում:
[8] Տերոյան Վ., նշվ. աշխ., էջ 96:

Արամի և նրա զինակիցների համար առաջնահերթ խնդիրներից էր հայ գյուղացիությանն իրենց բնակավայրերը վերադարձնելը, որպեսզի նրանք օր առաջ սկսեն ձեռնամուխ լինել հացահատիկի բերքահավաքին: Ցորենն ու գարին անհրաժեշտ էին ոչ միայն բնակչությանը, այլև ռուսական բանակին և հայ կամավորներին: Այս և այլ պատճառներով, գավառը և նրա հոգսերն ամբողջությամբ Արամի ուշադրության կենտրոնում էին:

Արարատյան գնդի հրամանատար Վարդանի (Սարգիս Մեհրաբյան) վկայությամբ. «Լինելով Վանի նահանգապետ, նորա (Արամի – Ռ. Ս.) պարտավորությունների մեջ էր մտնում և այն, որ նա պետք է մտածեր և ամեն տեսակ օգնություն ցույց տար ռուսական զորքին, նոցա համար հաց հայթայթեր ... ճանապարհների կարգավորության մասին հոգ տաներ ...: Եվ նա ամենայն հոգատարությամբ անում էր»[9]:

Գյուղացիության վերադարձն իրենց բնակավայրերն անհրաժեշտ էր ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տեսակետից: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հնարավորություն էր ընձեռնվում վերադարձնել թուրքերի և քրդերի կողմից ժամանակի ընթացքում խլված վարելահողերն ու արոտավայրերը: Միաժամանակ, գավառ վերադարձած բազմահազար բնակչությունը թեթևացնում էր նահանգապետության հոգսը՝ նրանց կերակրելու և կացարանով ապահովելու գործում: Այժմ նահանգապետությունն իր հնարավորության սահմաններում ապահովելու էր գյուղացիներին անհրաժեշտ երկրագործական գործիքներով, տնային կենդանիներով և լծկաններով: Սակայն գյուղատնտեսական գործիքները խիստ անբավարար էին: Հայերի ողջ ունեցված-

[9] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 11, թ. 3:

քը թալանվել էր քրդերի և թուրքերի կողմից: Հատկապես չէին բավականացնում կալսիչ մեքենաները և գութանները: Այդ նպատակով Կովկաս է գործուղվում պոդպորուչիկ Գ. Ա. Կրասիլնիկովը (Կրասիլնիկյան), որը մեծահարուստ Կրասիլնիկովի որդին էր և «Ակսայ» ընկերությունը պատրաստում է 22 հնձիչ մեքենաներ[10]:

Միաժամանակ անհրաժեշտ էր ապահովել գավառներ վերադարձած բնակչության անվտանգությունը: Լեռներում շարունակում էին մնալ ջախջախված թուրքական զորամասերի գինվորներ և քրդական ցեղեր: Նրանք հարմար առիթի դեպքում հարձակումներ էին գործում հայկական, ասորական և եզդիական բնակավայրերի վրա: Ելուզակների հարձակման թիրախ էին դառնում հիմնականում այն գյուղերը, որոնք վատ էին պաշտպանված: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի զորամասերը չունեին անհրաժեշտ ուժեր, որպեսզի կարողանային չեզոքացնել հակառակորդի դիվերսիոն-հետախուզական գործողությունները: Ճիշտ է, ռուսական հրամանատարությունը ժամանակ առ ժամանակ կազմակերպում էր պատժիչ գործողություններ, սակայն դրանք ժամանակավոր էին: Ռուսների հեռանալուց հետո քրդերը վերսկսում էին հարձակումները: Չէր օգնում նաև այն հանգամանքը, որ Բայազետի ջոկատի հրամանատար գեներալ Ա. Նիկոլաևը պատանդ էր վերցրել Բերկրիի, Արճակի, Սարայի, Բաշկալեի և Նորդուզի քրդական որոշ ցեղապետերի և սպառնացել, որ հարձակումները կրկնվելու դեպքում պատանդները կգնդակահարվեն, իսկ գյուղերը կոչնչացվեն[11]:

Գավառային բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով տեղացիներից կազմակերպվում է ոստիկանություն:

---

[10] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 7:
[11] Նույն տեղում, թ. 153:

Ոստիկանները՝ նախկին գյուղացիներ էին, որոնք պետք է կազմակերպեին գավառի կամ գավառակի ինքնապաշտպանությունը: Նրանք վատ էին զինված: Ունեցած հրացանների մեծ մասը ժամանակակից չէր: Չէր բավականացնում զինամթերքը: Այսպես, 1915 թ. մայիսի 16-ին Գործոթի գավառապետ Գագիկ Թոխմախյանը գավառական դիվանին տեղեկացնում է, որ գավառի 10 -15 ոստիկաններն ի զորու չեն ապահովել բնակչության անվտանգությունը[12]: Հունիսի 24-ի դրությամբ Բերկրի գավառակում կար 8, այնինչ անհրաժեշտ էր 40 ոստիկան: Նրանք զինված էին չորս հրացանով, որոնցից մեկն էր միայն ժամանակակից[13]:

1915 թ. հուլիսի 1-ին Կարճկանի գավառակապետ Մանուկ Պետրոսյանը և ոստիկանապետ Մանուկ Մինասյանն ահազանգում են նահանգապետարան ոստիկանների թվակազմի անբավարար լինելու մասին: Նրանք հայտնում են, որ գավառակում տարածված վարակիչ հիվանդությունների հետևանքով «առողջ մարդ չի գտնվում գավառում (գավառակում–Ռ. Ս.): Իսկ առանց ոստիկանների ալ դժվար է գործ անել: Մի քանի հոգի նշանակած ենք, նրանց ձեռքում ալ զենք չկա...»[14]:

Զանիկի (Թիմար) գավառակում ոստիկանները թվով յոթն էին: Նրանք պետք է իրականացնեին 20-ից ավելի գյուղերի պաշտպանությունը: Բացի այդ, չէին բավականացնում ձիերը:

Արճեշ քաղաքից 2-3 ժամ հեռավորության վրա գտնվող Զիլանի ձորում կենտրոնացված էին մի քանի հազար քրդեր, որոնցից 700-800-ը զինված էին[15]: Ինչպես կարող էր գավառի

---

[12] Նույն տեղում, գ. 15, թ. 8:
[13] Նույն տեղում, գ. 14, մաս 2, թ. 127:
[14] Նույն տեղում, գ. 27, թ. 1:
[15] Նույն տեղում, գ. 23, թ. 14:

բնակչությունը դիմագրավեր և նույնիսկ նախահարձակ լինել, եթե հուլիսի 3-ի դրությամբ կար միայն 250 աշխատունակ տղամարդ[16]:

Ինչպես արդեն նշել ենք, գավառի պաշտպանությունն առաջնահերթ խնդիրներից էր, ուստի Ա. Մանուկյանը ջանք և միջոց չէր խնայում գյուղական բնակչության պաշտպանության համար: Ունեցած սուղ միջոցներից գավառ էին ուղարկվում զենք և զինամթերք: Այսպես, Եզդի խանեի ոստիկանության համար ուղարկվեց «Բերդան» տեսակի չորս հրացան, 400 փամփուշտ և 400 ռուբլի աշխատավարձ[17]: Նորդուզի ոստիկանության և տեղական ինքնապաշտպանական ուժերին ուղարկվեց 20 հրացան և մոտ 600 փամփուշտ[18]:

Թուրք-քրդական հարձակումները հարկադրում են գավառական իշխանություններին օգտագործել տեղական միջոցները: Նորդուզի գավառապետ Գագիկ Պետրոսյանը կազմում է ոստիկանությանն օժանդակող կամավորական ջոկատ: Առաջին հերթին հետախուզվում են շրջակա լեռները՝ հայտնաբերելու համար քրդական ավազակախմբերի տեղակայման վայրերը:

1915 թ. հունիսի 25-ի զեկուցագրում Գ. Պետրոսյանը հայտնում է, որ բնակիչներից և ոստիկաններից կազմված միացյալ ջոկատը՝ թվով 60 հոգի, որոնցից 40 զինված և 20 անզեն, բախում են ունեցել 20 զինված քրդերի հետ: Մեկ ժամ տևած մարտից հետո հակառակորդը, տալով երկու սպանված, փախուստի է դիմել:

Նորդուզի ջոկատն առաջանալով, Ռաշ լեռան մոտ մարտի է բռնվում 30 զինված քուրդ հեծյալների հետ: Կարճատև փոխ-

---

[16] «Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թվականի մայիսի 8 - հուլիսի 17): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 14:
[17] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 243, թ. 8:
[18] Նույն տեղում, գ. 9, թ. 2, գ. 19, թ. 145:

հրաձգությունից հետո, տալով մեկ սպանված և մեկ վիրավոր՝ ելուզակները ճողոպրում են: Հակառակորդը համալրում ստանալով, անցնում է հակահարձակման: Չկարողանալով դիմագրավել կրակային և թվական առավելություն ունեցող թվով 250 քրդերին, նորդուզցիները նահանջում են[19]:

1915 թ. մայիսի 30-ին Շահպաղիի գավառապետի օգնական Մինաս Օվիկյանը հայտնում է նահանգապետին, որ վեց ոստիկաններ անզեն են, ուստի խնդրում է վեց հրացան ուղարկել նրանց զինելու համար[20]:

Փաստորեն հայկական ոստիկանությունը բացի ոստիկանությանը հատուկ գործառույթներից, պետք է իրականացներ ներքին զորքերին հատուկ պարտականություններ: Նահանգապետարանը չուներ անհրաժեշտ քանակությամբ ֆինանսական միջոցներ, որպեսզի կարողանար ոստիկանությունից առանձնացնել համապատասխան ստորաբաժանումներ, որոնց հիմնական պարտակությունը կլիներ թուրք-քրդական ավազակախմբերի դեմ պայքարը: Հավանաբար Ա. Մանուկյանը հետագայում ցանկանում էր ոստիկանական ուժերի հենքի վրա ստեղծել կանոնավոր բանակի ստորաբաժանումներ: Կարծում ենք, որ նշվածի վկայությունն է հանդիսանում Ա. Եկարյանին գավառական ոստիկանության «ղեկավար կազմակերպիչ-քննիչի» պաշտոնում նշանակելը: Իսկ վերջինիս տեսչական ստուգումների արդյունքում ներկայացված հաշվետվությունում հաճախակի նշվում էր ոստիկանության աշխատակիցների համար զինվորական հրահանգիչ նշանակելու անհրաժեշտությունը: Բացի այդ, Ա. Եկարյանը գտնում էր, որ գյուղերի պաշտպանության համար, բացի ոստիկաններից, կարելի է

---

[19] Նույն տեղում, գ. 10, թ. 58:
[20] Նույն տեղում, գ. 41, թ. 28:

ընդգրկել նաև տեղացիներին, որոնցից կկազմվի աշխարհազորային և բացառապես պարեկապահակային ծառայություն իրականացնող ստորաբաժանում[21]:

Լինելով Նորդուզ գավառակում՝ Ա. Եկարյանը եզրակացրել էր, որ տեղի հայ բնակչության անվտանգությունը կարող էին ապահովել 50-60 ոստիկաններ, որոնք զսպող ազդեցություն կարող էին ունենալ լեռներում գտնվող քրդական ցեղերի համար[22]:

Ա. Եկարյանի նման համոզմունքը վիճելի է, քանի որ լեռներում գտնվող և նույնիսկ ռուսական հրամանատարությանը հպատակություն չհայտնած քրդական ցեղերը և՛ թվաքանակով, և՛ սպառազինությամբ գերազանցում էին Նորդուզի ոստիկանական ուժերին՝ թեկուզ նրանց թվաքանակը կազմեր 60 հոգի: Նման քանակությամբ ոստիկանների ներկայությունը չէր կարող զսպող դեր ունենալ: Քրդերին զսպում էր միայն ռուսական ռազմական ուժի ներկայությունը, իսկ դա էլ ժամանակի հարց էր: Քրդերը ժամանակ շահելու նպատակով բանակցում էին ռուսների և հայերի հետ: Նրանք միայն հարմար պահի էին սպասում, որպեսզի վերսկսեն իրենց ավազակային հարձակումները: Քրդերի գործողությունները կաշկանդված էին նաև կանաց, երեխաների և տնային կենդանիների պատճառով: Նրանք լավ հասկանում էին, որ լայնածավալ մարտական գործողությունների դեպքում նրանք կարող են ահռելի նյութական և մարդկային կորուստներ կրել, ուստի ժամանակավորապես ձեռնպահ էին մնում ակտիվ մարտական գործողություններից և ընտրում բանակցությունների մարտավարությունը: Այսպես, Նորդուզի շրջակա լեռներում գտնվող քրդա-

[21] Նույն տեղում, գ. 14, մաս 2, թ. 123 և շրջ.:
[22] Նույն տեղում, գ. 10, թ. 23:

կան ավազակախմբերը ժամանակ առ ժամանակ հարձակումներ են գործում բնակավայրերի վրա[23]:

Նման պայմաններում հնարավոր չէր հենվել միմիայն սակավաթիվ և վատ սպառազինված ոստիկանական ուժերի վրա: Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկին Արամին թույլատրել էր նահանգի պաշտպանության համար օգտագործել հայ կամավորական խմբերի ուժերը, որոնց մարտիկների թվաքանակը հասնում էր 5000-ի[24]: Իսկապես, մարտական զգալի փորձ ունեցող հայկական մարտական ստորաբաժանումների առկայությունը հնարավորություն էր տալիս թե ոչ հաղթել քրդական զանազան ցեղերին, գոնե լուրջ զսպող ուժ ունենալ նրանց դեմ: Սակայն հայկական կամավորական խմբերի մարտիկների զգալի մասը մշեցիներ և սասունցիներ էին, հատկապես գերակշռում էին մշեցիները, որոնք օր առաջ ցանկանում էին հասնել Մշո դաշտ և երիտթուրք ջարդարարներից փրկել իրենց հարազատներին, ուստի նրանք չէին համաձայնվի մնալ Վանի նահանգում: Բացի այդ, ռուսական հրամանատարությունը գեներալ Տրուխինի հրամանատարությամբ ստեղծել էր հատուկ ջոկատ, որի մեջ էին մտել Արարատյան գունդը և Հայկական I խումբը, որը պատրաստվում էր արշավել Մշո դաշտ:

Զենքի և զինամթերքի հետ կապված խնդիրներների լուծման եղանակներից մեկն էր՝ թույլատրել վասպուրականցիներին օրինականացնել և կրել իրենց ունեցած զենքը: Այդ նպատակի իրականացման համար կազմվում է դիմում-խնդրագիր: Քաղաքացին լրացնելով խնդրագիրը, պարտավոր էր պատճառաբանել, թե

---

[23] «Մշակ», 8 յուլիսի 1915 թ., N 146:

[24] Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 318-319: ՀԱԱ, ֆ. 57, g. 5, q. 102, թ. 44. Корсун Н. Г., Алашкертская и Хамаданская операции на Кавказском фронте мировой войны 1915 г., Москва, 1940, с. 61.

ինչ նպատակի համար է ցանկանում ստանալ զենք կրելու թույլտվությունը: Դիմումում նշվում էր անձի տարիքը, անունը, ազգանունը, բնակության վայրը, զենքի հերթական համարը և տեսակը: Եթե հիմնավորումը համոզիչ չէր, կամ էլ անձը կասկածի տեղիք էր տալիս, ապա նրա խնդրագիրը մերժվում էր:

Զենք կրելու թույլտվությունը տրվում էր հայերեն և ռուսերեն լեզուներով: Ռուսերեն տրվող թույլտվությունը վավերացվում էր Վանի կայազորի պետ, գեներալ Ա. Նիկոլաևի ստորագրությամբ և զորամասի կնիքով:

Զենքի և զինամթերքի հայթայթման հաջորդ աղբյուրը Արարատյան գունդն էր: Վերջինիս զինապահեստում կային զգալի քանակությամբ ռազմավարային հրացաններ: 1915 թ. հուլիսի 1-ին Կարճկանի գավառակապետ Մանուկ Պետրոսյանը դիմում է Վարդանին՝ խնդրելով իրենց տրամադրել ռազմավարային զենք և զինամթերք: Վարդանը պատրաստակամություն է հայտնում զենք տրամադրել՝ միայն նահանգապետ Ա. Մանուկյանի համաձայնության դեպքում[25]:

Սակայն, ինչպես երևում է Ա. Մանուկյանի տեղեկագրից, կամավորները նախընտրում էին իրենց մոտ պահել ռազմավարային զենքն ու զինամթերքը: Նրանք գերադասում էին թուրքական և ավստրիական արտադրության հրացանները փոխանակել «Մաուզեր» ատրճանակների հետ և ինչպես Արամն է նշում, «Միայն չնչին մասը թողեցին մեզ»[26]: Նշենք, որ Վանի նահանջի

---

[25] «Հայկական ոստիկանության կազմակերպումը և գործունեությունը Վանի նահանգապետության շրջանում (1915 թվականի մայիսի 8 – հուլիսի 17): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 12:

[26] Ասրյան Ա., Արամ Մանուկյանի տեղեկագիրը Վանի նահանգապետության կառավարության գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, N 2, էջ 12:

ժամանակ, ռազմավարային զենքի մեծ մասը կամավորների կողմից Վանա լիճ նետվեց:

Նահանգապետարանի կարիքների համար Թիֆլիսի Հայոց ազգային բյուրոն որոշում է «ամսական 20000 ռուբլի և 10000 միանվագ գումար սկզբնական ծախսերի համար» տրամադրել, գումարը սակայն չի օգտագործվում չափազանց ուշ ստացվելու և Վանից նահանջելու պատճառով[27]:

1915 թ. հունիսի 20-ին Վան է ժամանում Սահակ արքեպիսկոպոս Այվատյանը, որը Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի կողմից նշանակվել էր Ախթամարի կաթողիկոսական տեղապահ և էջմիածնի «Եղբայրական օգնության կենտրոնական հանձնաժողովի» ներկայացուցիչ: Սրբազանի նախագահությամբ կազմակերպվում է «Վասպուրականի Եղբայրական օգնության հանձնաժողով»: Հանձնաժողովը դիմում է կաթողիկոսին, խնդրելով օժանդակել 55 հիվանդի համար հիվանդանոց հիմնել[28]:

1915 թ. հուլիսի 6-ին Ա. Մանուկյանը թույլատրում է «Վանի հայ կանանց բարեգործական ընկերությանը կից որբախնամ մարմնին» գավառներում որբեր հավաքել: Նա համապատասխան կարգադրություններն արեց գավառապետերին[29]:

Կարևորագույն հիմնահարցերից էր գավառներում տարածված զանազան համաճարակային հիվանդությունների դեմ պայքարի կազմակերպումը: Անհրաժեշտ էր շտապ միջոցներ ձեռնարկել եթե ոչ հիվանդությունը վերացնելու, ապա գոնե տեղայնացնելու համար: Այդ նպատակով կազմակերպվում է հիվանդանոց-բուժարան Վանում, սննդակայան Արճեշում, բուժկետեր Ոստանում և

---

[27] Նույն տեղում, էջ 11:
[28] «Մշակ», 3 յուլիսի 1915թ., N 142:
[29] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 9:

Ախթամարում[30]: Միաժամանակ նախատեսվում էր Վան ուղարկել Աշտարակի բժշկասանդակայանը՝ թվով 9 հոգի[31]:

Ինքնին հասկանալի է, որ ձեռնարկված միջոցառումները բավարար չէին, սակայն որոշակի դեր ունեցան գավառներում համաճարակային հիվանդությունները որոշ չափով կասեցնելու գործում:

1915 թ. հուլիսի 8-ին ոստիկանությունը հատուկ հրամանով արգելում է Վան քաղաքի բնակիչներին առվակներում լվանալ ցանկացած իր, աղբ թափել և ջուրն օգտագործել տնային կարիքների համար[32]:

Վան քաղաքում Արամի հանձնարարությամբ քաղաքապետարանը սկսում է վերականգնել քանդված մի շարք կառույցներ, հետևել փողոցների և հրապարակների մաքրությանը: Հողով ծածկվում էին դիրքերն ու խրամատները, վերանորոգվում էին կամուրջները: Հատկապես աշխատում էին վերացնել թուրքական հրետանու և մարտական գործողությունների ընթացքում քանդված տները և այլ շենքերը: Դրա առաջնահերթությունը բացատրվում էր նրանով, որ բնակիչները, հատկապես անչափահաս երեխաները տների փլատակներից փորձում էին դուրս բերել անվնաս մնացած պատուհանների փեղկերը, դռները, գերանները և այլ իրեր: Արդյունքում տեղի էին ունենում փլուզումներ, որի հետևանքով գրանցվում էին նաև մարդկային զոհեր: Այսպես, 1915 թ. հուլիսի 8-ին երկու անչափահասներ զոհվեցին տան պատի փլուզման հետևանքով[33]: Եվ դա այն դեպքում, երբ դեռևս հունիսի 20-ին ոստիկանապետ Վ. Փափազյանը հատուկ հայտարարությամբ

[30] Ասրյան Ա., նշվ. աշխ., էջ 12:
[31] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 77:
[32] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 10, թ. 111:
[33] Նույն տեղում, գ. 63, թ. 39:

Վանի բնակչությանը զգուշացրել էր, որպեսզի հետևեն իրենց երեխաներին և թույլ չտան լքված կամ քանդված տները մտնել[34]:

Կարևոր և հիմնական հիմնահարցերից էր քրդական խնդիրը: Քրդական զանազան ցեղերի նկատմամբ ռուսական հրամանատարության որդեգրած վերաբերմունքն առաջացնում էր Վանի նահանգապետության և անձամբ Արամի առարկությունը: Նա սկզբունքորեն դեմ չէր, որ Բայազետի ջոկատի հրամանատար, Վանի կայազորի պետ գեներալ Ա. Նիկոլաևին հանձնված քրդերը վերադառնան իրենց բնակավայրերը և ազատորեն տնօրինեն իրենց գույքը, հողերը և տնային կենդանիներին: Հայկական իշխանությունը, այդ թվում բնակչությունը, որևէ խնդիր չուներ հայ և ասորի բնակավայրերի թալանին, ժողովրդի զանգվածային սպանություններին անմասնակից քրդերի վերադարձի հետ: Սակայն Արամը կտրականապես դեմ էր, որ քրդերը բնակվեն ռազմավարական նշանակություն ունեցող և ճանապարհների խաչմերուկներում գտնվող գյուղերում: Դրանով վտանգվում էին ոչ միայն հայկական և ասորական բնակավայրերի, այլև ռուսական զորքերի միջև կանոնավոր հաղորդակցվելու հնարավորությունները: Փաստորեն, ցանկացած պահի քրդերը կարող էին կտրել և իրենց հսկողության ներքո վերցնել այդ ուղիները:

1915 թ. հունիսի 26-ին Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար գեներալ Պ. Օգանովսկուն ուղղված N 1317 զեկուցագրում Արամը գեներալի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ իրենց բնակավայրերը վերադարձած քրդերի մեծամասնությունը կանայք ու երեխաներ են: Նրանց մեջ սակավ են տղամարդիկ: Տղամարդկանց մեծամասնությունը շարունակում է

[34] Նույն տեղում, գ. 10, թ. 58:

մնալ լեռներում և սպասում են հարմար պահի ռուսների վրա հարձակվելու համար: Այդ ցեղերը՝ հայդարանցի, մլանցի, շամկանցի և գրանցի, 1914 թ. դեկտեմբերին կոտորել են Բերկրիի, Արճակի, Սարայի, Բաշկալեի և Սալմաստի հայությանը: Նրանց իրականացրած ոճրագործությունների ականատեսներն են եղել ռուսական զորքերը և հայ կամավորները: Նշված ցեղերը թուրքական բանակի կազմում կռվել են ռուսական զորքերի դեմ և ջախջախվելուց հետո շտապել են հպատակվել ռուսներին: Սակայն ռուսների նահանջից հետո կրկին շարունակել են նրանց դեմ կռվել: Այդ ցեղերը 1915 թ. ապրիլին մասնակցել են Դիլմանի ճակատամարտին, սակայն պարտություն կրելուց հետո նահանջել են հարավ: Հայտնվելով ծանր դրության մեջ՝ հարկադրված են եղել կրկին հպատակվել ռուսներին՝ որպես պատանդ հանձնելով կանանց ու երեխաներին, որպեսզի գործողությունների ազատություն ունենան, բացի այդ, հնարավորություն կունենան ստանալ անհրաժեշտ պարեն և հետախուզական տեղեկություններ ռուսական զորամասերի գործողությունների և այլնի մասին[35]:

Ռուսական հրամանատարությունը, քրդերին թույլատրելով բնակվել թիկունքում, վտանգում են Վան-Զուլֆա և Վան-Իգդիր ռազմավարական նշանակություն ունեցող ճանապարհները[36]:

Արամը նշում է, որ ոճրագործների կողմից կոտորվել է 28 հազար հայ և իրեն համար խիստ դժվար կլինի զոհերի ազգականներին ետ պահել վրեժխնդրությունից[37]: Նահանգապետը ռուսա-

---

[35] Նույն տեղում, ֆ. 43, ց. 1, գ. 83, թ. 43 և շրջ.:
[36] Նույն տեղում, թ. 43: Ավելի մանրամասն տես Ասրյան Ա., Վանի նահանգապետության և ռուսական Կովկասյան բանակի հրամանատարության տեսակետները նահանգապետության տարածքում քրդերի վերաբնակեցման մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, N 1-2, էջ 31-36:
[37] ՀԱԱ, ֆ. 43, ց. 1, գ. 83, թ. 44:

կան հրամանատարության ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ 1915 թ. մայիսի 11-ին Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները պաշտոնապես հայտարարել են, որ հայերի կոտորածները և թալանն իրականացրած անձինք պատասխանատվություն են կրելու իրենց արարքների համար:

Միաժամանակ Ա. Մանուկյանն իր զարմանքն է հայտնում, որ գեներալ Ա. Նիկոլաևը, նման որոշում ընդունելով, հարկ չի համարել իրեն այդ մասին տեղեկացնել[38]:

1915 թ. հունիսի 1-ի գրությամբ գեներալ Ա. Նիկոլաևը պարզաբանում է իր N 34 հրամանը: Նա նշում է, որ ինքը հավատ չի ընծայում քրդերի անկեղծությանը: Գեներալն ընդունում է, որ քրդերը հանձնվել են, որովհետև հայտնվել են անելանելի դրության մեջ: Ռուսական հրամանատարությունը, ելնելով ստեղծված իրավիճակից, հարկադրված է եղել հավատալ քրդերի «անկեղծությանը», քանի որ ստեղծված իրադրության մեջ նախընտրելի է նման քաղաքականությունը: Միաժամանակ գեներալ Ա. Նիկոլաևը համաձայնվում է Ա. Մանուկյանի այն դիտողությանը, որ հայ բնակչության նկատմամբ ոճրագործություններ իրականացրած քրդերը պետք է կանգնեն արդարադատության առջև: Գեներալն առաջարկում էր իրեն հայտնել հանցագործների անուններ, որպեսզի նրանց հանձնի դատախազությանը[39]:

Հիմք ընդունելով գեներալ Ա. Նիկոլաևի խոստումը՝ Ա. Մանուկյանը հրահանգում է գավառապետերին տասնօրյա ժամկետում հետաքննություն կատարել ու սպառիչ և անհերքելի փաս-

---

[38] Նույն տեղում, թ. 45:
[39] Նույն տեղում, ֆ. 1267, ց. 2, գ. 133, թ. 11:

տեր հավաքել քրդերի կողմից կատարված ոճրագործությունների մասին[40]:

Այնուամենայնիվ, գեներալ Ա. Նիկոլաևը, կատարելով բարձրագույն հրամանատարության հրամանը, քրդական ցեղերին թույլատրեց վերադառնալ իրենց բնակավայրերը: Նրանց գույքի և ունեցվածքի պատասխանատու ճանաչվեց Ա. Մանուկյանը: Նահանգապետը հատուկ հրամանով ոստիկանությանը հրահանգեց պաշտպանել թուրք և քուրդ բնակչության գույքը և քաղաքացիական իրավունքները:

Ռուսական Պետական դումայի պատգամավոր, նշանավոր քաղաքական, պետական և հասարակական գործիչ Պյոտր Միլյուկովը քննադատեց ռուսական հրամանատարության որոշումը՝ թույլատրել քրդերին վերադառնալ իրենց գյուղերը[41]:

1915 թ. հունիսի 25-ին Ա. Մանուկյանը քաղաքային ոստիկանությանը հայտնում է գեներալ Ա. Նիկոլաևի հրամանի բովանդակությունը և ազատ արձակված բնակչության կյանքի և գույքի ապահովումը դնում ոստիկանության վրա: Նահանգապետի հրամանում մասնավորապես ասված էր. «Վան քաղաքի շրջանապետերի վրա եմ դնում այս կանանց (միսիոներական հաստատություններում ապաստանած – Ռ. Ս.) ապահովությունը և իրենց գույքը, հողերն ու ցանքսերն ազատորեն տիրապետելու համար»[42]:

Հունիսի 27-ին Վանի շրջանային վարչության ոստիկանապետությունը հատուկ կոչով դիմում է համաքաղաքացիներին՝ տեղեկացնելով կայազորի պետի հունիսի 22-ի հրամանի մասին: Ոստիկանությունը հայրենակիցներին հորդորում էր մարդասիրա-

---

[40] Նույն տեղում, ֆ. 242, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 32 և շրջ.:
[41] Арутюнян А. О., նշվ. աշխ., էջ 369:
[42] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 3, թ. 163:

կան վերաբերմունք ցուցաբերել «և Հայ (ընգծումը փաստաթղթինն է–Ռ. Ս.) անվան վայել անհիշաչար և վեհանձն վերաբերմունք:

Կը փութամ հայտնել նաև, որ այս հայտարարության չանսացողները կենթարկվեն ամենախիստ պատժի և պատասխանատվության»[43]:

Թուրք և քուրդ քաղաքացիական բնակչությունը գտնվում էր ռուս նշանավոր գրող Լև Տոլստոյի դստեր՝ Ալեքսանդրայի հովանավորության ներքո: Կոմսուհին կամավոր ծառայում էր Վանում տեղակայված «Համառուսաստանյան քաղաքների միության» ենթակայության ներքո գտնվող լազարեթում[44]: Ալելին, Ա. Տոլստայայի խնդրանքով նահանգապետարանը թուրք և քուրդ բնակիչների համար լրացուցիչ տրվել է 199 ոչխար[45]: Նման խնդրանքով հունիսի 8-ին Արամին էին դիմել ամերիկյան միսիոներներ Քլարենս Աշըրը և Էռենստ Յարոուն[46]: Ավելին, 1915 թ. հուլիսի 9-ին ոստիկանապետի պաշտոնակատար Ղ. Խանջյանը նահանգապետին հայտնում էր, որ, ելնելով ստեղծված իրավիճակից, թուրք և քուրդ կանանց տրվող հացի քանակը բարձրացրել է օրական մինչև հինգ փութի[47]:

Նշվածը կրկին ու կրկին գալիս է ապացուցելու այն իրողությունը, որ հայերը թուրք և քուրդ բնակչության նկատմամբ որևէ բռնարարք չեն իրականացրել:

---

[43] Նույն տեղում, գ. 10, թ. 75:
[44] Usser C. D., Knapp G. H., An American Physician in Turkey. A Narrative of Adventures in Peace and War, London, 2002, pp. 157-158.
[45] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 62, թ. 17:
[46] Նույն տեղում, գ. 1, թ. 26:
[47] Նույն տեղում, գ. 62, թ. 4:

Արամի և նահանգապետարանի առջև ծառացած հաջորդ խնդիրը ռուսական զորամասերը պարենով, փոխադրամիջոցներով և անհրաժեշտ այլ իրերով ապահովելն էր:

Ցավոք, հայկական իշխանությանը սպասվում էր տխուր վախճան: Կովկասյան 4-րդ կորպուսի զորամասերը հապճեպ, առանց որևէ լուրջ հիմքի, նահանջում են:

Վանի հայկական իշխանությանը վիճակված չէր շարունակել իր գործունեությունը: Հուլիսի 11-ին սկսվում է 4-րդ բանակային կորպուսի զորամասերի նահանջը: Դա պատճառաբանվում է օսմանյան գերակշիռ ուժերի լայնածավալ հարձակումով: Արարատյան գնդի հրամանատար Վարդանն այցելում է Բայազետի ջոկատի հրամանատար, գեներալ Ա. Նիկոլաևին՝ պարզաբանելու նահանջի հետ կապված լուրերը: Գեներալը հաստատում է նահանջի հրամանը և մերժում հայ կամավորներին հրետանի և ռադիոկայան տրամադրելու Վարդանի խնդրանքը, որպեսզի բնակչությունը և կամավորները կարողանային պաշտպանել Վանը: Ըստ ռազմական պատմաբան գեներալ Ն. Կորսունի, Նիկոլաևը մտադիր քաղաքի պաշտպանության համար թողնել հայկական հինգ դրուժինաները, «եթե նրանք ցանկանան»[48]:

Հուլիսի 14-ին Ա. Մանուկյանը դիմում է գեներալ Նիկոլաևին, խնդրելով քաղաքի պաշտպանության համար թողնել որոշակի քանակությամբ զենք, զինամթերք և հրետանի: Գեներալը նահանգապետին հավաստիացնում է, որ ռուսական բանակը մտադրություն չունի նահանջել Վանից: Նա, սակայն, Արամին խորհուրդ է տալիս կանանց ու երեխաներին տեղափոխել Կովկաս[49]:

---

[48] Корсун Н. Г., նշվ. աշխ., էջ 113:

[49] Հարությունյան Ա. Հ., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ.

Ապարդյուն անցան Արամի ջանքերը քաղաքի պաշտպանությունը կազմակերպելու համար: Խուճապը համակել էր բոլորին: Հայ բնակչության նահանջի ապահովումն իրականացնում էին հիմնականում հայ կամավորները և ռուսական որոշ զորամասեր[50]: Հուլիսի 18-ից 24-ը Վանն ամբողջությամբ դատարկվեց: Հայ գաղթականները հատկապես ծանր կորուստներ ունեցան հուլիսի 24-25-ին Բերկրիի ձորում: Քրդական հրոսակախմբերը հարձակվեցին անպաշտպան և անկազմակերպ գաղթականների վրա: Սպանվեցին 10 հազարից ավելի հայեր[51]:

Վանի հայկական իշխանությունը հայոց պետականության վերականգնման առաջին փորձն էր XVIII դարում Սյունիքում և Արցախում հայկական մելիքությունների կորստից հետո: Վասպուրականի նահանգապետության փորձն ապարդյուն չանցավ: Այն օգտագործվեց Ա. Մանուկյանի կողմից, երբ նա 1917 թ. վերջին Երևանի Հայոց ազգային խորհրդի ղեկավարն էր, 1918 թ. մայիսին Սարդարապատի հերոսամարտի կազմակերպիչներից և նույն թվականի հուլիսի 24-ից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի առաջին նախարարը:

հուլիսյան գաղթը. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2002, N 2, էջ 47-48:

[50] ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 19, թ. 158:

[51] Հարությունյան Ա. Հ., նշվ. աշխ., էջ 54:

ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՅՐԵՐԸ. ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԵՎ ՌՈՍՏՈՄ

1918 թվականին սկզբնավորված նոր ժամանակների Հայոց պետականության պատմությունը մեկ ամբողջություն է՝ ինչպես նրա քաղաքական կենսագրության անընդհատության, այնպես էլ միջազգայնորեն ճանաչված իրավունքների անժամանցելիության առումով: Առաջինի ապացույցը 1918 թվականից մինչ օրս Հայաստանում պետական ինստիտուտների գոյության փաստն է: Դրանք մեզանում առկա էին անգամ խորհրդային վարչակարգին բնորոշ սահմանափակումների պայմաններում: Իսկ ահա երկրորդի վկայությունը միջազգային պայմանագրերով Հայաստանի առաջին անկախ հանրապետությանը պատկանող տարածքների հանդեպ Հայաստանի երրորդ հանրապետության 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրում առկա՝ իրավունքների անժամանցելիության սկզբունքի ամրագրումը:

Ու քանի որ Հայաստանի Հանրապետության հիմադրումը 1918 թվականից սկիզբ առած նոր ժամանակների Հայոց պետականության քաղաքական կենսագրության սկիզբն է, ապա նրա հիմնադիրները ոչ միայն Հայաստանի առաջին հանրապետության, այլ նաև ներկա Հայոց պետականության հիմնադիր հայրերն են:

Անկախ ու ժողովրդավարական պետություն կառուցող ազգերից և ոչ մեկը սեփական պետության հիմնադիր հայրերին տրվող գնահատականը չի պայմանավորում քաղաքական վարչակարգերի ու նրանց բնորոշ գաղափարախոսությունների հանդեպ դրական կամ բացասական վերաբերմունքով: Այսպես ան-

կախ նրանից՝ հանրապետականները թե՞ դեմոկրատներն են իշխում Միացյալ Նահանգներում, նրանց առաջնորդներն իբրև այդ երկրի նախագահներ, հավասարապես խոնարհվում են ԱՄՆ հիմնադիր հայրերի՝ Ջորջ Վաշինգտոնի, Թոմաս Ջեֆերսոնի և այլոց գերեզմանների առջև: Պետականության գաղափարը քաղաքական ռեժիմի հետ նույնացնելու միտումը բնորոշ է միայն գաղափարախոսականացված պատկերացումներ ունեցող ամբողջատիրական (տոտալիտար) վարչակարգերին: Ուստի, եթե Հայաստանի երրորդ հանրապետությունն իրեն համարում է անկախ և ժողովրդավարական պետություն, ապա չի կարող առաջնորդվել մինչ օրս մեզանում համառորեն տարածվող այն թյուր պատկերացմամբ, որ 1918 թ. Հայոց պետականությունը հիմնած քաղաքական գործիչները սոսկ Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներն էին: Այս պատկերացումը հարցականի տակ է դնում Հայաստանի երրորդ հանրապետության անկախ ու ժողովրդավարական պետություն լինելու իրողությունը և, դրանով պայմանավորված ազգային-պետական շահերի ամբողջականության շրջանակներում լայն բազմակարծության ապահովման սկզբունքը:

Այդ պատճառով 1918 թվականին նոր ժամանակների Հայոց պետականությունը հիմնած Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերի քաղաքական ժառանգության մնայուն ու անընդհատ հարստացվող շերտի բացահայտումը ազգի պետական կեցության անընդհատության ու հարատևության ապահովման կարևոր նախապայմանն է:

Առկա սկզբնաղբյուրների ու հարուստ գրականության խորքային քննությունը մեզ բերում է այն եզրակացությանը, որ ներկա պետական-քաղաքական իրողությունների պայմաններում պարտավոր ենք ձերբազատվել ժամանակի հուշագիրների ու հետագա պատմաբանների կողմից Հայոց պետականության ձևավոր-

ման գործընթացը. ա) առարկայական (օբյեկտիվ) նախադրյալների հասունացման սահուն ընթացք, կամ էլ ընդհակառակը բ) պատմական դեպքերի պատահական զուգադիպություն դիտարկող՝ միակողմանի ու խիստ պարզունակ հայեցակարգերից: Այս մակերեսային, ինչպես նաև բևեռացված գնահատականների շրջանակներում, որոնք մինչ օրս իշխել են հայ պատմագրության մեջ, հնարավոր չէ բացահայտել 1918 թվականին Հայաստանի Հանրապետության ձևավորման պատճառները: Ռուսաստանյան կայսրության ողջ պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն աղետից՝ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից և Կովկասյան ճակատի փլուզումից հետո, 1918 թ. սկզբներին լիովին խաթարվել էր Հայոց պետականության ձևավորման առարկայական նախադրյալների հասունացման գործընթացը: Ստեղծվել էր մի կացություն, երբ անխուսափելի էր թվում ոչ թե Հայոց պետականության ձևավորումը, այլ Եղեռնից հետո Արևելյան Հայաստանում հաստատված արևմտահայության մնացորդացի, ինչպես նաև՝ արևելահայության ոչնչացումը:

Ուրեմն՝ օրինաչափության կամ պատահականության մասին նախորդ հեղինակների հարցադրումներն իրականում հիմնվում են կամ նախքան 1917 թ. հոկտեմբերն առկա կացության, կամ էլ՝ ընդհակառակը, Օսմանյան Թուրքիայի կողմից 1918 թ. իբր թե մեզ մատուցված 11 հազար քառակուսի կիլոմետրանոց «նվերի» մասին անհիմն վարկածի վրա:

Մինչդեռ իրականությունն այն է, որ իր ծննդյան իսկ պահից «Հայաստանի Հանրապետություն» անունը ստացած հրաշամանուկի ձևավորումը և ապա պաշտպանությունը սեփական դառը ճակատագրի հանդեպ հայ ժողովրդի հաղթանակի վկայությունն էր: 1918 թվականի սկզբներին Արևելյան Հայաստանի շուրջը ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը բացառում էր ինչպես շուտափույթ արտաքին օգնության, այնպես էլ արտաքին

թշնամու «գթասրտության» հնարավորությունները: Հայ ժողովրդին մնացել էր միայն մեկ տարբերակ՝ հաղթանակ տանել իր դառը ճակատագրի հանդեպ, կամ ոչնչանալ: Եվ հաղթանակի փաստն ինքնին «ճակատագիր» հասկացությունը տարանջատում է ճակատագրապաշտությունից (ֆատալիզմից) ու հարկադրում է փնտրել և գտնել այն իրական պատճառները, որոնք հնարավոր դարձրին ոչ միայն հայության մնացորդացի փրկությունը, այլև Հայաստանի Հանրապետության ձևավորումն ու պաշտպանությունը՝ ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը: **Իսկ դրանք թաքնված են ոչ թե արտաքին, այլ ներքին կամայինենթակայական գործոնների, այդ թվում՝ օրվա քաղաքական առաջնորդների ճշգրիտ հաշվարկի մեջ:**

Բազմիցս արձանագրվել է, որ պատմության մեջ լինում են այնպիսի պահեր, երբ այս կամ այն ազգի վերապրելու հնարավորությունն ավելի շատ կախված է լինում ոչ թե առարկայական, այլ ենթակայական գործոններից, որոնք թույլ են տալիս իրերի ու իրադարձությունների տեսականորեն հնարավոր ամենաանբարենպաստ դասավորությունից անգամ ելքեր գտնել: 1918 թ. ծանրագույն պայմաններում հնարավոր եղավ հաղթել ու վերապրել ոչ թե **համաժողովրդական ընդվզման**, այլ, Հայոց պատմությունից որպես ժառանգություն մնացած հայության քաղաքակրթական ներուժի թերևս միակ կենսունակ միջուկի՝ նրա առանձին, բացառիկ զավակների **վառ անհատականության** շնորհիվ: Հայ մարդու վառ անհատականությունն է միջնադարից նոր ժամանակները փոխանցված մեր քաղաքակրթական ներուժի չցամաքած աղբյուրը, որը 1918 թվականին մասնակիորեն սրբագրեց այն 100 տոկոսանոց պարտված դիրքը, որը մենք ստացանք Առաջին աշխարհամարտի ավարտից ուղիղ մեկ տարի առաջ՝ 1917 թվականի աշնանը: Ընդհանուր քաոսի ու հուսալքության պայմաններում այդ

անհատականությունը դրսևորվեց իբրև մարտնչող փոքրամասնության միտք, կամք և ինքնագոհություն:

Կովկասյան ճակատի փլուզման նախօրյակին 1917 թ. դեկտեմբերի 2-ին, երբ Հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաոսը ակնհայտ էր դարձրել Արևմտյան Հայաստանը ռազմակալած ռուսական բանակի հեռանալու վտանգը, Ստոկհոլմից շտապ կերպով Պետրոգրադ, իսկ այնտեղից Կովկաս վերադարձող ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմը (Ստեփան Զորյան) գրում էր. «Շուարած եմ մնացել: Հոսանքը մեզ քշում է, եւ դեռ քշելու է. աշխատենք ժայռերի չզարնուել»[1]: Նույնիսկ սեփական ուժերի ամենամեծ լարման պարագայում ժամանակի դերակատար ուժերն ու անհատները չէին կարող կանխել այդ «հոսանքը»: Դա կանխորոշված էր մի կողմից Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ղեկավարության «անբացատրելի» գիջողականության, իսկ մյուս կողմից Օսմանյան Թուրքիայի միանգամայն բացատրելի ռևանշիզմի խորքում առկա բրիտանական գաղտնի դիվանագիտության քողարկված ռեժիսուրայով: Ռուսաստանի Անդրկովկաս վերադարձի բացառման բրիտանական ստվերային քաղաքականությունն էր, որը 1918 թ. ընթացքում իրար լծորդեց կոմունիստական, իսկ իրականում լրտեսական ինտերնացիոնալի վերածված բոլշևիկյան պարտվողականության և թուրքական վիրավոր գազանի համաթուրանական զառանցանքի համատեղման խնդիրը: Թուրքական ագրեսիան դեպի Արևելք հունավորելու հարցում 1918 թ. ձևավորվել էր թերևս ոչ մի տեղ չձևակերպված, բայց փաստացի կերպով գործող դաշինք Կարմիր բանակի ղեկավարության (Տրոցկի), Պարսկաստանում հայտնված բրիտանական զորքերի հրամանատարության (Դենստերվիլ) և, իհարկե, թուրք-գերմանական խմբավորման միջև: Իսկ վերջինիս ներսում առանձին թիրախներ (Ղարաքիլիսա, Բաքու և այլն) վերահսկելու հար-

[1] «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», Պէյրութ, 1979, էջ 190:

ցում տարածաշրջանային մակարդակի վրա առկա տարածայնությունները կայզերական Գերմանիայի կողմից շարունակաբար ստորադասվում էին համաշխարհային պատերազմին թուրքական դիվիզիաների մինչև վերջ մասնակցության խնդրին: Այսինքն՝ Այսրկովկասում շահեր և հնարավորություններ ունեցող արտաքին խաղացողներից և ո՛չ մեկը շահագրգռված չէր խորտակվող հայության փրկությամբ:

Արդյունքում՝ ակնհայտ էր, որ 1918 թ. սպասվող անբարենպաստ կացության միակ ճշգրիտ գնահատականը 1917 թվականի դեկտեմբերի վերջերին Երևանի Ազգային խորհրդի հիմքի վրա ստեղծված Հատուկ կոմիտեի գլուխ անցած Ռոստոմի աշակերտի՝ Արամ Մանուկյանի «Մենակ ենք եւ պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛ ճակատը պաշտպանելու եւ թէ՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»[2] բանաձևն էր և նրանից բխող քաղաքական հաշվարկը:

Այն հիմնվում էր Հայկական կորպուսի հուսահատ դիմադրությունը և Երևանի ազգային խորհրդի՝ ժամանակ ձգելու քաղաքականությունը, Թիֆլիսի (Կենտրոնական) ազգային խորհրդի՝ թուրք-գերմանական խմբավորման հանդեպ հաշտվողական և Բաքվի ազգային խորհրդի անգիջում քաղաքականության զույգ նժարներով հավասարակշռելու մտադրության վրա: Այդ պատճառով, Արևմտյան ու Հարավ-արևմտյան ռազմաճակատներից վերադարձող ու Բաքվում կուտակվող հայ զինվորականության միջոցով Հայկական երկրորդ ճակատը բացելու ռիսկային, բայց այլընտրանք չունեցող հաշվարկը քիչ անց ստիպում էր Արամ Մանուկյանին՝ բոլշևիկ Պ. Մակինցյանին մի երկտող տալով, ուղարկել Թիֆլիս Ռուբենի (Մ. Տեր-Մինասյան) մոտ, որպեսզի նրան անցկացնի Ռուսաստան՝ խորհրդային իշխանությունների հետ կապվելու համար. «Պէտք է մենք ամէն կերպ միանանք

---

[2] «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1964, N 4, էջ 70:

Ռոստոմին (Բագուին): ... Մեր մէջքը թէ ամուր չլինի, կը կրկնուի 1915 թիւը»[3],- գրում էր Արամ Մանուկյանը:

Այս պայմաններում Արամի դիկտատուրան՝ Երևանում 1917 թ. դեկտեմբերից և Պետրոգրադից Ցարիցինի վրայով Բաքու ժամանած ու 1918 թ. մարտի 3-ից հայկական երկրորդ ճակատի ձևավորման գործը սկսած Ռոստոմի ներկայությունը՝ Բաքվում, այն առանցքային քաղաքական իրողություններն էին, որոնց շուրջը 1918 թ. համախմբվեցին ազգի լավագույն զավակները: Դրանք և՛ անհատական և՛ կուսակցական դիկտատուրաներ էին, որոնք քողարկվում էին Երևանի ազգային խորհրդի՝ բացահայտ և Բաքվի ազգային խորհրդի՝ բոլշևիկյան Կոմունայով միջնորդավորված իշխանությամբ: Իսկ ամենախորքում դա ՀՅԴ մարտական ուժերի և հայ զինվորականության միջին ու ստորին օղակների վրա հենվող երկու անհատների՝ Արամ Մանուկյանի ու Ռոստոմի, օրհասական դրության պատճառով որևէ մեկի կողմից չվիճարկվող ոչ թե իրավունքների, այլ պատասխանատվության արտահայտությունն էր:

Թուրքական բանակի 1918 թ. փետրվարից սկսած հարձակման պայմաններում, երբ հակառակորդը կիրառում էր պարբերաբար զինադադարի արձանագրություններ ստորագրելու և դրանք նույն պարբերականությամբ խախտելու՝ Երզնկայով ու Էրզրումով սկսված և Կարսով ու Ալեքսանդրապոլով շարունակված «հաջորդական ցատկերի» մարտավարությունը, իսկ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը դադարել էր լինել միասնական ու հստակ քաղաքական կամքի կենտրոն, ոչ միայն Հայաստանի անկախության, այլև հայ ժողովրդի գոյության հարցը իրականում վճռվեց Երևանի և ապա Բաքվի ազգային խորհուրդները վերահսկող այս երկու վառ անհատականությունների գլխավորած

[3] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Պէյրութ, 1979, էջ 143:

1918 թ. փետրվար-մայիսյան և ապա՝ հունիս-սեպտեմբերյան երկու գոյամարտերի միջոցով:

Դրանցից առաջինը՝ Մայիսյան հերոսամարտերը, իսկ իրականում՝ իրար հետ փոխկապակցված Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի ճակատների միասնական դիմադրությունը կամ գոյամարտը ոչ թե 1918 թ. մայիսի վերջերին տեղի ունեցած «համաժողովրդական ընդվզում» էր, այլ հայ զինվորականության առանձին վառ անհատականությունների գիտակցված ինքնազոհության գնով «մեկ ցատկով» Երևանն ու նրա նահանգը գրավելու Թուրքիայի մտադրության ձախողում: Այդ գիտակցված ինքնազոհությանը գնացած անհատները (Սարդարապատում՝ 5-րդ գնդի Մահապարտները, Բաշ-Ապարանի ճակատում, Քուչակ գյուղի մոտ Զեմլյակը (Նանումյան) ու մայիս 28-ի առավոտյան խելահեղ գրոհով անհուսալի դրությունը փրկած նրա հեծելագունդը, Ղարաքիլիսայում՝ Գուրգեն Տեր-Մովսիսյանն ու նրա օրինակին հետևած սպաները) մարմնավորում էին սեփական կյանքի գնով ճակատագրի հանդեպ հաղթանակ արձանագրած հայի վառ անհատականությունը: Արամ Մանուկյանի՝ քաղաքական, Մովսես Սիլիկյանի, Դրաստամատ Կանայանի և գնդապետներ Ն. Ղորղանյանի ու Ս. Սամարցյանի՝ զինվորական ղեկավարությամբ նրանց կատարած իրական սխրանքների պատմությունը ոչ միայն դեռևս չի գրվել, այլև Հայաստանի երրորդ Հանրապետության օրոք ևս շարունակում է կեղծվել՝ «համաժողովրդական ընդվզման» մասին մտակաղապարի, կամ էլ՝ Ապարանի գյուղացիության սխրանքների մասին ժողովրդական բանահյուսության վրա հիմնվող շինծու տոնախմբությունների կազմակերպման միջոցով:

Մինչդեռ Մայիսյան գոյամարտն իրականում մարտավարական հաղթանակների (Սարդարապատ, Բաշ-Ապարան) և մարտավարական պարտությունների (Ալեքսանդրապոլ, Ղարաքիլիսա) շարք էր, որը պայմանավորեց սոսկ իր հաջորդ «ցատկին»

նախապատրաստվելու համար Թուրքիայի ստորագրած 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի ծնունդը: Ակնհայտ էր, որ այն կրկին թղթի կտորի է վերածվելու, քանզի դրանից հետո Բաթումի պայմանագրրի համաձայն Երևանի մատույցներում Նորագավիթում, հաստատված թուրքական զորքերը չէին հրաժարվել Երևանը գրավելու իրենց մտադրությունից: Ու մինչ Արամի խոսքերով «մեր վերջին ամրոցները» հանդիսացող Ուչ-Թափալարի (ներկայումս՝ Եռաբլուր) վրա կանգնած Հայկական կորպուսի ուժերի դիմաց հակառակորդը շարունակում էր իր զորքերի կուտակումը՝ հասկացնելով, որ Բաթումի պայմանագիրը նույնպես ոչինչ է իր համար, 1918 թ. մայիս-հունիս ամիսներին դե-յուրե Բաքվի կոմունայի բանակին, իսկ դե-ֆակտո Բաքվի Հայոց ազգային խորհրդին և անձամբ Ռոստոմին ենթարկվող 15 հազարանոց հայկական զինուժն իր հերթին ճնշել էր Գանձակի մուսավաթականներին, գրավել Բաքվի նահանգի գրեթե ողջ տարածքն ու մոտենում էր Եվլախ կայարանի մատույցներին: Ստացվում էր, որ Մայիսյան գոյամարտի ու Բաքվի հայկական զինուժի մայիս-հունիսյան առաջխաղացման արդյունքում ձևավորվում է ուժերի մի նոր դասավորություն, որի ռեալ հարաբերակցությունը, վերջիվերջո, հանգեցնելու էր նրան, որ Կոմունայի միջոցով Ռուսաստանից որոշակի քանակությամբ զենք ու զինամթերք ստացող հայկական ուժերը տիրանալու էին ոչ միայն Բաքվին, այլև Գանձակին ու Ղարաբաղին, իսկ ահա թուրքերը՝ աքցանի մեջ հայտնված Երևանին ու նրա շրջակա գավառներին: Հենց սա էր այն ակնհայտ սպառնալիք-մարտահրավերը, որը համաթուրանական ծրագրերով տարված Թալեաթին հարկադրեց ժամանակավորապես հաշտվել Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման փաստի հետ և դժվարությամբ կոտրելով Երևանի վրա նոր գրոհի կողմնակից էնվերի դիմադրությունը՝ օգնություն ուղարկել Իրանի վրայով Գանձակ հասած Նուրի փաշային: Ինչպես այդ

ճանապարհով (Արաքսի վարարման պատճառով թուրքական զորքի նշանակալի մասը մնացել էր Սուրմալուի գավառում), այնպես էլ Ղարաքիլիսա-Դիլիջան գծով թուրքական հրամանատարությունը հունիսից սկսել էր իր հիմնական ուժերը կենտրոնացնել Բաքվի դեմ: Եվ առաջին անհաջողություններից հետո 1918 թ. հուլիսին, թուրքական հրամանատարությունը ստիպված էր հրաժարվել Բաթումի պայմանագիրը նույնպես խախտելու և Երևանը գրավելու իր ակնհայտ մտադրությունից: Նման պայմաններում Արարատյան դաշտավայրի հարավով ու Գյումրի-Ղարաքիլիսա-Դիլիջան ուղղություններով վիշապի նման Երևանի շուրջը փաթաթված թուրքական բանակի արշավանքը դեպի Գանձակ ու Եվլախ իր վերջնանպատակում նախատեսում էր Երևանի վրա գրոհը հետաձգել մինչև Բաքվի գրավման պահը:

Դրանից բխող եզրակացությունն ակնհայտ է՝ Հայաստանի Հանրապետության ծնունդն ու փրկությունը ո՛չ առարկայական գործոնների բարենպաստ դասավորության արդյունք էր և ոչ էլ հակառակորդի նվերը, այլ ուժերի ռեալ հարաբերակցությունը և ստեղծված նոր իրավիճակը հաշվի առնելու միջոցով անհավասար գոյամարտերի կազմակերպումը երկու ձեռքով խաղի հետ զուգորդելու՝ «Երևան-Բաքու» կամ «Արամ-Ռոստոմ» դերաբաշխումների արդյունքը:

Պայմանագրեր ստորագրելու, բայց դրանք չհարգելու թուրքական դաժան իրապաշտությունը չեզոքացրած այս քաղաքական հնարքն իր արդիականությունը պահպանում է նաև մեր օրերում, ուստի արժանի է ավելի մանրամասն քննության: Մինչ օրս ուսումնասիրողներից որևէ մեկը չի կարողացել բացատրել, թե ինչո՞ւ Երևանի շուրջը կենտրոնացած Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Թ. Նազարբեկյանի օրագրում 1918 թ. հուլիսի 10-ին ռուսերենով կատարված «Թուրքերը բացահայտորեն ասում են, որ նրանք, չնայած հաշտությանը, գրավելու են Երիվա-

նը»[4] գրառումը 1918 թ. հուլիսի երկրորդ կեսին Բաքվի ուղղությամբ թուրքական բանակի լայնածավալ հարձակման պայմաններում փոխարինվեց ՀՀ մայրաքաղաքի շուրջը ռազմաքաղաքական իրավիճակի լիցքաթափման մասին հուսադրող տեղեկություններով:

Պատճառն այն է, որ հարձակման անցած Բաքվի հայկական զինուժը հակառակորդին պարտադրել էր իր վրա կենտրոնացնել թուրքական բանակի հիմնական խմբավորումները: Բայց դրանից հետո էլ իր ռազմավարական մտածողության ողջ ուժով գիտակցելով, որ Երևանին սպառնացող վտանգը կանխելու միակ տարբերակը Բաթումի պայմանագրի 11-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության ստանձնած Բաքվից հայկական զինուժը դուրս բերելու պարտավորությունը կատարելուց հրաժարվելն է, Բաքվի հերոսամարտի առաջնորդ Ռոստոմը ՀՅԴ Բաքվի շրջանային ժողովում անցկացրեց կռիվը մինչև վերջ շարունակելու որոշումը: Այսինքն Ռոստոմը (ի հակադրություն Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ, նույնպես դաշնակցական Աբրահամ Գյուլխանդանյանի, որը միամտաբար պնդում էր, թե քանի որ հայերն ինքնորոշվել են Երևանում, ուրեմն նույնն անելու հնարավորություն պետք է տալ ադրբեջանցիներին Բաքվում) շարունակում էր թուրքական ուխտադրուժ քաղաքականությունը կասեցնելու միակ տարբերակը՝ Արամի հետ «երկու ձեռքով» խաղալու մարտավարությունը: Այսպիսով՝ Երևանում գտնվող և առերևույթ Բաթումի պայմանագիրը հարգող Արամը և Բաքվում գտնվող, սակայն քաղաքից հայկական ուժերի դուրսբերման՝ Բաթումի պայմանագրով նախատեսվող ՀՀ պարտավորության կատարումից հրաժարվող Ռոստոմը, ձևով հակադրվելով իրար, բովանդակությամբ նույն խաղն էին առաջ տանում: Նրանք

[4] Հայկական կորպուսը թուրքական զորքի դեմ 1917-1918 թթ.: Գեներալ Ֆ. Նազարբեկովի հուշերը. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, N 3, էջ 150:

գիտակցում էին, որ որքան ձգձգվի Բաքվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը: Բաքվի ՀՅԴ կազմակերպության շրջանային ժողովում Ռոստոմը հայտարարում էր. «Վաղը հենց որ բացուեն Բագուի դռները Ադրբէյջանի բանակի առջեւ եւ տաճիկները տեղաւորուեն Բագում, Խան-Խոյսկու ամբոխը եւ տաճկական բանակը, ձեռք ձեռքի տուած, պիտի սրբեն նաեւ Բագուի եւ Գանձակի հայութիւնը, ապա պիտի բարձրանան Ղարաբաղ, պիտի իջնեն Զանգեզուր եւ Երեւանը ոտնատակ պիտի տան»[5]: Հետագա իրադարձություններն ընթացան Ռոստոմի մատնանշած, բայց արդեն բավականին ուշացած սցենարով, քանի որ 1918 թ. հուլիսի 31-օգոստոսի 5-ի վեցօրյա անհավասար ճակատամարտում Բաքվի հայկական զինուժը պարտության մատնեց թուրքական բանակին՝ մինչև սեպտեմբերի 15-ը հետաձգելով քաղաքի գրավումը:

Այս ճակատամարտում վճռական դեր խաղաց մինչ այդ Բաքու քաղաքի հյուսիս-արևելքը գրաված և Բիբի-էյբաթից քաղաքամեջ Բայիլով ներխուժած թշնամու թիկունքը մահապարտներ նետելու և երկու կողմից մահապարտ զինվորների ու հայ սպաների փոխհամաձայնեցված հակագրոհ կազմակերպելու հնարքը, որը վերածվեց թշնամուն հասցված «դաշույնային» (ռուսերեն՝ կինժալնի) հարվածի: Միայն Ռոստոմի անձնական հրամանին ենթարկվելով՝ ինքնազոհության գնացած ու թշնամու թիկունքն անցած Թադևոս Ամիրյանի (Գիժ Թադոս) 31 հոգանոց մահապարտների հեծյալ ջոկատի և հերոս սպաներ Դովլաթյանի, Խոջաէյնաթյանի, Ստեփանյանի և այլոց անձնական սխրանքը թույլ տվեց հաղթել1918 թ. հուլիսի 31 – օգոստոսի 5-ի վեցօրյա

---

[5] Ալչուջեան Ա., Ռոստոմը Բագուում, «Ռոստոմ. մահուան վաթսունամեակին առթիւ», էջ 326:

ճակատամարտում և շահել մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը մնացած այդքան թանկագին ժամանակը:

Դա էր պատճառը, որ անգլիացիների ժամանելուց և ապա հեռանալուց հետո անխուսափելի դարձած Բաքվի պաշտպանական համակարգի փլուզումից ու սեպտեմբերի 15-ին քաղաքը թշնամու ձեռքն անցնելուց տառացիորեն մեկ շաբաթ անց սեպտեմբերի 20-ին, Աղդամում հաստատված թուրքական առաջին դիվիզիայի հրամանատար Զեմիլ Զեհիդ բեյը Աղդամի ու Շուշիի միջև ընկած հայկական գյուղերից պահանջեց զինաթափվել ու ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Թուրքական բանակն այս հատվածում (հիմնականում՝ հոկտեմբեր ամսին), հասցրեց զինաթափել ռազմավարական նշանակություն ունեցող 24 հայկական գյուղեր՝ խլելով 715 մոսին և 406 բերդան հրացաններ[6]. հանգամանք, որը հետագայում՝ 1920 թ. գարնանը, ճակատագրական դեր խաղաց Ասկերանի կիրճը պաշտպանող Դալի Ղազարի (Բադալբյոխվյան) գլխավորած գրեթե անզեն ուժերի անհաջողության և վերջինիս հերոսական նահատակության մեջ:

Բայց Ղարաբաղի տարածքի մի մասի մասնակի ու ժամանակավոր ռազմակալումից հետո Ռոստոմի մատնանշած հաջորդ թիրախը Զանգեզուրը և իհարկե, թուրքական բանակի վերջնանպատակ Երևանն այլևս հնարավոր չէր գրավել: Անտանտի զորքերի և նրանց առաջին շարքերում մարտնչող Արևելյան (Հայկական) լեգեոնի հարվածներից սեպտեմբերի վերջին տասնօրյակում փլուզվեց թուրքական բանակի Պաղեստինի ճակատը, իսկ հոկտեմբերին Թուրքիան ճանաչեց Առաջին համաշխարհային պատերազմում կրած իր պարտությունը : Այդ պատճառով 1918 թ. նոյեմբերին Զանգեզուրի վրա հարձակվեցին արդեն ոչ թե թուրքական բանակի կանոնավոր դիվիզիաները, այլ սոսկ թուրք սպա-

---

[6] Տես «Հայերի կոտորածները Բաքվի եվ Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Երևան, 2003, էջ 189-190:

ներով համալրված, Ռոստոմի բնորոշմամբ՝ «Խան-Խոյսկու ամբոխը»:

Այսպիսով՝ Արամ-Ռոստոմ տանդեմը համապատասխանաբար՝ Երևանում ու Բաքվում, արտաքուստ հակադրվելով իրար, հրաշալի կերպով գիտակցեց ու փայլուն կերպով կանխեց թղթի վրա հաշտության արձանագրություններ ստորագրելու և ապա «հաջորդ ցատկը» կատարելու Թուրքիայի ավանդական (և այսօր էլ շարունակվող) քաղաքականության էությունն ու նպատակները: Գիտակցեց ու կանխեց թուրք-ադրբեջանական աքցանի մեջ Հայաստանը խեղդելու այն ծրագիրը, որը բացահայտվեց միայն Բաքուն գրավելուց հետո՝ 1918 թ. սեպտեմբերին թուրքական «Ենի գյուն» թերթում տպագրված «Միացյալ» կամ «Մեծ Ադրբեջանի» քարտեզի տեսքով[7]:

Դրանով իսկ այս երկու վառ անհատականությունները՝ Արամ Մանուկյանը և Ստեփան Զորյանը (Ռոստոմը) Հայոց պետականության հիմնադրման(1918 թ. փետրվար-մայիս) և պաշտպանության (1918 թ. հունիս-սեպտեմբեր) համար երկու անհավասար գոյամարտերի ղեկավարման միջոցով դարձան Արևելյան Հայաստանը ոչնչացնելու նպատակադրումով առաջնորդվող Թուրքիայի «հաջորդական ցատկերի» քաղաքականությունը չեզոքացրած ռազմական ու դիվանագիտական քայլերի կազմակերպիչներն ու համադրողները՝ ավերակներից ու մոխրից ծնունդ առած Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերը:

Խորհրդանշական է, որ Բաքվի անկումից հետո էլ Իրանից ուղարկվող հայկական ուժերի միջոցով թուրքական բանակին կասպիականի ափերին կաշկանդող գործողությունների կազմակերպմամբ զբաղված Ռոստոմն այդպես էլ չհասցրեց սեփական աչքերով տեսնել անկախ Հայաստանի մայրաքաղաք Երևանը,

---

[7] Տես «Հորիզոն», Թիֆլիս, 30 հոկտեմբերի 1918, N 222, տե՛ս նաև՝ Խուդինյան Գ., Մի ուշագրավ քարտեզ, «Երևանի համալսարան» գիտահանրամատչելի հանդես, 1989, N 3, էջ 37-38:

որի անունը որպես նվիրական նպատակ, դարձավ Բաքվի վրայով Թիֆլիս վերադարձից առաջ գրած իր կյանքում վերջին նամակի վերջին բառը. «...Բագու-Թիֆլիս-Երեւան»:[8]

Հատկանշական է նաև, որ 1919 թ. հունվարին Երևանում բծավոր տիֆով վարակված նրա աշակերտը Արամ Մանուկյանը, կյանքին հրաժեշտի խոսքերում համառորեն իր շորերն էր պահանջում, որպեսզի հագնվի արդեն Թիֆլիս հասած Ռոստոմին հանդիպելու համար, մինչդեռ Ռոստոմն այլևս չկա ...: Վերջինս, նույն հիվանդությամբ վարակված, շուտով նաև թոքերի բորբոքում էր ստացել, որովհետև վատառողջ վիճակում շարունակել էր այցելել Թիֆլիսում գտնվող և այնտեղից Փարիզ խաղաղության խորհրդաժողովին մեկնող ՀՀ պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանի մոտ կազմակերպվող ժողովներին:

1919 թ. հունվարին (ընդամենը 11 օրվա տարբերությամբ), Թիֆլիսում՝ Ռոստոմի և Երևանում Արամի նման վառ անհատականությունների կորուստը ճակատագրական դեր խաղաց Հայաստանի առաջին հանրապետության համար, քանզի նրանց նման հզոր կամքի, ռազմավարական մտածողության, ահռելի հեղինակության ու մեծ հմայքի տեր անհատականություններ ՀՀ ղեկավարության մեջ հետագայում այդպես էլ չգտնվեցին:

Կարծում ենք, պետական ու քաղաքական գործիչների ներկա սերնդի համար որպես պատգամ են հնչում ոչ միայն Արամի «Մենակ ենք» հայտնի եզրահանգումը, այլև Ռոստոմի համառ պնդումն այն մասին, որ չկա առանձին վերցրած Թուրքիայի կամ Ադրբեջանի քաղաքականություն. կա միայն ու միայն թուրքական քաղաքականություն, քանզի «Ադրբէյջանի կառավարութեան թիկունքում կանգնած է Տաճկաստանը: Նա է որ գծում է ադրբէյջանցիների անելիքը, իսկ Տաճկաստանի նպատակը մեր ազգային հարցի տեսակէտից պարզ է»[9]:

---

[8] «Ռոստոմ. նամականի, մահուան ութսունամեակին առթիւ», Պէյրութ, 1999, էջ 650:

[9] Ալչուջեան Ա., նշվ. աշխ., էջ 325:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Հայ ժողովրդի նշանավոր մշակութային, ռազմական, քաղաքական ու պետական գործիչների շարքում հայոց նորագույն պատմության մեջ իր կատարած դերով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Արամ Մանուկյանը, որին դեռևս ժամանակակիցներն անվանել են Հանրապետության հիմնադիր, Արարատյան երկրի փրկիչ և այլն:

Խնդիրն ամենևին էլ այն չէ, որ որևէ մեկին բարձրացնենք, մյուսին՝ իջեցնենք, այլ պատմությանը և գործող անձանց տանք ճշմարիտ գնահատական: Դժբախտաբար, հայ իրականությունը 1918 թ. չուներ այնպիսի կազմակերպված կառույցներ, որոնք կկարողանային ճիշտ վերլուծել և կանխատեսել իրադարձությունների զարգացման ընթացքը, կուրվագծեին գործողությունների իրատեսական և աշխատող ծրագիր: Փոխարենը՝ կային հեղինակավոր անհատներ: Խորշել անհատներին արժևորելուց, տվյալ դեպքում՝ Արամին, որպես Առաջին Հանրապետության հիմնադրի, կնշանակի խուսափել ճշմարտությունն ընդունելուց և պատմությունից դասեր քաղելուց:

Ի՞նչ հանգամանքներ են հիմք ծառայել Արամին այդպիսի բարձր գնահատական տալու համար, որը նրան որոշակիորեն առանձնացնում, բարձրացնում է մյուս հայրենանվեր գործիչներից: Արդյո՞ք դա զգացմունքային բնույթ չի կրում, կամ՝ արհեստական մոտեցման արդյունք չէ: Հարցին ճիշտ պատասխան տալու

համար Արամի գործունեությունը պետք է դիտարկել ժամանակի իրադարձությունների համապատկերի և նույն ժամանակաշրջանում մյուս գործիչների ծավալած գործունեության հետ համեմատությունների հիման վրա:

Արդ, ինչպիսի՞ն էր հայ ժողովրդի ռազմաքաղաքական կացությունը 1917 թ. վերջին, երբ, իբրև Հայոց կենտրոնական ազգային և Հայ զինվորական խորհուրդների լիազոր ներկայացուցիչ, Արամը գործուղվեց Երևան:

1917 թ. վերջին ռուսական Կովկասյան ռազմաճակատի քայքայումը, որը սկսվել էր փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին և խորացել հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց Հայաստանի ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան մասը: Անհրաժեշտ էր արագացնել հայկական զորամիավորումների ստեղծումը, որոնք կփոխարինեին հեռացող ռուսական զորքերին: Դրությունը բարդանում էր նրանով, որ հայությունն իր բնօրրանում դեռևս չուներ կազմակերպված զինուժ և իշխանության իրապես գործող մարմիններ: Երևանի Հայոց ազգային խորհուրդը, որը կազմվել էր Թիֆլիսի Ազգային խորհրդի օրինակով, թեև ըմբռնում էր դրության ծանրությունը, այնուամենայնիվ իր անելիքի մասին հստակ պատկերացում չուներ: Այդ մի մարմին էր, որն ընթանում էր իրադարձությունների հետևից:

Արդեն այն հանգամանքը, որ հայության համար բախտորոշ այդ իրավիճակում հայ իրականության ղեկավար և ազդեցիկ կառույցների կողմից Արամին վստահվեց Արևելյան Հայաստանի նշանակալի մասն ընդգրկող Երևանի նահանգի ղեկավարությունը, նրան որոշակիորեն տարբերում և բարձրացնում է մյուս գործիչնե-

ից: Սակայն դա նրա մեծությունն ընդգծող ընդամենը առաջին պահն էր:

Եվ այսպես, որոնք էին Արամի մեծությունը բնութագրող հատկանիշները, գծերը և ձեռնարկած քայլերը, որոնք պայմանավորեցին նրան Հանրապետության հիմնադիր կոչելու փաստը:

Առաջին կարևոր գիծը, իսկ ավելի ճիշտ՝ գծերի ամբողջությունը Արամի մտածողության և գործունեության մասշտաբայնությունն է, բացառիկ շրջահայացությունը, առաջադրած ծրագրերի հեռանկարայնությունը, որի հիմքում ընկած էր իր ժամանակից առաջ ընկնելու և իրադարձությունների ընթացքը կանխատեսելու նրա ունակությունը: Վանն արդեն ականատես էր եղել Արամի այդ որակներին: Ի՞նչ ձևով դա դրսևորվեց Երևանում: 1917 թ. դեկտեմբերի 18-ին ժամանելով Երևան՝ Արամը անմիջապես, կանխատեսելով հայ ժողովրդին սպառնացող վտանգը, առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված պարզ և իրատեսական ուղեգիծ[1]: Նա գտնում էր, որ հայությունը միայնակ է, որ ոչ-ոք նրան օգնելու մտադրություն չունի, և նա պետք է հենվի իր ուժերի վրա՝ թե՛ թուրքական հարձակումից պաշտպանվելու և թե՛ երկրում կարգ ու կանոն հաստատելու համար: Կարճ ժամանակ անց՝ 1918 թ. մարտի 28-ին նա էլ ավելի հստակեցրեց հետապնդվելիք քաղաքական գիծը՝ նշելով. «Ցոյց տանք աշխարհին, որ Հայը ազատ, անկախ ապրելու իրաւունք ունի: Այժմ կամ երբէք»[2]:

Արամին բնորոշ մյուս գիծը խիստ որոշակիությունն էր, հստակությունն ու հետևողականությունը, որոնք մշտապես ուղե-

---

[1] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2005, էջ 163:
[2] ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 6, թ. 1:

կից ունեին վճռականությունն ու անսասան կամքը: Երևան ժամանելուն պես, աչքի առաջ ունենալով Վանի նահանգապետության շրջանի պետական գործունեության փորձը, նա առաջադրեց գործողությունների խիստ որոշակի և համապարփակ ծրագիր և հետևողականորեն, քայլ առ քայլ կենսագործեց այն: Ի՞նչ էր անհրաժեշտ կատարել: Առաջին հերթին անհրաժեշտ էր ձևավորել իշխանության նոր՝ գործող մարմին և շունչ տալ արդեն առկա մարմիններին: Նրա առաջարկությամբ ստեղծվեց Երևանի նահանգի իշխանության դյուրաշարժ մարմին՝ վեց հոգուց կազմված Հատուկ կոմիտե, որի առջև դրվեցին հստակ խնդիրներ: Միաժամանակ, ակտիվացվեց Ազգային խորհրդի գործունեությունը: Երկրորդ, անհրաժեշտ էր ձևավորել կանոնավոր զորք, որը թելադրում էր կատարել կազմակերպված զորահավաք: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց Արամի հեղինակած «Կոչ հայ զինուորներին» շրջաբերականը: Այն բոլորից պահանջում էր կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Դրան հաջորդեց զորակոչի հայտարարությունը, որով նախատեսվում էր հավաքագրել Երևանի նահանգի և Զանգեզուրի գավառի 20-32 տարեկան բոլոր հայ զինապարտներին: Արամը, որի էությանը խորթ էին արհեստական և ստանդարտ մոտեցումները, ձեռնարկեց մի շարք քայլեր, որոնք կենսունակություն հաղորդեցին զորակոչին: Նախևառաջ, Արամի գլխավորությամբ ազգային մարմիններն ու գործիչները ժողովրդի շրջանում ծավալեցին քարոզչական լայն աշխատանք՝ նրան թշնամու դեմ կազմակերպված պայքարի բարձրացնելու նպատակով: Բացի այդ, հատուկ ուշադրություն դարձվեց զինվորների ընտանիքների նյութական ապահովությանը՝ այդ խնդիրը հստակ սահմանված կարգով դնելով գյուղական համայնքների վրա: Այդ կերպ զորակոչվողները կազատվեին այն

ծանր մտատանջությունից, որ աշխատուժից զրկված իրենց ընտանիքները չեն մատնվի սովի և այլ զրկանքների: Մարտունակ և հայրենասեր բանակ ստեղծելու համար անհրաժեշտ էր զորակոչել բոլորին՝ առանց բացառության: Հակառակ դեպքում գործը կձախողվեր, այն պարզ պատճառով, որ յուրաքանչյուր զորակոչվող, տեսնելով, որ իր դրացին խուսափում է ծառայությունից, ինքը ևս կփորձեր խույս տալ դժվարություններից: Այդ իսկ պատճառով զորակոչի էին ենթակա նաև նախկինում ինչ-ինչ պատճառներով նրանից ազատվածները: Ծավալվեց վճռական պայքար դասալիքների, զենք-զինամթերք, պետական գույք հափշտակողների դեմ: Սակայն դրանով խնդիրը ամբողջովին չէր կարող լուծվել: Անհրաժեշտ էր սանձել մահմեդականության հակահայկական խռովությունները, որոնք կազմակերպվում և ուղղորդվում էին թուրքերի կողմից: Այդ խռովությունները ոչ միայն խափանում էին զորամասերի փոխադրումը ռազմաճակատ, այլև պատճառ էին դառնում, որ ռազմունակ հայերն իրենց հարազատներին պաշտպանելու համար գամված մնան սեփական բնակավայրերում կամ այդ նպատակով լքեն ռազմաճակատը: 1918 թ. առաջին եռամսյակում հնազանդեցվեց 50-ից ավելի թաթարական գյուղ[3]: Այս միջոցառումները պայմանավորեցին զորահավաքի հաջող ընթացքը:

Արամին բնորոշ քաղաքական-պետական գործչի համար առաջնակարգ կարևորություն ունեցող հատկանիշներից մյուսը շատ արագ բոլոր կենսունակ ուժերին մեկ նպատակի շուրջ համախմբելու նրա ընդունակությունն էր: Արամը ցուցաբերեց նախանձելի համառություն ու հետևողականություն ժողովրդի գիտակցության մեջ սեփական ուժերին ապավինելու գաղափարն

---

[3] Նույն տեղում, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5:

ամրապնդելու և համազգային շարժում կազմակերպելու համար: Նա սեղմ ժամկետում քաղաքում ստեղծեց աշխատանքով հագեցված մթնոլորտ: Գործի լծվեցին ամենքը անկախ կուսակցական հանգամանքից: Արամի շունչն զգացվում էր ամենուր: Նա ամեն տեղ էր իր խորհուրդներով, ցուցումներով, հրահանգներով ու հրամաններով: Նա ոչ միայն կարողանում էր բոլորին համախմբել մեկ նպատակի շուրջը, այլև իր վճռական և արդարացի քայլերով կանխում էր այդ նպատակի դեմ ուղղված փորձերը: Ապացույցը մաուզերիստների սանձահարումն էր, դասալքության դեմ անհաշտ պայքարը, մայիսյան հերոսամարտերի ժամանակ անձնատվության կոչեր կատարող ցուցարարների պատժումը և այլն:

Արամին բնորոշ, նրան ժողովրդի շրջանում մեծ հեղինակություն ապահովող հաջորդ գիծը փառամոլության և սնապարծության բացակայությունն էր, նաև քաղաքական հավասարակշռությունը: Որպես հայրենասեր ու հեռատես քաղաքական-պետական գործիչ, դարավոր թշնամուց հայ ժողովրդի փրկության ճանապարհին նա երկրորդական էր համարում ամեն ինչ: Մասնավորապես, երկրորդական համարելով գաղափարական-քաղաքական տարաձայնությունները, ՀՅԴ մի շարք այլ գործիչների և առաջին հերթին Ռոստոմի հետ համախորհուրդ, նա փորձեց դաշնակից ձեռք բերել ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի: Այդ նպատակով նա հարաբերությունների մեջ մտավ Երևանի բոլշևիկների հետ, ինչպես նաև հեռակա կարգով մասնակցեց Թիֆլիսում ՀՅԴ գործիչների կողմից Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների հետ տարվող բանակցություններին: Այդ ընթացքում ՀՅԴ գործիչների և Կովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Ստ. Շահումյանի ջանքերով ընդունվեց համագործակցության գաղտնի ծրագիր, որի առանցքը հայ-բոլշևիկյան ճակատի ձևավո-

ոումն էր թուրքերի դեմ՝ Կովկասի խորհրդայնացման պայմանով (Արևմտահայաստանը լինելու էր անկախ)[4]: Հայ գործիչների ջանքերը հաջողություն չբերեցին: Ստ. Շահումյանը չկարողացավ կատարել իր խոստումը, իսկ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ու թուրքական սրընթաց առաջխաղացումը ջնջեցին հետագա գործակցության հնարավորությունները:

Արամին բնորոշող, նրա մեծությունն ընդգծող և պայմանավորող գծերից էին նաև նրա համեստությունը, ազնվությունն ու անշահախնդրությունը: 1918 թ. մարտի 24-ին՝ Սարիղամիշի անկումից հետո, ժողովրդական զանգվածների, զինվորականության և Երևանի Հայոց ազգային խորհրդի կողմից ընտրվելով դիկտատոր, այսինքն՝ օժտվելով անսահմանափակ իշխանությամբ, նա մինչև վերջ այն օգտագործեց բացառապես հոգուտ համազգային շահերի, երբեք չձգտեց հարստության, երբեք չփորձեց իրեն վեր դասել ազգային ու զինվորական կառույցներից: Սա, թերևս, պատմության եզակի դեպքերից է: Լինելով անսահմանափակ իշխանության տեր, նա ապրում էր հասարակ երևանցու նման, պատահում էր, որ ճաշի ժամանակ հաց չէր ունենում, իսկ թեյի ժամանակ՝ շաքար:

Արամին բնորոշող և նրա հաջողությունը պայմանավորող գծերից մեկն էլ ժողովրդի կարևորության ընդունումն էր և իրական հարգանքը նրա նկատմամբ: Նա լավ էր հասկանում, որ միայնակ ոչնչի հասնել հնարավոր չէ, որ հայրենիքի փրկությունը կախված է ժողովրդի հավաքական կամքից, ուստի անընդհատ փորձում էր բարձրացնել նրա խանդավառությունը: Նա նշում էր. «... Դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողո-

---

[4] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1990, էջ 143:

վուրդն է և եթէ ժողովուրդը պատրաստակամութիւն ունի ... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»[5]: Եվ դա հաջողվում էր նրան, հաջողվում էր շնորհիվ իրեն բնորոշ մեկ այլ գծի՝ խոսքի և գործի նույնականության. նրա արտահայտած մտքերը միշտ վերածվում էին իրականության:

Զորահրամանատարության, պետական, հասարակական-քաղաքական կառույցների գործակցությամբ Արամի ծավալած տքնաջան աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին 10-12 հազարանոց զորամիավորումներ, որոնց հիմնականում հաջողվեց ճնշել հանրապետության տարածքում թուրքական հակապետական խռովությունները, բացել ռազմաճակատի և հայկական բնակավայրերի հետ կապող հիմնական մայրուղիները: Մեղմվեց պարենային խնդիրը, զսպվեցին դասալիքներն ու ավազակային տարրերը:

Արամի մեծությունն ընդգծող գծերից մեկը իրադարձությունները կանխատեսելու և դրանց ընթացք տալու ունակությունն էր: Ասվածը լիովին ընկալելու և ճիշտ գնահատելու համար մասնակի անդրադառնանք 1918 թ. ապրիլին Կարսի անկման պատճառներին: Մեր կարծիքով՝ Կարսի անփառունակ անկման մեջ իրենց մեղքի որոշակի բաժինն ունեին նաև Թիֆլիսի հայ քաղաքական ղեկավար շրջանակները: Եթե նրանք ժամանակին ցուցաբերեին նախաձեռնություն և աշխատեին ընթացք տալ ռազմաքաղաքական անցքերին, այլ ոչ թե հետևեին դրանց զարգացմանը, ապա նման տխուր փաստի առաջ չէին կանգնի: Նրանք պարտավոր էին վաղօրոք՝ մինչև ապրիլի 10-12-ը, երբ գործվեց դավը,

[5] «Զանգ», 27 մարտի 1918 թ., N 24:

որոշել իրենց վերաբերմունքը դեպի Կարսի հետագա ճակատագիրը: Այնինչ նրանք ժամանակին դա չարեցին և Կարսի անփառունակ անկումը փորձեցին բացատրել վրացիների կողմից Թիֆլիսի և Կարսի հայ հրամանատարության միջև հեռագրակապն անջատելու փաստով: Ասվածի համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ հայ գործիչները տեղյակ էին Տրապիզոնի բանակցությունների ընթացքին, որտեղ առաջարկվել էր Կարսը զիջել թուրքերին: Ավելին, Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը Հայոց ազգային խորհրդի նախագահին հղած մարտի 30-ի հեռագրում հերքել էր Անդրկովկասյան կառավարության արտգործնախարար Ա. Չխենկելու հայտարարությունն այն մասին, թե Արդահանը վերցված է, իսկ Կարսի բախտը կվճռվի մոտակա օրերին: Բողոքելով Չխենկելու անհիմն հայտարարության դեմ՝ հայ զորավարը վստահությամբ հայտնել էր, որ Կարսի բախտը ոչ միայն չի վճռվի այդ օրերին, այլև թուրքերին հեշտ չի լինի վերցնել այդ ամրությունը, որովհետև նրա պաշտպանության համար ձեռնարկվել էին բոլոր միջոցները[6]:

Այս հանգամանքը լրացուցիչ անգամ փաստում է, թե որքան վճռորոշ էր Արամի նման հեռատես, նախաձեռնող ու կազմակերպչական ջիղ ունեցող գործչի ներկայությունը Երևանի նահանգում:

Արամի ջանքերը գերագույն լարման հասան 1918 թ. մայիսին: Բանն այն է, որ, շարունակելով 1918 թ. հունվարի վերջին սկսած հարձակումը, թուրքական զորքերը մայիսի 15-ի գիշերը գրավեցին Ալեքսանդրապոլը, իսկ մայիսի 19-ին ներխուժեցին Արարատյան դաշտ: Նրանք մայիսի 20-ին գրավեցին Արաքս կա-

---

[6] «Հորիզոն», 14 (1) ապրիլի 1918 թ., N 69:

յարանը, իսկ մայիսի 21-ին Սարդարապատ կայարանն ու գյուղը: Ամբողջ սրությամբ դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Թշնամու չորսամսյա հաղթարշավը հայ քաղաքական շրջանակներին, զորքին, զորահրամանատարությանն ու բնակչությանը մատնել էր հուսալքության և անորոշության: Անգամ գեներալ Մ. Սիլիկյանը մի պահ այն աստիճան էր ընկճվել, որ զորքը կառավարելը համարում էր անհնար[7]: Գեներալ Նազարբեկյանն Ազգային խորհրդին հաղորդում էր անհապաղ վերջնական հաշտություն կնքելու անհրաժեշտության մասին: Թիֆլիսում գտնվող Ս. Վրացյանն այդ օրերի մասին հետագայում նշում էր, որ դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ[8]:

Հայոց մեջ իշխող պարտվողական տրամադրությունները, որոնք հանգում էին նույնիսկ Երևանից նահանջելու անհեթեթ մտքին, անխուսափելիորեն նրան տանելու էին դեպի կործանում, եթե չձեռնարկվեին արմատական հակամիջոցներ:

Այդ բախտորոշ օրերին առավելագույնս դրսևորվեցին Արամ Մանուկյան պետական գործչին բնորոշ այնպիսի գծեր, ինչպիսիք էին իրավիճակին չհամակերպվելն ու շրջապատին չենթարկվելը: Այդ ծայրահեղ, թվում է, թե անհուսալի իրավիճակում նա դրսևորեց թշնամուն հակահարված հասցնելու աներեր վճռականություն, մեծագույն եռանդ ու լավատեսություն: Ավելին, նա հանդիսացավ այն միակ գործիչը, որը կարողացավ խավարի, անորոշության և հուսալքության պայմաններում լուսավորել իր ժողովրդի պատմական ճանապարհը և, բարձրացնելով ժողովրդի, զորքի և զորահրամանատարների հոգու կորովը, ուղի հարթեց դեպի լուսավոր ապագա, դեպի ազգային իղձերի իրականացում, դե-

---

[7] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 98, թ. 18:
[8] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 145:

ւպի հայոց նորագույն վերածնունդը, որը պետք է սկզբնավորվեր հայոց պետականության վերականգնմամբ:

1918 թ. մայիսի 19-ին Արամը գեներալ Մ. Սիլիկյանի հետ ունեցած հեռախոսազրույցում անընդունելի է համարում հետագա նահանջը և Արարատյան դաշտում թշնամուն հակահարված տալու համար վստահեցնում, որ երկու օրվա ընթացքում գեներալին կտրամադրվի այդ բանի համար անհրաժեշտ ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք և թիկունքի ոգևորությունը: Նա հրահանգում է անհապաղ՝ առանց տարիքի ու դիրքի խտրության, ռազմաճակատ ուղարկել բոլոր զինապարտներին: Խստագույնս արգելվեց քաղաքից հեռանալը: Նա կարևորում էր ամենքին և ամենքին էլ գործի լծում: Կանայք և երեխաները պետք է տներից փամփուշտներ հավաքեին և ջուր հասցնեին ճակատում գտնվող զինվորներին: Արամը, որը սիրում էր ամեն ինչին անձամբ հետևել, կրկնապատկել էր եռանդը. նա ամենուր էր՝ հրապարակներում, շուկայում, տներում, եկեղեցիներում և ոգևորում էր բոլորին: Մայիսի 19-ի երեկոյան գումարված Երևանի ազգային խորհրդի նիստում Արամն ամենայն վճռականությամբ բացառեց Երևանի հանձնումը թշնամուն՝ նշելով, որ ոչ մի գծի վրա նահանջ չի լինելու, որ Երևանից նահանջելը հավասար է ազգային ձգտումների և նախկին ամբողջ գործունեության վրա խաչ քաշելուն[9]: Նրա վճիռն էր՝ բոլորը պետք է մնան և պայքարեն մինչև արյան վերջին կաթիլը, մինչև վերջին փամփուշտը: Արամի այս վճռական կեցվածքն Ազգային խորհրդի անբեկանելի վճիռն էր: Ազգային խորհրդի որոշումը՝ թշնամուն Սարդարապատում և Բաշ-Ապարանում ճակատա-

---

[9] «Ճակատամարտ», 30 հունվարի 1921 թ., N 249 (670):

մարտ տալու մասին, հանձնվեց զորահրամանատարությանը՝ ի կատար ածելու:

Դասալիքներին և անձնատվությամբ տարվածներին զսպելու, հայրենաշունչ ելույթների միջոցով ոչ միայն վերջ տրվեց ազգաբնակչության շրջանում տիրող խուճապին, այլև այն փոխարինվեց ոգևորությամբ և մարտական տրամադրությամբ, որի անմիջական հետևանքը եղավ կամավորների չտեսնված հոսքը դեպի ռազմաճակատ: Հատկանշական էր հատկապես մայիսի 21-ը, երբ Երևանում կայացած հանրահավաքում Արամը հանդես եկավ հայրենասիրությամբ տոգորված, պայքարի ներշնչող ելույթով և բարձրացրեց հավաքվածների մարտական ոգին: Նրա անմիջական ղեկավարությամբ պարտիզանական շարժում ծավալվեց Բաշ-Ապարանի ճակատում, որը կարևոր նշանակություն ունեցավ թուրքական հարձակմանը դիմակայելու գործում, մինչև որ կանոնավոր զորամասեր ուղարկվեցին Սարդարապատի ճակատից:

Զորավար Մ. Սիլիկյանի և փոխգնդապետ Ա. Վեքիլյանի մշակած հակահարձակման պլանի հիման վրա 1918 թ. մայիսի 22-ին հայկական զորքերը Սարդարապատի ճակատում անցան հարձակման և ծանր պարտության մատնեցին թուրքերին՝ հարկադրելով նահանջել դեպի Ալեքսանդրապոլ[10]: Բաշ-Ապարանի ճակատում Դրոյի գլխավորությամբ գործող զորամասերը թուրքերից ազատագրեցին Ալի-Քուչակն ու Բաշ-Ապարանը: Մայիսի 29-ին թուրքերը հեռացան Համամլուից (Սպիտակ): Մայիսի 24-28-ը գեներալ Թ. Նազարբեկյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող 7000-անոց բանակային և աշխարհազորային ջոկատները

[10] ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 19:

Ղարաքիլիսայի մոտ հուժկու դիմադրություն ցույց տվեցին թուրքական 10000-անոց բանակին:

Նշված ժամանակաշրջանում իրենց տրամաբանական վախճանին հասան նաև տարածաշրջանում զարգացող քաղաքական անցքերը: Մայիսի 26-ին Անդրկովկասի Դաշնային Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց: Նույն օրը վրացիները, որոնք պահը հարմար էին նկատել զատվելու «խեղդվող» հայերից, հռչակեցին Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը կովկասյան թաթարների ներկայացուցիչները հայտարարեցին իրենց պետության ստեղծման մասին՝ նրան տալով Ադրբեջան անունը:

Երկար քննարկումներից հետո՝ 1918 թ. մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հռչակեց Հայաստանի անկախությունը, ավելի ճիշտ՝ հայկական գավառների նկատմամբ Հայոց ազգային խորհրդի գերագույն և միակ իշխանությունը:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Հայաստանի և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Այն անչափ ծանր էր հայ ժողովրդի համար. նրան թողնվում էր ընդամենը 11 հազար քառ. կմ տարածք և մի քանի կմ երկաթուղագիծ: Այդուհանդերձ, իրականանում էր անկախ պետականության վերականգնման հայոց բազմադարյան ձգտումը, որն ինքնին մեծ նվաճում էր դարավոր թշնամու դեմ երկարատև պայքար մղող հայության համար:

Այսպիսով, ստեղծվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Այն ստեղծվեց ոչ թե մայիսի 28-ի հայտարարությամբ, ոչ թե ինչ-որ բանակցությունների, ոչ թե ինչ-որ երկրի, առավել ևս հայության ոխերիմ թշնամու՝ Թուրքիայի բարյացակամության շնորհիվ, այլ բացառապես մայիսյան հերոսամարտերի շնորհիվ, որոնց կազմակերպումը հնարավոր դարձավ առաջին հերթին Արամի քաղաքական մեծության՝ կանխատես մտքի, կազմակերպ-

չական բացառիկ տաղանդի, աներեր վճռականության, անկոտրում կամքի շնորհիվ:

Թե պանթուրքիզմի ծրագրերը, թե՛ թուրքերի կողմից իրագործվող հայաջինջ քաղաքականությունը, այդ թվում 1918 թ. անցած ամիսներին նրանց շարունակական նվաճումները և հայերի կոտորածները, թե՛ ժամանակի փաստաթղթերը միանշանակորեն վկայում են, որ մինչև մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի[11]:

Բաթումում թուրքական վերջնագիրն ընդունելուց հետո Ա. Ահարոնյանը Երևանի Հայոց ազգային խորհրդին հաղորդում էր. «... թեև փոքրիկ և աղքատ, բայց Ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր զորքերի անձնազոհությանը: Որքան մեզ հայտնի է, գերմանացիները և թուրքերը Կովկասը բաժանում էին Վրաստանի և Ադրբեջանի, հայերին ապահովելով միայն ֆիզիկական գոյություն: Պետք է ենթադրել, որ մեր զորքի դիմադրությունը նրանց հարկադրեց ճանաչել և Հայաստանը»[12]: Հայոց դիմադրությանն ականատես Վեհիբ փաշան հաստատում էր այն փաստը, որ հայ ժողովրդի դիմադրությունն իրենց հարկադրեց հաշվի նստել նրա հետ: Մատնանշելով հայոց հուժկու կռիվները՝ նա Բաթումում Խալիլ բեյին հորդորում էր արագացնել հաշտության կնքումը հայերի հետ:

Սարդարապատի ճակատամարտից հետո ստանձնելով նորանկախ Հայաստանի նախակառավարության դեր կատարող Վարիչների մարմնի նախագահի և զինվորական վարիչի պաշ-

---

[11] «Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Новые документы», отв. ред. В. Микаелян, Ереван, 1995, с. 508:

[12] ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 2, թ. 10, գ. 11, թ. 5: «Զանգ», 11 հունիսի 1918 թ., N 41:

տոնները՝ Արամը, գործի մեջ ներգրավելով հասարակության մեջ մեծ հեղինակություն վայելող գործիչների, կարողացավ ապահովել նորանկախ երկրի անվտանգությունը, սոցիալ-տնտեսական և քաղաքական կայունությունը, մինչև որ ՀՀ կառավարությունը տեղափոխվեց Երևան[13]:

ՀՀ անդրանիկ կառավարության մեջ Արամն ուներ բացառիկ դիրք. նրան էր վստահվել ներքին գործերի նախարարությունը, որի մեջ էին մտնում լուսավորության, հաղորդակցության, պարենավորման, խնամատարության մասնա-ճյուղերը, մեր օրերի լեզվով ասած՝ նաև տարածքային կառավարման նախարարության լիազորությունները: Համալսարանական կրթության պակասը, ինչպես միշտ, այժմ ևս նրան չխանգարեց վարելու պետական խելամիտ ու նպատակային գործունեություն: Նրա ազդեցությունը տիրական էր և միաժամանակ դրական երկրի ներքին կյանքի բոլոր ոլորտներում: Արամը, առաջնորդվելով ազգային-պետական մտածողությամբ, դրսևորելով կազմակերպչական տաղանդ, ժողովրդին հավաքական գործունեության մղելու համար այնքան անհրաժեշտ ազնվություն և անձնական անշահախնդրություն, նախաձեռնողականություն ու հետևողականություն, նպատակային և արդյունավետ գործունեություն ծավալեց երկրում ամուր իշխանության և իրավակարգի հաստատման, վարչական մարմինների, հատկապես ՆԳ նախարարության ամրապնդման, երկրի անվտանգության ապահովման և հայացման, գաղթականության և որբերի խնամքի և այլ ուղղություններում՝ մեծապես նպաստելով նորաստեղծ պետականության ամրապնդմանը[14]: Բոլորի նկատմամբ նրա մոտեցումների նույնականությունը անկախ կուսակցական

---

[13] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Երևան, 2009, էջ 210-218:
[14] Մանրամասն տես նույն տեղում, էջ 218-245:

հանգամանքից, պետական և սոցիալական դիրքից, համեստ կենցաղը, հայրենասիրությունը գրավականներ էին իր և իշխանությունների հանդեպ ժողովրդի վստահության ամրապնդման և պետականության կայացման համար:

Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման, ապա նաև նրա հիմքերի ամրապնդման գործում ունեցած առաջնակարգ և վիթխարի ներդրման համար է, որ Արամ Մանուկյանն արժանացավ Հանրապետության հիմնադրի պատվանվանը:

Ասվածից երբեք և ոչ մի դեպքում պետք չէ հետևություն անել, թե Արամը միայնակ կերտեց Հայաստանի Հանրապետությունը: Այն արդյունք էր հայ ժողովրդի, նրա բազմաթիվ գործիչների գերմարդկային ջանքերի: Պարզապես Արամը նրանց մեջ առաջինն էր, գլխավորը, բոլորին միավորող և ծրագրված միասնական պայքարի առաջնորդողը:

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Յուրաքանչյուր նորանկախ պետության համար կարևոր նշանակություն ունի իշխանության բարձրագույն մարմինների ստեղծումն ու կայացումը: 1918 թ. մայիսին Հայաստանի անկախացումից հետո հայ հասարակական-քաղաքական շրջանակների առջև ծառացավ նորանկախ հանրապետության օրենսդիր և գործադիր անդրանիկ մարմինների ստեղծման հարցը:

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմի փլուզումից հետո վրացիները, ադրբեջանցիները (կովկասյան թաթարներ, թուրքեր) և հայերը ձեռնամուխ եղան սեփական պետությունների կառուցմանն ու մասնավորապես իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորմանը: Արդեն Հայոց ազգային խորհրդի[1] մայիսի 26-ի և 28-ի նիստերում առաջ է քաշվում կառավարության ձևավորման հարցը[2], իսկ Ազգային խորհրդի մայիսի 30-ի հայտնի հայտարարության մեջ, որն ընդունված է համարել Հայաստանի անկախության հռչակագիրը, նշվում էր, որ մինչև Հայոց ազգային կառավարության կազմավորումը «Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր

---

[1] Համընդհանուր տարածում գտած սկզբունքի համաձայն՝ «Հայոց ազգային խորհուրդ» ենք անվանում հայկական Ազգային խորհուրդների մեջ կենտրոնականը համարվող և Թիֆլիսում տեղակայված «Ռուսահայոց ազգային խորհրդին»:

[2] Տե՛ս «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», կազմող, առաջաբանի և ծանոթագր. հեղինակ՝ Հ. Կ. Սուքիասյան, խմբ.՝ Ա. Ս. Վիրաբյան, Կ. Հ. Խաչատրյան, Երևան, 2009, էջ 18-21, 25, 27-29:

ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական ու վարչական դեկը վարելու համար»[3]:

Հայկական գավառների գերագույն իշխանությունը ստանձնած Հայոց ազգային խորհրդի անդամների համար ակնհայտ էր, որ անկախության հռչակումից հետո առաջնային խնդիր էր դառնալու նորանկախ հանրապետության կառավարության կազմավորման հարցը: Ահա թե ինչու Ազգային խորհրդի մայիսի 30-ի նույն նիստում ընդարձակ կերպով քննարկման նյութ է դառնում «Կառավարության կազմի խնդիրը»: Քննարկվում է կառավարություն կազմելու նպատակահարմարության, սկզբունքների, այդ իրավունքը Երևանի գործիչներին փոխանցելու, ստեղծվելիք կառավարությունը Երևան տեղափոխելու, վարչապետի թեկնածության (Մարտիրոս Հարությունյանն իր մի քանի ընկերների անունից մատնանշում է Ալեքսանդր Խատիսյանին) հարցերը: Բնորոշ է, որ ստեղծվելիք կառավարության կազմակերպման սկզբունքների և այդտեղ գերակշիռ դերակատարություն ունենալու կապակցությամբ այս նիստում առաջին անգամ սկզբունքային կերպով դրսևորվում է Հայ հեղափոխական դաշնակցություն – Հայ ժողովրդական կուսակցություն հակամարտությունը, ինչը հետագա շաբաթներին դառնալու էր կոալիցիոն կառավարություն կազմելու խնդրում վճռորոշ խոչընդոտը: Սակայն այս նիստում կառավարության կազմակերպման վերաբերյալ որոշում չի կայացվում[4]:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո, որով թուրքերը ճանաչում էին Հայաստանի անկախությունը, Հայոց ազգային խորհուրդը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի և կառավարության ձևավորմանը:

---

[3] Նույն տեղում, էջ 31:
[4] Տես նույն տեղում, էջ 31-34:

Ազգային խորհրդի հունիսի 7-ի նիստում կրկին քննարկման նյութ է դառնում կառավարության ձևավորման հարցը: Հ. Յ. Դաշնակցության կողմից Խաչատուր Կարճիկյանն առաջարկում է Հայոց ազգային խորհուրդը վերածել պառլամենտի, իսկ կառավարությունը կազմել կոալիցիոն սկզբունքով: Խորհրդի անկուսակցական անդամ Ստեփան Մամիկոնյանն առաջարկում է կազմել միայն ժամանակավոր կառավարություն, իսկ Ազգային խորհուրդը՝ թողնել Թիֆլիսում: Սոցիալիստ-հեղափոխականների (էսէռ) կողմից Լևոն Թումանյանը տեղեկացնում է, որ իրենք հրաժարվում են մասնակցել կառավարությանը, քանի որ, իրենց կարծիքով, պետք է Երևանի գործիչներին տրվի տեղական կառավարություն կազմելու իրավունքը: Էսէռները խոստանում էին վերջնական պատասխան տալ միայն Երևանի իրենց կուսակից ընկերների հետ խորհրդակցելուց հետո: Նիստի ընթացքում կրկին ի հայտ է գալիս Դաշնակցություն–Ժողովրդական կուսակցություն հակամարտությունը: Ժողովրդական կուսակցության անդամ Սամսոն Հարությունյանն առաջարկում է կազմել կոալիցիոն կառավարություն՝ գերակշռություն տալով Ժողովրդական կուսակցությանն ու նրան հարողներին: Իսկ սոցիալ-դեմոկրատ (էսդեկ) Ղազար Տեր-Ղազարյանն իր անունից առաջարկում էր ստեղծվելիք կառավարության մեջ ընդգրկել բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին, հատկապես՝ սոցիալ-դեմոկրատներին[5]: Փաստորեն՝ նորանկախ հանրապետությունը գտնվում էր ծայրաստիճան ծանր վիճակում, իսկ Ազգային խորհրդին մաս կազմող կուսակցությունները, չնայած գոյություն ունեցող իրավիճակի գիտակցմանը, փոր-

[5] Տես նույն տեղում, էջ 46-51:

ծում էին ամեն գնով գերակշռություն ունենալ ստեղծվելիք կառավարությունում:

Հունիսի 7-ի նիստի ընթացքում որոշվում է Հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես վերածել ՀՀ օրենսդիր մարմնի և տեղափոխել Երևան: Որոշվում է նաև՝ «հանձնարարել մեկին կառավարություն կազմել կոալիցիոն սկզբունքով»: Հ. Յ. Դաշնակցության կողմից Խաչատուր Կարճիկյանն առաջադրում է հայտնի ճարտարապետ, հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Հովհաննես (Ռուբեն) Քաջազնունու թեկնածությունը: Ժողովրդականները, դեմ լինելով կառավարության ղեկը ՀՅԴ-ին վստահելուն և հրաժարվելով կառավարության մեջ մտնել, ձեռնպահ են մնում քվեարկությանը մասնակցելուց: Իսկ էսէռներն ու էսդեկները չեզոքություն են պահպանում կառավարության կազմավորումը Հ. Քաջազնունուն վստահելու հարցում, ինչի արդյունքում Ազգային խորհուրդը որոշում է. «Հ. Քաջազնունուն հանձնվում է կառավարություն կազմել կոալիցիոն սկզբունքով՝ անձնավորությունների ընտրությունը վերապահելով իրեն»[6]:

Դաշնակցական գործիչ Հակոբ Տեր-Հակոբյանի (Իրազեկ) վկայությամբ՝ ՀՅԴ Արևելյան և Արևմտյան բյուրոների, ֆրակցիաների, Թիֆլիսի կենտրոնական կոմիտեի և Անդրկովկասի սեյմի ու Հայոց ազգային խորհրդի դաշնակցական անդամների մասնակցությամբ մայիսի 29-ին կայացած արտակարգ նիստում Հ. Քաջազնունին ընտրվել էր վարչապետի թեկնածու[7]:

Ինչպես տեսնում ենք, Հայոց ազգային խորհուրդը Հ. Քաջազնունուն կոալիցիոն կառավարություն կազմելու հանձնարա-

---

[6] Նույն տեղում, էջ 53-54:

[7] Տես Իրազեկ Հ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէյրութ, 1956, էջ 35:

ություն է տվել հունիսի 7-ին: Այս իրադարձության օրվա վերաբերյալ տեղեկություն չեն պահպանել Առաջին հանրապետության ամբողջական պատմության առաջին հուշագիր-պատմագիրները՝ Ս. Վրացյանն ու Ա. Խատիսյանը[8]: Սակայն պատմագիտական գրականության մեջ, որպես այդպիսին, առավելապես նշվում է հունիսի 9-ը[9]:

Ամենայն հավանականությամբ, այս շփոթի պատճառը հետևյալն է. տասնամյակներ առաջ գրելով այս մասին՝ ամերիկահայ վաստակաշատ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը ձեռքի տակ ունեցել է սոցիալիստ-հեղափոխական Արշամ Խոնդկարյանի հուշերը, ինչպես նաև «Հորիզոն» թերթը: Ա. Խոնդկարյանը գրում է, որ Հ. Քաջազնունին վարչապետ է նշանակվել հունիսի 9-ին[10], իսկ «Հորիզոնի» 1918 թ. հունիսի 9-ի համարում տպագրված է տեղեկատվություն ՀՀ կառավարության կազմավորման ընթացքի վերաբերյալ, որտեղ հիշատակվում է Հ. Քաջազնունուն վարչապետ նշանակելու մասին[11]: Հավանաբար այս պատճառով Ռ. Հովհաննիսյանը շրջանառության մեջ է դրել հունիսի 9-ը, իսկ հաջորդ ուսումնասիրողների մեծ մասը հետևել է նրան: Չնայած պետք է նշել, որ «Մշակ» թերթի հունիսի 9-ի համարում տպագրված «Հայկական կառավարությունը» խորագրով տեղեկատվության մեջ

---

[8] Տես Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993: Նույնի, Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 1966: Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968:

[9] Մասնավորապես տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Երևան, 2005, էջ 41: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 33: Պրոֆ. Ա. Հակոբյանը, հիմնվելով «Հորիզոն» և «Աշխատանքի դրոշակ» թերթերի հաղորդումների վրա, այս առթիվ իրավացի կերպով «հունիսի 7» է գրում (տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005, էջ 46):

[10] Տես Խոնդկարեան Ա., Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, «Վէմ», 1934, յունուար-փետրուար (Գ), էջ 92:

[11] Տես «Հորիզոն», 9 յունիսի 1918 թ., N 111:

նշվում է. «Յունիսի 7-ին, ուրբաթ երեկոյեան, Ազգային Խորհուրդը իր նիստում որոշել է, հակառակ Հայ Ժողովրդական Կուսակցութեան ներկայացուցիչների կարծիքի, յանձնել Հայկական կառավարութեան կազմումը Դաշնակցութեան լիդէր Յ. Քաջազնունուն»[12]:

Կառավարության ղեկավար նշանակվելու հաջորդ օրը՝ հունիսի 8-ին, Հ. Քաջազնունին Ազգային խորհրդի անդամներին տեղեկացնում է, որ իրեն չի հաջողվել ամբողջական կազմով կառավարություն կազմել, ուստի որոշել է առայժմ բավարարվել արտաքին գործերի և զինվորական նախարարներով՝ մյուսներին նշանակելով Երևանում: Այնուհետև վարչապետը մանրամասն կերպով ներկայացնում է իր պատկերացումներն ապագա կառավարության կազմի վերաբերյալ: Ըստ նրա՝ կառավարությունը պետք է կազմված լիներ 7 նախարարությունից՝ 1. ներքին գործոց, լուսավորության, պարենավորման, 2. արտաքին գործոց, 3. զինվորական, ճանապարհների հաղորդակցության, 4. ֆինանսների, առևտրի և արդյունաբերության, 5. արդարադատության, 6. աշխատանքի, երկրագործության և 7. խնամատարության և հասարակական աշխատանքների: Նշելով, որ ցանկանում է բոլոր կուսակցություններին ներգրավել կառավարության մեջ՝ Հ. Քաջազնունին տեղեկացնում էր, որ արտաքին գործերի նախարարի պաշտոնի համար նկատի է ունեցել Ա. Խատիսյանին, իսկ զինվորական նախարարի համար՝ անկուսակցական գեներալ Գաբրիել Ղորղանյանին, սակայն վերջինը հրաժարվել է կառավարության մեջ մտնել[13]: Վերջում Ազգային խորհուրդը որոշում է. «Ի. առայժմ բավականա-

---

[12] «Մշակ», 9 յունիսի 1918 թ., N 108:

[13] «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 56-58:

նալ արտաքին գործերի, զինվորական և ֆինանսների (եթե հարմար մարդ գտնվի) նախարարություններով՝ մնացած գործերը թողնելով Խորհրդի համապատասխան վարիչներին՝ մինչև Երևան տեղափոխությունը:

II. Հրավիրված նախարարները վարում են ընթացիկ գործերը Հայաստանի կառավարության անունից, իսկ մնացած խոշոր խնդիրները քննվում են Ազգային խորհրդում, կառավարության կաբինետում»[14]:

Հայոց ազգային խորհրդի կողմից վարչապետի նշանակումը ոչ միայն չթուլացրեց կառավարություն կազմելու շուրջ Դաշնակցություն – ժողովրդական կուսակցություն հակամարտությունը, այլև այն նոր ուժով բորբոքվեց: Հ. Քաջազնունու՝ վարչապետ նշանակվելուց երկու օր անց՝ հունիսի 9-ին, ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած Թիֆլիսի հայ հասարակության ավելի քան հազար ներկայացուցիչների ժողովը որոշում կայացրեց դիմել Հայոց ազգային խորհրդին՝ առաջարկելով կազմել ազգային ժամանակավոր կառավարություն՝ «հանձնելով դրա իրագործումը Հայ ժողովրդական կուսակցությանը՝ հանձին Միքայել Բաբաջանյանի»[15]: Հաջորդ օրերի ընթացքում հրապարակային տարբեր ժողովներում ու առանձնապես կուսակցության խոսափողը հանդիսացող «Մշակ» թերթում ժողովրդականները լայն քարոզարշավ ծավալեցին Հ. Յ. Դաշնակցության և դաշնակցական վարչապետի կազմելիք կառավարության դեմ: Հ. Քաջազնունուն չհաջողվեց նաև կառավարության մեջ

---

[14] Նույն տեղում, էջ 59:

[15] «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Երևան, 2000, էջ 46:

ընդգրկել սոցիալիստ-հեղափոխականներին ու սոցիալ-դեմոկրատներին[16]:

Կառավարության կազմավորման շուրջ ընթացող միջկուսակցական հակամարտությունը Հ. Քաջազնունուն հնարավորություն չտվեց կոալիցիոն կառավարություն կազմել: Նման պայմաններում Հայոց ազգային խորհրդի անդամները հանգել էին այն դիրքորոշմանը, որ իրատեսական չէ կոալիցիոն կառավարությունը և, ինչպես Ազգային խորհրդի հունիսի 24-ի նիստում ձևակերպեց Խորհրդի անկուսակցական անդամ Ստեփան Մամիկոնյանը, «[Հ.] Քաջազնունու առաջարկը կոալիցիոն մինիստրություն կազմելու նկատմամբ անհաջող անցավ և ձգձգելը դրական արդյունք չտվեց: Այս երկու շաբաթվա ընթացքում տրամադրությունները փոխվել են, լքում է տիրել: Կոալիցիոն սկզբունքը միանգամայն տապալված է»[17]: Եվ ահա Հայոց ազգային խորհրդի հունիսի 25-ի նիստում վարչապետ Հ. Քաջազնունին հանդես եկավ կտրուկ հայտարարությամբ. «Ինձ հանձնարարված էր <<Հայոց> ազգային խորհրդի կողմից կառավարություն կազմել կոալիցիոն սկզբունքով: Սակայն անցել է ավելի քան 14 օր, բայց իր բոլոր ջանքերն այդ ուղղությամբ հաջողությամբ չպսակվեցին: Այս դրությունն այլևս չի կարող շարունակվել և պետք է անպատճառ կառավարություն կազմվի և ես վճռել եմ կազմել, բայց ոչ կոալիցիոն, այլ անձնական՝ պերսոնալ սկզբունքով: Բայց որովհետև Ազգային խորհրդի դիրեկտիվը կոալիցիոն սկզբունքն էր, ապա կամ պետք

---

[16] Տես նույն տեղը, էջ 156: «Մշակ», 11, 27 յունիսի, 10 յուլիսի 1918 թ., N 109, 122, 132: Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 185: Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 47-48:

[17] «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 76:

է փոխվի այդ դիրեկտիվը և կա՛մ ընդունվի իմ հրաժարականը: Թող Ազգային խորհուրդը մեկ ուրիշին հանձնի այդ սկզբունքով կառավարություն կազմելը, գուցե՞ նրան կհաջողվի»[18]:

Հայոց ազգային խորհուրդը Հ. Քաջազնունու հայտարարությունը քննության առավ հաջորդ՝ հունիսի 27-ի նիստում: Բազմակողմանի քննարկումից հետո Խ. Կարճիկյանի առաջարկով որոշվեց. «Վերցնել կոալիցիոն սկզբունքը և հանձնել մեկին կառավարություն կազմել պերսոնալ ձևով»[19]: Թեև Ազգային խորհրդի նիստի արձանագրության մեջ նշված չէ, թե ում է հանձնարարվում անհատական սկզբունքով կառավարություն կազմելու գործը, սակայն «Հորիզոն» թերթի 1918 թ. հունիսի 30-ի համարում տպագրված մի հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ այդ պարտականությունը դրվել է Հ. Քաջազնունու վրա[20]: Հավանաբար «Հորիզոն» թերթի այս հոդվածի պատճառով էլ Արշամ Խոնդկարյանը գրում է, թե Հ. Քաջազնունուն անհատական սկզբունքով կառավարություն կազմելու հանձնարարական է տրվել հունիսի 30-ին[21]: Նույն թյուրիմացությունն առկա է նաև Ռ. Հովհաննիսյանի մոտ[22], ով այս ամսաթիվը, ամենայն հավանականությամբ, վերցրել է Ա. Խոնդկարյանի հուշերից:

Հայոց ազգային խորհրդի կողմից անհատական սկզբունքով կառավարություն կազմելու հանձնարարական ստանալուց հետո վարչապետ Հ. Քաջազնունին ձեռնամուխ եղավ կառավարության կազմավորմանը: ՀՀ կառավարության կազմավորման ընթացքի մասին «Հորիզոն» թերթի 1918 թ. հուլիսի 6-ի համարում

---

[18] Նույն տեղում, էջ 83:
[19] Նույն տեղում, էջ 86:
[20] Տե՛ս «Հորիզոն», 30 յունիսի 1918 թ., N 128:
[21] Տես Խոնդկարեան Ա., նշվ. աշխ., էջ 96-97:
[22] Տես Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 42:

տպագրված մի ոչ պաշտոնական տեղեկատվությունում նշվում է, որ կառավարությունն ունի հետևյալ կազմը՝ վարչապետ Հ. Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործերի՝ Ա. Մանուկյան, զինվորական՝ գեներալ Հ. Հախվերդյան, ֆինանսների՝ Խ. Կարճիկյան: Տեղեկացվում էր, որ մյուս նշանակումները կատարվելու են Երևանում[23]: Իսկ Կ. Պոլսում գտնվող հայկական պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին ուղղված Հայոց ազգային խորհրդի ժամանակավոր նախագահ Ավետիք Սահակյանի հունիսի 7-ի նամակից տեղեկանում ենք, որ վարչապետը զինվորական, արտաքին գործերի, ֆինանսների նախարարությունները ղեկավարելու համար արդեն հրավիրել էր համապատասխանաբար գեներալ Հ. Հախվերդյանին, Ա. Խատիսյանին և Խ. Կարճիկյանին, իսկ մյուս նախարարները նշանակվելու էին Երևանում[24]:

Ինչպես տեսանք, կառավարություն կազմելու հանձնարարականին զուգահեռ Հայոց ազգային խորհուրդը նույն հունիսի 7-ի նիստում որոշում կայացրեց ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների՝ Երևան տեղափոխվելու վերաբերյալ: Այս պատճառով դեռևս հունիսի 2-ին Երևանի ազգային խորհրդին ուղղված նամակում Հայոց ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը և քարտուղար Նիկոլ Աղբալյանը տեղեկացնում էին. «Հայտնել ենք Վրաց կառավարությանը, որ Հայոց կառավարությունը կազմելուց <հետո> Ազգային խորհուրդը մեկնելու է Երևան»[25]: Իսկ ՀՅԴ օրգան «Աշխատավոր» թերթի հունիսի 6-ի խմբագրակա-

---

[23] Տես «Հորիզոն», 6 յուլիսի 1918 թ., N 132:

[24] Տես «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 106-107:

[25] Նույն տեղում, էջ 38:

նում նշվում էր. «Այժմ, երբ հայկական կառավարութիւն է կազմուում, ինչպէս էլ որ դա կազմի և ինչ ընդհանուր քաղաքական պայմաններում էլ որ գործելու լինի, անյապաղ դա պէտք է չէ հայրենիք, պէտք է ապրէ ու գործէ ժողովրդի մէջ»[26]: «Հորիզոն» թերթի մեր կողմից հիշատակված հունիսի 9-ի տեղեկատվության մեջ ևս նշվում էր, որ «կաբինետը կազմելուն պէս, հայկական կառավարութիւնը կտեղափոխուի Երևան»[27]: Փաստորեն՝ հենց սկզբից ՀՀ կառավարության կազմավորման և Երևան տեղափոխվելու խնդիրները փոխկապակցված էին:

ՀՀ կառավարությունը վերջնականապես Երևանում կազմելու մասին մասնավորապես շեշտվում է Հայկական կորպուսի շտաբի պետ գեներալ Ե. Վիշինսկու հունիսի 16-ով թվագրվող մի հաղորդման մեջ, Հայոց ազգային խորհրդի ժամանակավոր նախագահ Ա. Սահակյանի կողմից Ա. Ահարոնյանին ուղղված մեր կողմից հիշատակված հուլիսի 7-ի, Երևանի ազգային խորհրդին ուղղված հուլիսի 9-ի նամակներում, այս մասին տեղեկատվություն է առկա ժամանակի պարբերական մամուլում[28]:

Կառավարությունը վերջնականապես Երևանում կազմելու հարցում առանձնապես վճռական դիրքորոշում էր որդեգրել վարչապետ Հ. Քաջազնունին: Հայոց ազգային խորհրդի հունիսի 8-ի նիստում վարչապետը կառավարության վերջնական ձևավորումը և հայտարարագիր (դեկլարացիա) կատարելը կապում էր Երևան տեղափոխվելու հետ՝ շեշտելով. «եթե հնար լիներ ամբողջ կառա-

---

[26] «Աշխատավոր», 6 յունիսի 1918 թ., N 54:
[27] «Հորիզոն», 9 յունիսի 1918 թ., N 111:
[28] Տես «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 70, 106-107: «Մշակ», 4 յուլիսի 1918 թ., N 128: «Աշխատավոր», 4 յուլիսի 1918 թ., N 76: «Հորիզոն», 4, 6 յուլիսի 1918 թ., N 131, 132:

վարությունն այստեղ (իմա՛ Թիֆլիսում – Հ. Ս.) կազմելու, դարձյալ պետք է ինքը կողմնակից լիներ ամբողջը Երևանում կազմելու»[29]: Կառավարությունը վերջնականապես Երևանում կազմելու և հայտարարագիր կատարելու վերաբերյալ իր տեսակետը Հ. Քաջազնունին չփոխեց նաև հետագայում, ինչի վառ վկայությունն է Ազգային խորհրդի հունիսի 24-ի և հուլիսի 6-ի նիստերի ժամանակ այդ մասին բարձրաձայնելը[30]:

Փաստորեն՝ վարչապետ Հ. Քաջազնունին խնդիր էր դրել կառավարության անդամության թեկնածուների հետ Երևան ժամանելուց հետո այստեղ վերջնականապես որոշել կառավարության կազմը: Ահա այս պատճառով Հայոց ազգային խորհրդի կողմից ՀՀ կառավարության կազմի վերաբերյալ պաշտոնապես տեղեկացվեց միայն հուլիսի 24-ին՝ Երևան ժամանելուց և տեղի գործիչների հետ վերջնական եզրահանգման գալուց հետո:

Չնայած այն իրողությանը, որ Հ. Քաջազնունին տարբեր առիթներով շեշտում էր, որ կառավարությունը վերջնականապես կկազմի և կառավարության հայտարարագիրը կկատարի Երևանում, այնուհանդերձ հայտնի է վերջինիս կողմից պատրաստված այդպիսի մի հայտարարագիր, որն անթվակիր է[31]: Ռուսերեն ձեռագիր փաստաթղթի ընթերցումից պարզորոշ երևում է, որ այն պատրաստվել է Թիֆլիսում՝ մինչև ՀՀ իշխանության կենտրոնա-

---

[29] «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 57:

[30] Տես նույն տեղում, էջ 74-80, 104:

[31] Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 4-15: Փաստաթուղթն առաջին անգամ ամբողջապես հրապարակված է՝ Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920 թթ.), Երևան, 2006, էջ 319-333: Այստեղ, առանց պարզաբանման, փաստաթուղթը թվագրված է 1918 թ. հունիսով:

կան մարմինների Երևան տեղափոխվելը: Փաստաթղթերի և ժամանակի մամուլի համակողմանի քննության արդյունքում կարելի է ենթադրել, որ Հ. Քաջազնունին հայտարարագիրը պատրաստել է 1918 թ. հուլիսի 6-ին հաջորդող օրերի ընթացքում: Մեր այս վարկածի օգտին է խոսում այն իրողությունը, որ Հայոց ազգային խորհրդի հուլիսի 6-ի նիստի ժամանակ, երբ որոշվել էր նախապատրաստական աշխատանքներ կատարել ոչ ուշ, քան երկու շաբաթվա ընթացքում Երևան տեղափոխվելու համար, ի պատասխան Սամսոն Հարությունյանի հարցադրման, Հ. Քաջազնունին կրկին մատնանշում է. «Կառավարության որևէ հայտարարություն չի լինի, քանի որ ինքն ու Խորհուրդն այստեղ են. մինչև Ազգային խորհուրդը չտեղափոխվի Երևան և չկազմի Հայաստանի Խորհուրդը, որևէ հայտարարություն կառավարության կազմի կամ դեկլարացիայի մասին չի լինի»[32]: Տրամաբանական է կարծել, որ Երևան տեղափոխվելու որոշումից հետո վարչապետը ձեռնամուխ է եղել կառավարության հայտարարագրի պատրաստմանը:

Չնայած Թիֆլիսում գործող հայ քաղաքական ուժերը սկզբունքային տեսակետից դեմ չէին Երևան տեղափոխվելուն, սակայն տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ձգձգվում էր ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների Երևան տեղափոխվելը: Երևան տեղափոխվելու ժամկետներն անընդհատ փոփոխվում էին: Վերջնականապես Հայոց ազգային խորհրդի հուլիսի 13-ի նիստում կտրուկ կերպով դրվեց տեղափոխության խնդիրը և երկար քննարկումներից հետո որոշվեց հուլիսի 16-ին ճանապարհվել Երևան: Վրացիների հարուցած խոչընդ-

---

[32] «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 104:

դոտների պատճառով ՀՀ ղեկավարները միայն հուլիսի 17-ի կեսօրին ճանապարհվեցին Թիֆլիսից և 19-ի երեկոյան ժամանեցին Երևան[33]:

Մինչև Հայոց ազգային խորհրդի և Հ. Քաջազնունու ձևավորվող կառավարության ժամանումը Երևան՝ այստեղ գերագույն իշխանությունը կենտրոնացված էր Արամ Մանուկյանի գլխավորած Վարիչների մարմնի ձեռքում, որը կարևոր քայլեր էր կատարել Երևանում ու շրջակայքում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ[34]: Հայոց ազգային խորհրդի նիստերի ընթացքում առաջ էր քաշվում նաև կառավարություն կազմելը Երևանի գործիչներին փոխանցելու տարբերակը[35]: Այս պարագայում, ամենայն հավանականությամբ, վարչապետի գլխավոր թեկնածու կարող էր դիտարկվել Արամ Մանուկյանը:

ՀՀ իշխանության կենտրոնական մարմինների՝ Երևան ժամանելուց հետո Հայոց ազգային խորհրդի և Երևանի ազգային խորհրդի հուլիսի 20-ի և 22-ի համատեղ նիստերի ընթացքում, ինչպես նաև միջկուսակցական խորհրդակցությունների արդյունքում վերջնականապես որոշվեց Հայոց ազգային խորհրդի կազմը եռապատկելու (բացի անկուսակցական անդամներից), ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավման ճանապարհով ՀՀ գերագույն օրենսդիր մարմին՝ Հայաստանի Խորհուրդ կազմավորելու վերաբերյալ, ճշգրտվեց նաև ՀՀ կառավարության կազմը: Հուլիսի 24-ին Հայոց ազգային խորհուրդը

---

[33] Այս մասին տես Սուքիասյան Հ., Հայաստանի Հանրապետության իշխանության կենտրոնական մարմինների՝ Երևան տեղափոխվելու հարցի շուրջ (1918 թ. մայիս-հուլիս), «Հայոց պատմության հարցեր», N 10, Երևան, 2009, էջ 228-236:

[34] Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Երևան, 2005, էջ 211-215:

[35] Մասնավորապես տես «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 32, 75-79, 102:

պաշտոնապես հայտարարեց կառավարության կազմավորման մասին: ՀՀ անդրանիկ կառավարությունն ուներ հետևյալ կազմը. նախարար-նախագահ՝ Հովհաննես Քաջազնունի, արտաքին գործերի նախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, արդարադատության նախարարի պաշտոնը թափուր մնաց մինչև հուլիսի 28-ը, երբ նախարար նշանակվեց անկուսակցական, սակայն ժողովրդական կուսակցությանը հարող Գրիգոր Տեր-Պետրոսյանը[36]:

Փաստորեն՝ որոշակի տարբերություն էր առկա կառավարության կազմի վերաբերյալ Հ. Քաջազնունու նախնական պատկերացումների և վերջնական կազմի միջև: Ինչպես տեսնում ենք, հունիսի 8-ին Հայոց ազգային խորհրդում ներկայացվածի համեմատ կառավարության վերջնական կազմում բացակայում էին աշխատանքի ու երկրագործության, ինչպես նաև խնամատարության և հասարակական աշխատանքների նախարարությունները:

ՀՀ անդրանիկ կառավարության մեջ ադրբեջանցիներին նախարարական պաշտոններ չտրվեցին՝ չնայած այն հանգամանքին, որ կառավարության վերջնական ձևավորմանը նախորդող շրջանում պարբերաբար ոչ պաշտոնապես տեղեկացվում էր, թե ձևավորվող կառավարության մեջ ադրբեջանցիներին հատկացվելու են նախարարական երկու պաշտոններ[37]:

---

[36] Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 53:

[37] Տես «Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության կենտրոնական մարմինների ձևավորումը (1918 թ. մայիս-հուլիս): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 70, 92, 96:

Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստը գումարվեց օգոստոսի 1-ին: Օգոստոսի 3-ին Հ. Քաջազնունին ներկայացրեց կառավարության գործունեության ծրագիրը, ուր ընդհանուր գծերով նշվում էր առաջիկա անելիքների մասին: Քննարկումներից հետո օգոստոսի 6-ին խորհրդարանը հաստատեց կառավարության ծրագիրը, ինչից հետո ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան նորանկախ հանրապետության առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրների կարգավորմանը:

Հ. Քաջազնունու գլխավորած անդրանիկ կառավարության մեջ առանձնահատուկ դեր ուներ ներքին գործերի, հանրային կրթության, խնամատարության, պարենավորման և հաղորդակցության միջոցների նախարար Արամ Մանուկյանը: Ինչպես նշում է ՀՅԴ նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը, «Կառավարութեան գալով՝ Երեւանի Ազգ. Խորհուրդը լուծեցաւ, բայց Արամ նորաստեղծ իշխանութեան մէջ ալ մնաց ծանրութեան կեդրոնը»[38]:

Ամփոփելով մեր խոսքը՝ կարող ենք փաստել, որ Հայոց ազգային խորհուրդը Հովհաննես Քաջազնունուն կոալիցիոն կառավարություն կազմելու հանձնարարական է տվել 1918 թ. հունիսի 7-ին, իսկ անհատական սկզբունքով կառավարություն կազմելու հանձնարարական՝ հունիսի 27-ին: ՀՀ անդրանիկ կառավարության կազմավորման և Թիֆլիսից Երևան տեղափոխվելու խնդիրները փոխկապակցված էին: ՀՀ կառավարությունը վերջնականապես ձևավորվեց, իսկ վարչապետ Հ. Քաջազնունին կառավարության հայտարարագիրը կատարեց Երևանում:

---

[38]«Մայիսի 28 (Մասնակցութեամբ՝ Ա. Ահարոնեանի, Ա. Իսահակեանի, Ա. Խատիսեանի, Ռուբէնի, Մ. Վարանդեանի, Ս. Վրացեանի ևն)», Փարիզ, 1926, էջ 29:

ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԵՊՀ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներից մեկի՝ Արամ Մանուկյանի վերաբերյալ վավերագրերը, հուշերը և նրա գործունեության լուսաբանմանը նվիրված ուսումնասիրությունները որքան համեմատաբար առատ ու բազմազան են, երբ վերաբերվում են նրա գործունեության նախորդ շրջանի դեպքերին, նույնքան ժլատ ու սակավ են, երբ խոսքը գնում է Հայաստանի անկախության հռչակումից հետո ընկած ժամանակահատվածին:

Առաջին հայացքից այն տպավորությունն է ստեղծվում, որ Արամի գործունեության վերջին շրջանն արտաքուստ չունի այն գրավչությունն ու հերոսականությունը, որը բնորոշ է նրա գործունեության նախորդ փուլերին: Հրապարակից առերևույթ բացակայում է անմիջական հակառակորդը, որի դեմ Արամը սովոր էր պայքարել իրեն բնորոշ վճռականությամբ, անսպառ եռանդով և աննկուն կամքով: Մյուս կողմից, գոնե ձևի առումով, կարծեք նկատվում է նրա ձեռքում կենտրոնացած իշխանության լծակների աստիճանական կրճատում: Իրականում թե՛ մեկը, թե՛ մյուսը, որքան էլ ճշմարտանման, այնուհանդերձ, միանշանակ չեն: Որոշ պարզաբանումներ տանք նշված հարցադրումների վերաբերյալ:

Իշխանության լծակների առումով Արամի գործունեությունը Հայաստանի առաջին հանրապետության շրջանում ժամանակային տեսանկյունից միանշանակ բաժանվում է երեք փուլերի.

1) Հանրապետության հռչակումից հետո մինչև առնվազն 1918 թ. հուլիսի 24-ը, երբ հրապարակվեց Հայոց ազգային խորհրդի հայտարարությունը ՀՀ կառավարության կազմի մասին[1]:

2) 1918 թ. հուլիսի 26-ից, երբ Արամը ստանձնեց ներքին գործերի նախարարի պաշտոնը, մինչև նոյեմբերի 6-ը՝ Հ. Քաջազնունու կողմից երկրորդ՝ կոալիցիոն կառավարության ստեղծումը[2]:

3) 1918 թ. նոյեմբերի 6-ից մինչև իր մահն ընկած ժամանակահատվածը՝ թեև կյանքի վերջին ամսում նա զամված էր մահճին, գրեթե կտրված էր պետական գործերից, և 1919 թ. հունվարի 3-ից ներքին գործերի նախարարի պարտականությունները դրված էին Ալ. Խատիսյանի վրա:

Առաջին շրջանում, ղեկավարելով իր կազմով ուժեղացված Երևանի վարիչների մարմինը և զբաղեցնելով վերջինիս նախագահի ու ռազմական վարիչի պաշտոնները, Արամ Մանուկյանը, փաստորեն, իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի գործադիր իշխանությունը: Դրանով հանդերձ, իշխանությունը նրա համար ինքնանպատակ չէր: Այդ օրերի Արամին գնահատելու համար անդրադառնանք մի դեպքի: Զինվորականների շրջանում քիչ չէին նրանք, ովքեր, բարձր գնահատելով Արամի արժանիքները, այնուհանդերձ, գտնում էին, որ զինվորական վարիչի պաշտոն պետք է վստահվի զինվորական մասնագետի: Արամը, որն ի սկզբանե կանխատեսել էր հնարավոր դժգոհությունը և ինքն էլ դժկամությամբ էր ստանձնել այդ պաշտոնը, հրաժարվում է դրա-

---

[1] Տես «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Երևան, 2000, էջ 53:

[2] Տես նույն տեղում, էջ 69-70:

նից: Որոշվում է ռազմական վարիչի պաշտոնը հանձնել գեներալ Մ. Սիլիկյանին, բայց վերջինս կտրուկ մերժում է՝ տալով հետևյալ բացատրությունը. «... Դժգոհները չեն ճանաչում Արամին: ... ներկայումս նա *միակ* կարող մարդն է այդ պաշտոնի համար: ... մեկ է՝ ես ինքս առանց Արամի հետ խորհրդակցելու ոչ մի կարևոր քայլ չեմ անում, իսկ վարիչի պաշտոնը յանձն առնելու պարագային, գրասենեակս տեղափոխելու եմ նրա մոտ: Ո՛չ մի զինուորական վերարկու չի տայ այն, ինչ որ ունի Արամը: Նրանից յարմար վարիչ մեզ համար չէք գտնի ...»[3]:

Բազմաբնույթ էին Վարիչների մարմնի գործառույթները: Այն ձեռնամուխ եղավ ռազմական, վարչական, սոցիալ-տնտեսական և այլ հրատապ խնդիրների լուծմանը: Քայլեր էին ձեռնարկվում հնարավոր նոր կռիվների համար ժողովրդին ռազմական տեսակետից կազմակերպելու, սահմաններում կայուն վիճակ ստեղծելու, վարչական ապարատի, միլիցիայի և պետական այլ մարմինների ամրապնդման, օրինախախտումների առաջն առնելու, կարգ ու կանոնի հաստատման և, հատկապես, պարենային ճգնաժամը մեղմելու ուղղությամբ: Ուշագրավ է, որ հենց այս շրջանում՝ 1918 թ. հուլիսի 9-ին, սահմանվեց հացի պետական մենաշնորհ[4]: Փաստորեն, Արամի գլխավորությամբ գործող Վարիչների մարմինը, մինչև Հ. Քաջազնունու կառավարության գործի անցնելը, կարողացավ ապահովել երկրի տարբեր ոլորտների կենսագործունեությունը և համեմատական կայունությունը՝ որոշ չափով դյուրացնելով վերջինիս գործը: Արձանագրենք, որ, չնայած վիճա-

---

[3] Աստուածատրեան Ա. Արամը, «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», Երևան, 1991, էջ 125:

[4] Տես Ասրյան Ա., Արամ Մանուկյան, կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Երևան, 2008, էջ 217:

կի ծայրահեղ ծանրությանը, Հ. Քաջազնունու կառավարությունն իր գործն ամենևին էլ գրոյական վիճակից չսկսեց:

Քաջազնունու գլխավորած կառավարության մեջ զբաղեցնելով ներքին գործերի նախարարի պաշտոնը, Արամն, ըստ էության, երկրի ամենաազդեցիկ դեմքն էր: Նրա իրավասություններն իրականում շատ ավելի էին, քան սովորաբար ունենում էր ներքին գործերի նախարարը: Գործող կառավարության սահմանափակ կազմի պայմաններում, բացի ավանդականից, ներքին գործերի նախարարության իրավասության ներքո էին նաև հաղորդակցության, պարենավորման, խնամատարության, գաղթականության, լուսավորության, տեղական իշխանության մարմինների ղեկավարման և այլ, ամենևին էլ ոչ դյուրին, ոլորտները: Երկրում կարգ ու կանոնի հաստատման, բնակչության կյանքի ու գույքի ապահովության, անարգել հաղորդակցության և փոստ-հեռագրական նորմալ կապի հաստատման, գաղթականների ու որբերի խնդիրների լուծման այն հանձնառությունները, որոնք ստանձնել էր Հ. Քաջազնունու կառավարությունը ներքին քաղաքականության ասպարեզում[5], ինչպես նաև օրեցօր ուժգնացող սովի և համաճարակի դեմ հնարավորինս արդյունավետ պայքարի կազմակերպման խնդիրներն անմիջականորեն առնչվում էին ներքին գործերի նախարարության հետ:

Նման գերբարդ խնդիրների լուծումը, որոնք կապված էին ոչ ստանդարտ, կտրուկ, հաճախ նաև ցավագին քայլերի հետ, ի զորու էր իրականացնել միայն այն գործիչը, որն ուներ մեծ փորձ ու հեղինակություն, օժտված էր վճռականությամբ, անդրդվելի բնավորությամբ և անցյալի ծառայությունների շնորհիվ վայելում

[5] Տես նույն տեղում, էջ 58:

էր զանգվածների անվերապահ վստահությունը: Առանց չափազանցության, միակ գործիչը, որը կարող էր իր ուսերին տանել այդ ծանր բեռը, Արամ Մանուկյանն էր: Չենք կարող չհամաձայնվել Ս. Վրացյանի այն հարցադրման հետ, որ Արամը «միակ մարդն էր, որ այդ խառնակ օրերին ընդունակ էր կարգ ու անդորրութիւն պահել Երկրում եւ պետական շինարարութիւն սկսել»[6]: Թերևս իրավացի էր Ռուբենը, երբ գրում էր, թե «1918ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմուած, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը, թէեւ նա ներքին գործոց նախարար էր միայն»[7]:

Ուշագրավ է, որ Հ. Քաջազնունու կառավարության մեջ Արամ Մանուկյանն իր կրթական ցենզով ամենից ցածրն էր: Նա միակն էր, որ չուներ համալսարանական կամ զինվորական բարձրագույն կրթություն և ավարտել էր միայն Երևանի թեմական դպրոցը: Դրանով հանդերձ, ինչպես խոստովանել է նրա երբեմնի քննադատներից մեկը՝ Հ. Քաջազնունու առաջին կառավարության մեջ արդարադատության նախարարի պաշտոնը զբաղեցնող Գրիգոր Տեր-Պետրոսյանը, Արամն իր բնական խելքով բոլորից բարձր էր և կառավարության նիստերում «հաճախ իշխում էին նրա մտքերը»[8]: Նպատակ չունենք վիրավորել առաջին հանրապետության բարձրաստիճան այրերից որևէ մեկի անձնական արժանապատվությունը, բայց այս առումով, կարծում ենք, ամենևին էլ հիմնազուրկ չէր Հայաստանի Խորհրդի սոցիալ-դեմոկրատ անդամ, հետագայում կոմունիստ Հայկ Ազատյանի այն հայտարա-

---

[6] «Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950», Պոսթըն, 1950, էջ 467:
[7] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Երևան, 1990, էջ 312:
[8] Տես Աստուածատրեան Ա., նշվ. աշխ., էջ 124:

ությունը, թե «Քաջազնունին մի խրտվիլակ եւ մումիա է, իսկ միւս նախարարները՝ արբանեակներ Արամի շուրջը ...»[9]:

Ամփոփելով վերն ասվածը, նշենք, որ այդ հանգամանքներն ամենևին էլ երկրորդական դեր չեն խաղացել քաղաքական որոշակի ուժերի շրջանում Արամ Մանուկյանի նկատմամբ խիստ վերապահ վերաբերմունքի առկայության գործում: Գաղտնիք չէ, որ հատկապես Հայ ժողովրդական կուսակցությունը Հ. Քաջազնունու կողմից առաջին և կոալիցիոն կառավարությունների ձևավորման շրջանում կտրուկ հանդես է եկել ներքին գործերի նախարարի պաշտոնում Արամ Մանուկյանի թեկնածության դեմ: Բայց երկու դեպքում էլ հաղթել է այն մոտեցումը, որ Արամն այդ պաշտոնին հարմար միակ կարող թեկնածուն է:

Բազմազան ու բազմաբնույթ են Արամի քայլերը ներքին գործերի նախարարի պաշտոնում: Դրանցից առանձնացնենք մի քանիսը, որոնք առավել հստակ պատկերացում են տալիս նրա գործունեության անչափ լայն շրջանակների մասին:

Չնայած երկրում տիրող իրավիճակի ծանրությանը՝ Արամ Մանուկյանը շատ-շատերից ավելի լավ էր հասկանում մեր ժողովրդի համար Հայաստանի անկախության հռչակման մեծ խորհուրդը: Զանգվածների շրջանում նորահռչակ պետության հեղինակության ամրապնդումը դառնում է օրվա խնդիրներից մեկը: Այդ ուղղությամբ Արամի ձեռնարկված քայլերից մեկը Հայաստանի անկախության խորհրդանիշերը հանրության սեփականությունը դարձնելուն միտված ջանքերն էին: Ներքին գործերի նախարարի 1918 թ. սեպտեմբերի 13-ի հրահանգով պետական-կառավարական հիմնարկները պարտավոր էին ունենալ և կրել հանրապե-

[9] *Ռուբէն, նշվ. աշխ.. էջ 313:*

տության եռագույն դրոշը[10]: Արամը նախանձախնդիր էր նաև երկրում կատարվող գրագրությունները հայացնելու գործում: Մասնավորապես՝ նրա նախաձեռնությամբ 1918 թ. սեպտեմբերին կայացվում են որոշումներ հանրապետության տարածքում հեռագրերը ռուսերենի հետ նաև հայերեն լեզվով հաղորդելու մասին:

Ներքին գործերի նախարար Արամի առաջնահերթ խնդիրներից մեկը, անշուշտ, երկրում անձի ու գույքի ապահովությունը, «մաուզերիզմի» հաղթահարումը, կարգ ու կանոնի և ամուր իշխանության հաստատումն էր: Այդ խնդիրների լուծման կարևոր միջոցներից մեկը բնակչության մոտ առկա զենք-զինամթերքի առգրավումն էր: Ժողովրդի զինվելը, որքան էլ ճիշտ և անհրաժեշտ էր նրա ինքնապաշտպանությունը կազմակերպելու շրջանում, նույնքան վտանգավոր ու վնասակար էր պետության գոյության պայմաններում, ինչն անխուսափելի էր դարձնում «մաուզերիզմը»: Բայց զինաթափման հարցում վերաբերմունքը միանշանակ չէր և, բնական է, որ երկրում տիրող ամենևին էլ ոչ հանգիստ մթնոլորտում նման նախաձեռնությամբ կարող էր հանդես գալ միայն Արամի նման հեղինակություն վայելող գործիչը: 1918 թ. օգոստոսի 21-ին կառավարությունը հավանություն տվեց նրա ներկայացրած համապատասխան օրինագծին, որի հիման վրա 1918 թ. օգոստոսի 29-ին Հայաստանի Խորհուրդն ընդունեց օրենք «Մասնավոր սեփականություն կազմող զենքերի և զինամթերքների պետականացման մասին»[11]: Այդ գործընթացին զուգընթաց Արամը նաև հետևողական աշխատանք էր տանում օրինազանցությունները վերացնելու, ներքին գործերի նախարարությունը,

---

[10] Տես «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 62:
[11] Տես Ասրյան Ա., նշվ աշխ., էջ 222-223:

պարենավորման ու տեղական իշխանության մարմինները պատահական, իրենց չարդարացրած կադրերից մաքրելու և իր կողմից ղեկավարվող համակարգում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ: Իհարկե, պետք չէ գերագնահատել վերը նշված միջոցառումների իրական արդյունքները և հնարավոր էլ չէր կարճ ժամանակում հիմնովին լուծել այդ բարդ ու տարողունակ խնդիրները, բայց նաև չի կարելի չգնահատել այդ ասպարեզում Արամի թափած ջանքերը:

Պաշտոնի բերումով Արամը նաև իր ներդրումն ունեցավ երկրում պարենային ճգնաժամն ինչ որ չափով մեղմելու և սովի դեմ պայքարելու գործում: Ավելի վաղ սահմանված հացի պետական մենաշնորհին օգոստոսից գումարվեց նաև բամբակի, կարտոֆիլի, խմիչքների և այլ ապրանքների նկատմամբ պետական մենաշնորհը: Մյուս կողմից՝ ՆԳՆ-ին կից պարենավորման բաժանմունքը քայլեր էր ձեռնարկում հանրապետության տարածք մթերքների ներկրում կազմակերպելու ուղղությամբ: 1918 թ. օգոստոսի սկզբին Արամի կարգադրությամբ ապրանքների ներմուծումը հայտարարվեց ազատ, մինչդեռ անհրաժեշտ մթերքների արտահանումն արգելվեց: Ձեռնարկված ջանքերի արդյունքում կազմակերպվեց հացի բաշխումը ազգաբնակչությանը:

Ակնհայտ է Արամի դերակատարությունը հարյուր հազարավոր գաղթականների և տասնյակ հազարավոր որբերի խնդիրները հոգալու գործում: Օգոստոսի 22-ին կառավարությունը՝ քննարկելով նրա առաջարկը Երևանի քաղաքային ինքնավարությանը կից գաղթականական հանձնաժողով ստեղծելու և վերջինիս միջոցներ տրամադրելու մասին, որոշեց միջոցներ տրամադրել ինքնավարությանը: Հոկտեմբերի 1-ին Հայաստանի Խորհուրդը որբերի խնամքի համար Արամին տրամադրեց 750.000 ռուբլի,

իսկ մի քանի օր անց որբերի և գաղթականների օգնության համար առանձնացվեց ևս 1 մլն 736 հազար ռուբլի: Արամ Մանուկյանի նախանձախնդրությունը հատկապես մեծ էր որբերի ճակատագրի հարցում: Միջոցների պակասի պայմաններում պետությունն ի զորու էր իր վրա վերցնելու 50 հազարի հասնող որբերից միայն 4000-ի խնամատարությունը՝ ապագայում նրանց թիվը 10000-ի հասցնելու նկատառումով: Քաջ գիտակցելով, որ նման պայմաններում միայն համաժողովրդական մոտեցման դեպքում հնարավոր կլինի որբերին փրկել մահվան ճիրաններից, Արամը հոկտեմբերի 8-ին դիմեց ժողովրդին: «Թառամում է խոշորագույն մասը մեր մատաղ սերնդի, մեռնում է ապագան մեր հայրենիքի, որի համար ցեղի լավագույն մարդիկը պայքարեցին, տառապեցին և նահատակուեցին»,- ասվում էր նրա կոչում: Ապավինելով ժողովրդի գիտակցությանն ու առողջ բնազդին, Արամը կոչ էր անում օգնել որբերին՝ հույս հայտնելով, որ համատեղ ջանքերով հնարավոր կլինի փրկել նրանց: 1918 թ. հոկտեմբերի 11-ին ընդունված օրենքի համաձայն՝ պետությունը՝ հանձինս խնամատարության նախարարի, իր վրա էր վերցնում բոլոր գաղթական որբերի խնամքը[12]:

Որբերի հետ կապված խնդիրներում Արամն անգամ պատրաստ էր գնալ ծայրահեղ քայլերի և խախտել գործող օրենքները, եթե դրանք խոչընդոտ էին հանդիսանում հարցի կարգավորմանը: Բերենք ուշագրավ մի փաստ: Դպրոցական համակարգը կանոնավորելու համար այդ ամիսներին քայլեր էին ձեռնարկվում զինվորական, բժշկական և այլ հաստատությունների կողմից զբաղեցված դպրոցական շենքերն ազատելու և դրանք վերաբացելու ուղղությամբ: Այդ հարցում նախանձախնդիրներից մեկն էլ Արամ Մա-

---

[12] Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 233-235:

նուկյանն էր, որի տնօրինության տակ էր գտնվում նաև լուսավորության համակարգը: Բայց նույն օրերին Ռ. Տեր-Մինասյանի նախաձեռնությամբ Երևանի դպրոցներից մեկի շենքը, առանց օրինական թույլտվության, վերածվում է որբանոցի: Լսելով այդ կապակցությամբ Երևանի փոխքաղաքագլուխ Ա. Աստվածատրյանի բողոքները և Ռուբենի այն արդարացումը, թե «Ողջ եւ ապահով երեխաների ուսման հարցը աւելի կարևոր չէ, քան փողոցներում թափուածների ու քաղցի ճիրաններում գալարուողների կեանքը», Արամը հավանություն է տալիս Ռուբենի վարմունքին՝ ասելով, թե «Կան դէպքեր, երբ օրէնքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ ու չարագործներ կը դառնանք, մանաւանդ ... երբ դէպքերը տեղի են ունենում գահավէժ արագութեամբ եւ ստեղծում դրութիւններ, որոնք օրէնքը չէր կարող նախատեսել»[13]:

Ամփոփելով վերն ասվածը, հավելենք, որ, որպես պետական գործիչ, Արամը զերծ էր պայմանականություններից: Լինելով օրենքի կատարման երաշխավորը և զբաղեցրած պաշտոնի բերումով պարտավոր լինելով գործադրել օրենքի տառը, նա ինքն առաջինն էր հանդես գալիս քարացած և դրանով իսկ ազգային ու պետական շահի տեսանկյունից վնասակար դարձած օրենքների ու կանոնների դեմ: Նման բանի ընդունակ կարող էր լինել միայն, իրոք, մեծ պետական գործիչը:

Հանրապետության շրջանում Արամ Մանուկյանի գործունեության բնութագրումը խիստ թերի կլիներ, եթե չանդրադառնանք Հայաստանի հայացման գործին նրա ունեցած որոշակի մասնակցությանը: Ի պաշտոնե Արամը երկրի ներքին կայունության պատասխանատուն էր, ինչպես նաև այնտեղ ապրող ազգութ-

[13] Աստուածատրեան Ա., նշվ. աշխ., էջ 139-141:

յունների անվտանգության երաշխավորը: Արտաքուստ նա նաև հայ-թուրքական «ջերմ» հարաբերությունների կողմնակիցն է, ինչի մասին վկայում է Երևանում թուրքական բանակի հրամանատար Խալիլ փաշային նրա ցույց տված ընդունելությունը[14]: Բայց բազմահազար հայ գաղթականությանը սպասող անորոշ ճակատագիրը և այն լուրջ սպառնալիքը, որ կախված էր նորաստեղծ հանրապետության գլխին՝ ի դեմս նրա սրտում բուն դրած թուրք-թաթարական ընբոստ ու դավադիր շրջանների, չէին կարող անտարբեր թողնել նրան: Պետական մակարդակով ի զորու չլինելով լուծել այդ խնդիրները և դրա իրավունքը պարզապես չունենալով, Արամը ոչ միայն չէր խանգարում, այլև օժանդակում էր այդ ուղղությամբ Ռուբեն Տեր-Մինասյանի և նրա զինակիցների ծավալած գործունեությանը: 1918 թ. աշնանը խմբապետ Մուշեղ Ավետիսյանի և այլոց ղեկավարությամբ գլխավորապես սասունցիներից կազմված ուժերը թշնամուց մաքրեցին Ճղնի ձորը, Միլիտերեն, Բաշ-Գառնին ու այլ տարածքներ՝ դրանք բնակեցնելով բազմահազար գաղթականներով: Ինչպես վկայում է Մուշեղ Ավետիսյանը, այդ գործողությունների համար անհրաժեշտ զենքն ու զինամթերքը հնարավոր եղավ Երևանից դուրս բերել միայն Արամ Մանուկյանի նախապես տված արտոնագրով[15]:

Հ. Քաջազնունու գլխավորած Կոալիցիոն կառավարության շրջանում Արամի լիազորությունների շրջանակներն որոշակիորեն նեղանում են, քանի որ նորաստեղծ լուսավորության, խնամատարության և պարենավորման նախարարությունները ստանձնում են այն գործառույթները, որոնք նախկինում տնօրինում էր ներքին

---

[14] Մանրամասն տե՛ս Շահխաթունի Ա., Խալիլ փաշայի հանդիպումները Արամի հետ, «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», էջ 495-507:
[15] Տե՛ս Ռուբէն, նշվ. աշխ., էջ 111-113:

գործերի նախարարը: Դրանով հանդերձ, Արամը շարունակում էր մնալ հանրապետության առանցքային դեմքը:

Պատերազմում Թուրքիայի կրած պարտությունը նոր հեռանկարներ էր բացում սովից, խոլերայից ու բծավոր տիֆից գալարվող նորաստեղծ հանրապետության համար: Եվ նրա հիմնադիրներից մեկը լիովին իրավունք ուներ հույսով նայել ապագային՝ ակնկալելով իր ժողովրդի վերածնունդը: Բայց բծավոր տիֆը անժամանակ կտրեց նրա կյանքի թելը: Արամի մահը, իրոք, ծանր կորուստ էր հանրապետության և ժողովրդի համար:

Որպես ամփոփում, հավելենք, որ Արամ Մանուկյան պետական գործիչն ու մարդը, անշուշտ, ֆետիշ չէր: Միշտ չէ, որ բոլորի կողմից միանշանակ ընդունելի էին նրա կայացրած որոշումները: Հաճախ դրանք կտրուկ ու ցավագին էին, երբեմն էլ հակառակ գործող օրենքներին և առաջ էին բերում բողոքներ ու դժգոհություններ ինչպես բնակչության տարբեր խավերի մեջ, այնպես էլ քաղաքական տարբեր համոզմունքների տեր գործիչների շրջանում: Բայց ակնհայտ էր մի բան: Նրա վճիռները թելադրված էին ոչ թե անձնական, այլ՝ ազգային ու պետական շահով: Այն մարդը, որն ուներ անսահմանափակ իշխանություն, որի տնօրինության տակ էին վիթխարի միջոցներ, իր երկրի ու ժողովրդի համար բախտորոշ և ծանրագույն օրերին ապրեց պարզ ու համեստ կենցաղով՝ մինչև վերջ մնալով իր ժողովրդի մեջ, նրա կողքին՝ կիսելով նրան բաժին հասած փորձություններն ու աղետները:

Հիրավի մեծ դաս երրորդ հանրապետության անցյալ, նորօրյա և ապագա պետական գործիչներին ...

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ
ՀՊՄՀ

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՌՈՒԲԵՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարը, Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունը, ի թիվս այլոց, անխզելիորեն կապված է երկու պայծառ անհատականությունների՝ Արամ Մանուկյանի և Ռուբեն Տեր-Մինասյանի անունների հետ: Արևելյան Հայաստանի երկու չքնաղ երկրամասերում՝ Արցախում և Զավախքում ծնված այս գործիչները, իրենց ընդամենը 20-ամյակը դեռ նոր բոլորած, ինքնուսկամ նվիրվեցին Արևմտահայաստանի ազատագրության սուրբ գործին:

Ռուբենն Արամի հետ ծանոթացել է Կարսում, «որուն յեղափոխական հնոցին մէջ նորելուկ դաշնակցականները կարող էին եփուիլ եւ դուրս գալ թրծուած եւ յղկուած...»[1]: Նախքան Ռուբենի Կարս մեկնելը այստեղ էր եկել Արամ Մանուկյանը, որն անհրաժեշտ փորձառություն ձեռք բերելուց հետո պետք է անցներ Արևմտյան Հայաստան: «Կարսի հնոցում» Արամն իրեն այնքան լավ էր դրսևորել, որ ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն վերջինիս պահել էր տեղում՝ երկիր անցնելու ցանկություն ունեցող դաշնակցականներին համապատասխան ձևով կրթելու համար: Արամը Կարսում զբաղված էր ոչ միայն գործիչներ պատրաստելով, այլև՝ կազմակերպչական-քարոզչական աշխատանքներով:

Ծանոթության առաջին իսկ օրվանից Ռուբենն Արամի մեջ տեսնում է խստապահանջ գործի մարդուն և նվիրված, կատա-

---

[1] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Թեհրան, 1982, էջ 40:

կասեր ընկերոջը: Ռուբենի տպավորությամբ՝ Արամն «այդտեղ (իմա՝ «Կարսի հնոցում» - Խ. Ս.) հաւաքուածներուն մէջ ամենէն սիրելին, ամենէն յարգուածն էր»[2]:

Իր հուշերում նկարագրելով «Կարսի հնոցի» գործիչներին՝ Ռուբենը Արամին բնորոշում է նաեւ որպես ուղղամիտ մարդու, «որուն համար կըսէին, թէ կոշտ ու կոպիտ է, բայց «քեասա» բան կըսէ, ջանին՝ ջան կըսէ, չոռին՝ չոռ կըսէ»[3]:

Արամ Մանուկյանը Կարսում այնպիսի հեղինակություն ուներ, որ անգամ ցարական պաշտոնյաներն էին ակնածանքով վերաբերվում նրան: Բավական է նշել այն փաստը, որ այստեղ բնակչության թվին հավասար զորք էր տեղակայված: Եվ նույնիսկ այս պայմաններում ռուս պաշտոնյաները խիստ հարգալից էին Արամի նկատմամբ: Այս կապակցությամբ Ռուբենը գրում է. «Երբ Սերգեյը4 կանցներ փողոցներով, ոստիկան եւ նոյնիսկ ոստիկա-նապետ բարեւ կուտային, առանց անոր հետ ծանօթ լինելու: Կարծես, թէ նահանգապետի կողքին ան էր անպաշտօն, բուն նահանգապետը»[5]:

Հատկանշական է այն հանգամանքը, որ Արամը Կարսում համապատասխան փորձառություն անցնելուց հետո մտադիր էր գնալ Տարոն, իսկ Ռուբենը՝ Վան: Սակայն դեպքերն այնպես են դասավորվում, որ Արամը՝ որպես գործիչ, աշխատում է Վանում, իսկ, Արամի բնորոշմամբ, «թունդ վանեան» Ռուբենը գնում է Մուշ[6]:

---

[2] Նույն տեղում, էջ 41:
[3] Նույն տեղում, էջ 87:
[4] Արամ Մանուկյանի իսկական անուն ազգանունը Սերգեյ (Սարգիս) Հովհան-նիսյան է:
[5] Ռուբէն, նշվ. աշխ., էջ 89:
[6] «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», Երևան, 1991, էջ 154:

Ռուբենի՝ Կարսից մեկնելուց առաջ Արամը հյուրնկալվում է Ռուբենի տանը[7], որտեղ երկուսով հետաքրքիր քննարկումներ են անցկացնում Հայաստանի ծայրագավառների և կենտրոնական նահանգների նշանակության մասին: Եթե Ռուբենը գտնում էր, որ Հայաստանի հզորությունը ծայրագավառների՝ Շուշիի, Սպերի, Խարբերդի մեջ է, ապա, Արամի պնդմամբ, առանց Տարոնի և Բարձր Հայքի հզորության ծայրագավառները շատ թույլ կլինեն: Այստեղ հետաքրքիր է նաև այն, որ Ռուբենը Արամի, ինչպես նաև Նիկոլ Դումանի և մի շարք այլ ղարաբաղցիների արիությունը պայմանավորում է Շուշիի հաղորդած ոգով:

Հետաքրքիր է նաև Ռուբենի ակնածանքով լի վերաբերմունքը Արամի հանդեպ: Կարսում նախապատրաստական շրջան անցնելուց հետո Արամը Ռուբենին ուղարկում է Երևան՝ առանց հայտնելու, թե ինչ նպատակով է դա անում, իսկ Ռուբենը, թեև ուզում էր մի քանի օր էլ Կարսում մնալ, լռում է և ենթարկվում Արամին: Այդ ժամանակ նրանց հարաբերություններն այնպիսին էին, որ Ռուբենն առանց քաշվելու կարող էր հարցնել Արամին իր Երևան գնալու նպատակի մասին, բայց այդ բանը նա չի անում: Ռուբենի նման պահվածքը պայմանավորված էր ոչ միայն Հ.Յ.Դաշնակցության մեջ տիրող ղեկավար ընկերոջ կողմից շարքային ընկերոջն առանց բացատրության կարգադրություն անելու ավանդությամբ, այլև Արամի հանդեպ ունեցած մեծագույն հարգանքով:

Կարսից հետո Ռուբենը և Արամը բախտ են ունենում միասին գործելու նաև Վան-Վասպուրականում: Հուշերում Ռուբենը նկատում է, որ Վասպուրականում ազգային-ազատագրական

---

[7] Այդ ժամանակ Ռուբեն Տեր-Սինասյանի ընտանիքը Ախալքալաքից տեղափոխվել էր Կարս:

շարժման ղեկավարների մեջ մեծ թիվ են կազմել ղարաբաղցիները՝ հնչակյան գործիչ Մարտիկը (Մարտիրոս Սարուխանյան), դաշնակցականներ Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), Իշխանը (Նիկոլ Պողոսյան), որոնց շարքը լրացնում է նաև Արամը: Ռուբենը գրում է, որ 1905 թ. Վանի ՀՅԴ կազմակերպության (Շամ) կենտրոնական դեմք Արամն էր[8]: Մինչև Արամի և Իշխանի Վասպուրական գնալը տեղի ժողովուրդն այնքան սեր չուներ զենքի նկատմամբ, ինչքան սասունցիները կամ հարևան քրդերը: Մինչդեռ վերջինները ոչ միայն զարկ են տալիս համատարած զինման գործին, այլև ժողովրդին վարժեցնում են զենքի գործածության և կռվի փորձառության մեջ: Ի դեպ, Արամը Վանում մեծ աշխատանք է տարել նաև արմենականներին Հ.Յ.Դաշնակցության մեջ ընդգրկելու և դրանով ազգային-ազատագրական պայքարն ավելի միասնական դարձնելու գործում: Այս կապակցությամբ Ռուբենը գրում է. «Արմենական ուժերը կուսակցութեան մէջ մտնելով, կարելի է ըսել, որ Դաշնակցութեան մէջ, Արամի ժամանակ, կը կատարուի նոր յեղափոխութիւն մը»[9]:

1905-1907 թթ. գործելով Վանում՝ Արամը մեծ ծավալի աշխատանք կատարեց Վանի նահանգի տարածքում ՀՅԴ կառույցի տարածման և հզորացման ուղղությամբ: Վանում ևս Արամը մեծ հեղինակություն էր վայելում, որի կապակցությամբ Ռուբենը գրում է. «Արամը Վանի կուռքն էր, անոր ուժի, կամքի մարմնացումը»[10]: Նրա անմիջական ջանքերով մեծապես բարձրացավ ժողովրդի պաշտպանվածության աստիճանը, որն էլ, ի դեպ,

---

[8] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 2, Թէհրան, 1982, էջ 155:
[9] Նույն տեղում, էջ 169:
[10] Նույն տեղում, էջ 189:

հիմքեր ստեղծեց ավելի կազմակերպված դիմադրելու թշնամուն: Դրա պտուղներն ակնառու դարձան հստակապես 1915 թ., երբ վանեցիները կարողացան կազմակերպված դիմադրություն ցույց տալ թուրքերին և փրկվել անխուսափելի կոտորածից[11]: Վանում գործելու տարիներին Արամ Մանուկյանը հանգել էր այն մտքին, որ արևմտահայության փրկության համար պետք էր վերջ տալ տեղային պայքարին և համընդհանուր ապստամբության նախապատրաստվել: Այս առումով նա, փաստորեն, հանդիսանում էր Հրայր Դժոխքի գաղափարների կրողը: Ավելին, Արամը կարծում էր, որ Օսմանյան Թուրքիայում պետք էր համապետական ապստամբություն իրականացնել և տապալել սուլթանական կառավարությունը:

1907 թ. մայիսին Արամ Մանուկյանը Վանում ձերբակալվում է[12] և բանտից ազատվում միայն մեկ տարի անց՝ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո:

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Ռուբեն Տեր-Մինասյանը Վանում հանդիպում է թուրքական ոստիկանության պաշտոնյա Մեհմեդ էֆենդու հետ: Վերջինս Ռուբենին պատմելով Արամի ձերբակալության մասին, նշում է, որ նա գործել է թուրքական կառավարության դեմ և արժանի էր բանտարկվելուն, սակայն, այնուամենայնիվ, ավելացնում է. «Բայց Արամ բոլորիս համար կը մնայ յարգանքի եւ պատուի առարկայ»[13]: Սա ոչ թե թուրքական պաշտոնյայի կողմից օսմանյան սահմանադրության բերած «մեղրամիսին» բնորոշ հավուր պատշաճի խոսք էր, այլ հայ ազգային-ազատագրական շարժման գործչի

---

[11] Վանի հայության փրկվելուն մեծապես նպաստեց նաև հայ կամավորների և ռուսական բանակի ժամանակին տեղ հասնելը:
[12] Փաիազեան Վ., Իմ յուշերը, հ. Ա, Պոսթըն, 1950, էջ 535:
[13] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 5, Թեհրան, 1982, էջ 269:

հանդեպ ունեցած զգացողության և վերաբերմունքի մասին ակամա խոստովանություն: Ի դեպ, հանդիպման ժամանակ Մեհմեդ էֆենդին Ռուբենին հայտնում է իր մտավախությունը, որ Արամը կարող է հետ պահանջել ոստիկանների կողմից ժամանակին բռնագրավված զենքերը:

Հետաքրքիր զուգադիպությամբ Ռուբենը և Արամը 1909 թ. միասին ՀՅԴ Բյուրոյի անդամ Ռոստոմից հեղափոխական գործերից արձակուրդ են վերցնում: Ռուբենը մեկնում է Եվրոպա՝ ուսումը շարունակելու, իսկ Արամը՝ Օրդու՝ ուսուցչություն անելու[14]:

Արամ Մանուկյանի և Ռուբենի համագործակցությունը շարունակվում է նաև Հայաստանի անկախության ձեռքբերման և պետականության կայացման շրջանում: Հայտնի է, որ սկսած 1917 թվականից Ռուբեն Տեր-Մինասյանը լրջորեն զբաղվել է արևմտահայ գաղթականությանը Արևելյան Հայաստանում տեղավորելու և Հայաստանի Հանրապետության տարածքում թուրք-թաթարական խռովություններն ու անջատական գործողությունները ճնշելու գործով:

Քառսային այս ժամանակաշրջանում Ռուբեն Տեր-Մինասյանին շատ քչերն են աջակցել: Ավելին, նույնիսկ տարբեր պատճառաբանություններով փորձել են խոչընդոտել: Գաղթականների վերաբնակեցման հարցում Ռուբենի ամենաջերմ աջակիցն ու գաղափարակիցը եղել է Արամ Մանուկյանը (նաև՝ Նիկոլ Ադբալյանը)[15]: Արամի քաջալերմամբ Ռուբենի իրականացրած գործողությունների արդյունքում ոչ միայն հնարավոր եղավ տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականների ապահովել կացարան-

---

[14] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, Թեհրան, 1982, էջ 25:

[15] Ստեփանյան Խ., Ռուբեն Տեր-Մինասյան (Կյանքը և գործը), Երևան, 2008, էջ 80:

ներով, այլև վերացվեց Երևանի գլխին կախված թուրք-թաթարական շրջափակման վտանգը[16]:

Հուշերում Ռուբենը կարևորում է Հայաստանի Հանրապետության կայացման գործում Արամի կատարած անգնահատելի դերը: Անդրկովկասում իշխանությունը ազգային խորհուրդներին տալուց հետո Արամը հսկայական աշխատանք կատարեց Երևանի նահանգում Երևանի Հայոց ազգային խորհրդի աշխատանքը կարգավորելու ուղղությամբ: «Այս ներկայացուցիչների (Հայոց ազգային խորհուրդների - Խ. Ս.) մէջ կեդրոնական անձը եղաւ Արամը, որ Երեւանի շրջանի լիազօրն էր. նա Երեւանը դարձրեց այն կորիզը, որի շուրջը պիտի հաւաքուէին մնացած գաւառների Ազգային Խորհուրդները»,- գրում է Ռուբենը[17]: Անուրանալի է Արամ Մանուկյանի դերը 1918 թ. մայիսյան հերոսամարտերում տարած հաղթանակներում: Արամը կարողացավ Երևանում կազմակերպել ժողովրդին, հիմքեր ստեղծել պետականության տարրերի արմատավորման համար: «Հայաստանի Հանրապետութեան ստեղծումից առաջ Արամը Երեւանի նահանգի դիկտատորն էր ընտրուած եւ յանձին նրան՝ փաստական հայկական իշխանութիւն էր ստեղծուած դեռ 1917-ից: 1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Քաջազնունու դահլիճն էր կազմուած, փաստօրեն կառավարութիւնը մնում էր Արամը, թէեւ նա ներքին գործոց նախարարն էր միայն: Նրա ձեռքին էին այն ժամանակները եւ լուսաւորութեան, եւ խնամատարութեան, եւ պարենաւոր-

---

[16] Երևանը, շրջապատված լինելով թուրք-թաթարներով բնակեցված շրջաններով, երբեմն կտրվում էր հարակից հայկական բնակավայրերից: Միաժամանակ հայկական հակահետախուզությունը ստույգ տվյալներ ուներ այդ թաթարաբնակ շրջաններում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող հակահայ գործունեության վերաբերյալ:

[17] Ռուբէն, նշվ. աշխ., հ. 7, էջ 135:

ման. եւ հաղորդակցութեան բաժինները, որոնք հետագային բաժանուեցին առանձին նախարարութիւնների»,- գրում է Ռուբենը[18]:

Ռուբենը հիշատակում է Արամին առնչվող մի կարևոր հանգամանք ևս: Արամն այն փոքրաթիվ գործիչներից էր, ովքեր 1917-1918 թթ. ձգտում էին համագործակցել ռուս բոլշևիկների հետ: Հեռատես քաղաքական գործիչը համոզված էր, որ բոլշևիկների և հայության շահերի համադրումով միայն կարելի կլինի խուսափել 1915 թ. կրկնությունից: Պատահական չէ, որ երբ ՀՅԴ ներկայացուցիչներ Ռուբեն Տեր-Մինասյանը և Հակոբ Զավրյանը Ստեփան Շահումյանի հետ Թիֆլիսում քննարկում էին երկու կուսակցությունների համագործակցության նախագիծը, իրենց ձեռքի տակ ունեին Արամի գրավոր կարծիքը[19]: Ավելին, Թիֆլիսի բանակցություններից հետո Արամը Երևանում գտնվող բոլշևիկ Պ. Մակինցյանին հատուկ հանձնարարությամբ ուղարկում է Մոսկվա:

Ռուբենի հուշերից կարելի է եզրակացնել, որ, հաշվի առնելով բոլշևիկների հետ համագործակցելու Արամի տրամադրվածությունը, ինչպես նաև Հայաստանի արևմտյան սահմանների հարցում նրա առավել չափավոր մոտեցումները, Հայաստանի Հանրապետության այսօրվա սահմաններն ավելի ընդարձակ կլինեին, իսկ պետության անվտանգությունը՝ առավել քիչ խոցելի, եթե Արամն անժամանակ չհեռանար կյանքից:

Արամ Մանուկյանը, անշուշտ, դեռ շատ անելիքներ ուներ Հայաստանի Հանրապետության հզորացման գործում, և Ռուբենը դեռ շատ բաներ պետք է գրեր նրա մասին: Սակայն 1919 թ. հունվարին այդ ժամանակ Հայաստանում մեծ ծավալների հասած բծավոր տիֆը գերեզման տարավ մեծանուն հայորդուն, հայ ժողովրդի և հայոց պետականության անկրկնելի նվիրյալին:

---

[18] Նույն տեղում, էջ 312:
[19] Նույն տեղում, էջ 142:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մինասյան էդիկ
Արամ Մանուկյանի պետական գործունեությունը.....5
2. Սարգսյան Սուրեն
Արամ Մանուկյանը Վանի 1915 թ. հերոսական
ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար.....18
3. Սահակյան Ռուբեն
Արամ Մանուկյանը Վանի նահանգապետ.....25
4. Խուդինյան Գևորգ
Հայաստանի Հանրապետության հիմնադիր հայրերը.
Արամ Մանուկյան և Ռոստոմ.....52
5. Ասրյան Արմեն
Արամ Մանուկյանը Հայաստանի առաջին
Հանրապետության հիմնադիր.....67
6. Սուքիասյան Համո
Հայաստանի առաջին Հանրապետության
անդրանիկ կառավարության ձևավորումը.....83
7. Գրիգորյան Հովիկ
Արամ Մանուկյանի գործունեությունը Հայաստանի
առաջին Հանրապետության տարիներին.....99
8. Ստեփանյան Խաչատուր
Արամ Մանուկյանը Ռուբենի հուշերում.....111

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ.
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ
(Հոդվածների ժողովածու)

АРАМ МАНУКЯН
НАЦИОНАЛЬНЫЙ И ГОСУДАРСТВЕННЫЙ ДЕЯТЕЛЬ

Տպաքանակը՝ 200 օրինակ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ՝ ԳԱՅԱՆԵ ԲՈԲՈԽՅԱՆ
ՏՊԱԳՐԻՉ՝ ԼԵՈՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24գ

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.

A II
95503